ՕՐԻՆԱԾԻՆ

ՅՈՒՆԻՍ - ՅՈՒԼԻՍ

1995

ԾԲ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՅուԼիս - ՅուԼիս

1995

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՒԱԶՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

107-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՐԵՊԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

18596-ԱՀ

Քրիստոսի և Քրիստոսով մենք չենք կարող հասկանալ արարիչ Աստուծո գործունեությունը և այդ գործունեության արդյունքները:

Արդի աստվածաբանության փորձարարական ձևերը ձգտում են բացատրել (մեկնել) Աստվածաշնչի այս կամ այն տողը՝ առանձնացնելով ընդհանուր գրությունից: Դրանից է առաջանում սուր պայքարը աստվածաբանության (ճշգրիտ առումով) և բնական գիտությունների:

Հավատքը արարչագործությամբ անիրական չէ, այն միշտ էական է և ճշմարտացի, այն ամենից բանականն է և ամենից առավելը՝ համեմատությամբ բոլոր տեսակ գիտությունների առաջ քաշած վարկածների:

Արարչագործությունը արդյունքն է երկնային բանականության խոսքերի, կատարված իրողությունը «Իր»-էությունների և «ան»-տեսանելիների:

Աստվածաշունչը եղել և մնում է ճշմարիտ լույսը: Մենք չենք կարող թաքցնել մեր հավատքը արարչագործությունից դուրս, վասնզի արարչագործությունը երկնային Ուժի, նրա նախախնամության, գալիք թագավորության համապարփակ միությունն է:

Արդ, Աստված արարիչն է ամենայն ինչի, և Տերը ամենայնի, որին մենք աղոթում ենք:

Այդ ճշանակում է, որ ազատություն ու սերը, հավատքն ու հույսը անզոր գաղափարներ չեն, այլ իրական և հիմնական ուժերը արարչագործության, որից պարտադրված աղաղակում ենք. «հաւատամք ի մի Աստուած... արարիչ երկնի և երկրի և ի մի Տէր, Յիսուս Քրիստոս...»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ
ՍՋԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՀԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ
ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ
ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Տօն է այսօր Կաթուղիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի, Մայր Տաճարիս Եկեղեցւոյս Հայաստանեայց, հաստատեալ ի վերայ հիման սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարթուղիմէոսի, լուսաձև կերպաւորեալ երկնակամար տեսլեամբն Հօրն մերոյ հաւատոյ՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և հիչակեալ որպէս կրօն ազգիս Հայոց հրամանաւն արքային մերոյ Մեծին Տրդատայ քաջազնի և հաւատացեալի:

Ի մաստալից զուգորդութեամբ՝ ընտրեցինք այս տօնը իբրև առիթ և թուական Մեր Հայրապետական անդրանիկ կոնդակին: Այս օրը Կաթողիկէ Ս. Էջմիածնի հիմնադրման հրաշազան դրուագին վերակենդանացման պահն է ողջ հայութեան գիտակցութեան և կեանքին մէջ:

Ա յս ներշնչողական, խորախորհուրդ տօնակատարութեան բերկրալից առիթով և հայրական ամենաքաղցր սիրով կ'ողջունենք քեզ, ժողովո՛ւրդ հայոց, ի Մայր Հայաստան և ի ծագս աշխարհի: Եւ առաջին իսկ վայրկեանէն կ'ուզենք որ գիտնաս, որ Մեր տկար անձէն չի բխիր ողջոյնի այս խօսքը որ կը փոխանցուի քեզի անդրանիկ կոնդակի այս բառերէն: Ան կու գայ Ս. Գրիգոր Լուսաւորչի ամենայաղթ և անյաղթելի հաւատքէն, որուն խտացեալ և մարմնացեալ անունն է ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ և մականունը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ:

Ք ացէ՛ք ձեր ընկալման հոգեղէն զգայարանքը և պիտի զգաք որ այս խօսքը կու գայ ձեզի սրբաճաճանչ այն վայրէն, ուր մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի շնորհաձիր և հրաշագործ ձեռքը ոսկի ուռնակով բախեց և օրհնեց Հայոց հողը, ուր երկնքի և երկրի սուրբ համբոյրը դրոշմուեցաւ որպէս հիմնախարիսխը սուրբ եկեղեցւոյ գոյատման իբրև սեփական եկեղեցին Հայաստան աշխարհիս, հայրենի պետութեան և հայկազեան ազգիս:

«Խորհուրդ մե՛ծ և աքանչելի...»

որ մշտագնաց և տիրական ներգործութեամբ կնքեց և շնչաւորեց ողջ պատմութիւնը հայոց, անցնող տասնեօթ դարերու ընթացքին, և կը դրոշմէ ու կ'ոգեշնչէ այսօր, ու ապահովաբար պիտի կերպաւորէ ու հոգեզարդէ ապագային գալիք բոլոր դարերը հայ ժողովուրդի յաւերժագնաց կեանքին:

Խ ոնարհական ծնրադրութեամբ փառք կու տանք Ամենախնամ Աստուծոյ, որ Սուրբ Էջմիածինը և անոր խորհուրդն ու հոգեսնունդ և ազգաշէն ներգործութիւնը կենդանի պահեց հայոց եկեղեցւոյ և հայ ժողովուրդի հոգեխառնութեան, բարեպաշտութեան և ազգային գիտակցութեան ու կեանքին մէջ, մեր հայրենի Հայաստան աշխարհէն մինչև համայն աշխարհի չորս ծագերը, ուր հայ մարդիկ ապրեցան ու կ'ապրին:

Ա նցնող տասնեօթ դարերուն, Ս. Էջմիածնի ձայնը հնչեց հարիւր երեսուն Հայրապետներու աղօթքով, խօսքով ու գիրով, այցելութեամբ և հանդիպմամբ: Այսօր այդ ձայնը կը հնչէ Մեր խոնարհ անձին մէջէն, որպէս հարիւր երեսուն մէկերորդը այն աստուածահաճոյ և ազգընտիր Հայրապետներու շղթային օղակներուն, որոնք տիւ և գիշեր իրենց կեանքը վերածեցին իւղ-արցունքի Լուսաւորչի կանթեղին լոյսը անմար և մշտարծարծ ու շողարձակ պահելու համար հայ ժողովուրդի կեանքի ճանապարհներուն որպէս ճրագ ուղեցոյց:

Մ եր խօսքը կ'ուղղենք նախ մեր Ս. Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներուն և անոնց գահակալներուն՝ Մեր սիրեցեալ հոգևոր եղբայրներուն.

— Մ եծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռին, որ եղաւ Մեր հոգևոր սնուցման և կազմաւորման վառ օճախը, որուն Միաբանական Ուխտին սպասաւորը եղանք քառասուն չորս տարիներ, որուն գահակալը ըլլալու պատիւին Աստուած արժանի ըրաւ զՄեզ տասնեւութ տարիներ շարունակ, և որուն հանդէպ կը տածենք հոգեկան կապուածութեան ամենաջերմ զգացումներ:

— Ե րուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատկառելի Աթոռին, անոր գահակալին, քրիստոսակոխ սրբատեղեաց աղօթալից պահպանման ու մեր եկեղեցւոյ հոգևոր ժառանգութեան զարգացման նուիրուած Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, որուն հանդէպ միշտ ունեցած ենք խոր սէր և յարգանք ու բարձր գնահատանք:

—Կ ոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան պատմական Աթոռին, անոր գահակալին, հոգևորական դասուն և Ազգային-Եկեղեցական Ժողովոց, որոնց հանդէպ միշտ ցուցաբերած ենք սիրոյ և համակրանքի ջերմ վերաբերում բարձրօրէն արժէքաւորելով անոնց կապուածութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ կենդանի աւանդութեանց:

Կ ը հաւատանք, որ անցեալին մեր Եկեղեցւոյ ևուիրապետական Աթոռներուն կատարած մեծ դերը առաւել պտղաբերութեամբ պիտի շարունակուի Հայ ժողովուրդի վերածաղկեալ կեանքի ներկայ այս շրջանին, որ այնքան ճակատագրական նշանակութիւն ունի մեր արդի պատմութեան առողջ կերտման և ապագայի զարգացման համար: Հարկ ի վերայ մեր կայ, որ Հայ ժողովուրդի պատմական կեանքին մէջ շրջադարձային կարևորութիւն ունեցող այս օրերուն գործենք որպէս մէկ Եկեղեցի, որովհետև ե՛նք մէկ Եկեղեցի, ընդ հոգևոր վերին գլխաւորութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան և ներդաշնակ լծակցութեամբ մեր ևուիրապետական Աթոռներուն: Միայն այդ գործելակերպով է որ պիտի առատ պտղաբերութեամբ պսակուի մեր Առաքելական Մայր Եկեղեցւոյ ընդհանրական առաքելութիւնը և միայն այդ գործընթացով է որ վարկ պիտի շահինք յաչս ողջ քրիստոնէական աշխարհին, բոլոր քոյր եկեղեցիներուն և համայն մարդկութեան, անոնց ընծայելով մեր Ս. Եկեղեցւոյ կենսունակ բաժինը համաքրիստոնէական միութեան և եղբայրութեան վերստեղծումի Քրիստոսեան հրամայականին ներքև:

Մ եր առջև անյետաձգելիօրէն դրուած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման կամ մեր եկեղեցւոյ կազմակերպական, պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի տօնակատարութեան համազգական պարտաւորութիւնը:

Մ եր երջանկայիշատակ նախորդին՝ հանգուցեալ Վազգէն Ա. Կաթողիկոսի օրով և միաձնական որոշումովը Հայաստանեայց Եկեղեցւոյ ևուիրապետական Աթոռներու գահակալներուն, արդէն ծրագրուած է որպէս մէկ Եկեղեցի անոր արժանավայել պանծացման համար յատուկ համակարգ, որուն գործադրութեանը պէտք է լծուինք անյապաղ: Ահա ոսկեղէն ճանապարհ մը մեր Եկեղեցւոյ միութեան զօրացման և մեր Եկեղեցւոյ առաքելութեան լիակատար արժևորման, որով միայն կրնանք նոր պայծառութիւն ընծայել մեր նորոգեալ ժողովուրդին և մեր նոր պետականութեան մշտագնաց յառաջդիմութեան հեռանկարով, ի Մայր Հայաստան և յարտասահման:

Մ եր սրտի ջերմ խօսքը ու հայրական սիրոյ ողջոյնը Մայր Աթոռոյ համայն եպիսկոպոսական դասուն, վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, ուխտի մանկանց Եկեղեցւոյ, բոլոր այն սպասաւորներուն, որոնք Աստուծոյ կոչման և ձեռնադրութեան ու օծման շնորհագործ զօրութեամբ կանչուած են միաձնական Սուրբ Երրորդութեան թարգմանը ըլլալու երկրի վրայ, և հայ ժողովուրդի զաւակներուն մօտ:

Ս իրելիք, հոգևորականներուս կեա՛նքն է ճշմարիտ և կենդանի թարգմանութիւնը Քրիստոսի սուրբ Աւետարանին, ինչպէս մեր Տէրը Ինք ըսաւ Իրեն համար. **«Ե՛ս եմ ճանապարհն, ճշմարտութիւն և կեանք»**: (ՅՈՎՀ. ԺԴ. 6), «Որ տեսաւ զիս՝ տեսաւ զՀայրն»: (ՅՈՎՀ, ԺԴ. 9): Քրիստոսի Աւետարանը գիր չէ՛. գիրէն առաջ, գիրէն վեր և գիրէն ետք՝ կեա՛նք է, ապրուա՛ծ կեանք մարդոց ապրած կեանքին մէջ: **«Ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին»** (ՅՈՎՀ. Ժ. 10): Հոգևորականներուս կեանքը՝ աղօթքով թաթաւուն և անձնուիրական, ինքնազոհաբերական գործով ճառագայ-

թուն՝ ժողովուրդին կողմէ ընկալելի Քրիստոսի հաւատալիութեան ամենէն հաղորդական և ազդուական գրաւականն է: Աւետարանի քարոզութիւնը կեանքէն կը բխի, Յիսուսի՛ կեանքէն, և կ'անցնի մե՛ր կեանքերու մէջէն, փոխանցուելու համար ժողովուրդի կեանքին: **«Առնել և ուսուցանել»:** Ա՛յս է Քրիստոսեան իսկատիպ ոճը Աւետարանի քարոզութեան և քրիստոնէական հաւատքի կենսաւորման մեր առօրեայ կեանքին մէջ: Տարբեր չի կրնար ըլլալ մեր՝ Քրիստոսի սպասարկող հոգևորականներուս ոճը: Երբեք չմոռնանք մեր Տիրոջ խօսքը, **«որ արասցէ և ուսուցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից»** (ՄԱՏԹ. Ե. 19): Ինչպէս Ս. Առաքեալը կը պատուիրէ. **«Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ»** (Ա. Տիմ. Դ. 12):

Պատմութեան վկայութեամբ կը հաւատանք նաև որ մեր Սուրբ Հայրերուն ընդհանուր և տիրական ոճն ալ այդ եղաւ անցնող դարերուն: Այլապէս, մեր ազգին համար քրիստոնէութիւնը չէր կրնար ըլլալ այն կենդանի հաւատքը որ լիցքաւորեց և ուղղեց հայութեան կեանքը անցնող շուրջ երկու հազարամեակներուն, և առանց որուն՝ մահուան փորձութենէն տևականապէս յաճախուած հայութեան կեանքին ստեղծագործականօրէն շարունակումը անկարելի ու անբացատրելի պիտի ըլար:

Մենք հոգևորականներս՝ պիտի կարենա՞նք հաւատիս խիղճով Աստուծոյ ժողովուրդին առջև կանգնիլ և անկեղծօրէն ըսել. **«որ ետես զմեզ՝ ետես զՔրիստոս»** և աւելցնել. **«և ետես զհարս մեր և զվարս նոցա»:** Աղօթք, անձնական և հասարակաց, հաղորդութիւն ընդ Աստուծոյ և գործ ժողովրդանուէր որպէս բնական ճառագայթումը առաջինին: Ահա՛ մեր ինքնութեան և արժանիքին ճշգրիտ սահմանումը: Հոգևորականը կամուրջն է ընդմէջ աղօթքին և գործին, որ հաւատացեալները կը տանի **«ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ»** (ԺԱՄԱԳԻՐՔ):

Պա՛րզ դէպի մեր ինքնութեան հարազատութիւնը: Այդու միայն կրնանք յաջողիլ վերանորոգութեան շունչը ապրիլ՝ զայն մեր ժողովուրդին մէջ տարածելէ առաջ և տարածելու համար:

Աղջոյնի մեր խօսքը կ'ուղղենք Մայր Աթոռոյ բոլոր թեմերուն, անոնց Առաջնորդներուն և ազգային-եկեղեցական ժողովականաց, հոգևորական թէ աշխարհական: Դո՛ւք էք շառաւիղները Մայր Աթոռիս յայլևայլ տեղիս ի Հայաստան երկիրն մեր հայրենի և ի ծագս աշխարհի, առ գրուեալ մանկունս Եկեղեցւոյս Հայաստանեայց: Դուք էք այն անձերն ու մարմինները, որոնք ժողովուրդի կամքով և եկեղեցական իշխանութեան տնօրինութեամբ կոչուած են պատասխանատու դերակատարութեամբ յառաջ տանիլ մեր Եկեղեցւոյ փրկարար սպասաւորութիւնը կրօնական, դաստիարակչական, մշակութային, բարեսիրական, ազգային, ընկերային, և համայնական կեանքի այլ բնագաւառներուն մէջ:

Անսահման սիրով և բարձրագոյն աստիճանի արժևորումով կը գնահատենք ձեր սպասարկութիւնները մեր սուրբ Եկեղեցիին և ազգին, որոնք յանձն առնուած են և ի գործ կը դրուին կամաւոր ծառայութեան սքանչելի ոգիով, որ ինքնին սիրոյ և հոգեկան կապուածութեան ամենէն իրական և վաւերական բարացուցիչ արտայայտութիւնն է: Անխտրական ոգիով, անվհատելի յարատևութեամբ, անընդհատ ընթացքով, յառաջադիմական ներտումով շարունակեցէ՛ք ձեր ծառայութիւնները թեմական վերին

մարմիններէն սկսեալ մինչև ծխական խորհուրդներու, հոգաբարձութիւններու, կանանց և երիտասարդաց կազմակերպութիւններու, բարեսիրական միութիւններու մակարդակը ի վայելումն ձեր պաշտելի ժողովուրդին և ի պայծառութիւն ձեր զինուրեալ Եկեղեցիին:

Կ ոչ կ'ուղղենք մեր բոլոր աշխարհիկ կազմակերպութիւններուն և ազգային ազգայիններուն, կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ, կրթական մշակներուն, մշակութային սպասաւորներուն, մտաւորականներուն, գրողներուն, արուեստագէտներուն, մամուլի ծառայողներուն, քաղաքաբնակներուն, շինականներուն, արհեստաւորներուն, պաշտօնեաներուն, տնտեսագէտներուն, ճարտարարուեստի մասնագէտներուն, վաճառականներուն, զինուորականներուն, արանց և կանանց, հրաւիրելով զիրենք աշխատունակ ստեղծագործականութեամբ արժեցնելու իրենց կեանքը և իրենց քրտինքը խառնելու նաև Հայաստանեայց Եկեղեցւոյ, հայ ժողովուրդին, իրենց ապրած երկիրներու պետութիւններուն, մեր հայրենիքին, ազգ առ ազգ Հանրապետութեան հասարակաց կեանքին: Թող մասնակցութեան, յանձնառութեան և բարերարութեան հոգին ծաղկի ձեր բոլորին մէջ, որովհետև ան'լ պիտի արժևորած ըլլաք Աստուծոյ ձեզի՛ տուած բարիքները:

Զ աւակնե՛ր հայոց ազգի, դիտեցէ՛ք ձեր շուրջը: Ողջ աշխարհի մէջ ներկայիս յստակօրէն նշմարելի են կրօնական վերարթնութեան նշանները, որոնք օրէ օր աւելի լոյս կը զգենուն և կը դառնան առաւել տարածուն և ազդեցիկ: Բոլորդ ալ լաւ գիտէք, որ Հայ ժողովուրդի կեանքի շաղուածքին մէջ քրիստոնէական կրօնը եղած է այն, ինչ որ է արիւնը մարդկային մարմնին մէջ: Առաստացուցէ՛ք այդ առողջ արիւնը որպէսզի մեր ազգային կեանքին մէջ ան դառնայ կենդանացուցիչ և բարեփոխիչ ոյժ: Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութիւնը կամ բարեվորոգումը ներքին կենսունակութեան, հոգևոր վերրնձիուղման և բեղմնալից գործօնութեան հետ է առնչուած և անով պայմանաւոր և իրականանալի: Ան աւելի կապուած է մեր ապրումներու և վերաբերումներու ներքին վաւերականութեան, աստուածատիպ պատկերի վերականգնման հետ քան արտաքին ձևերու և ձևաւորումներու փոփոխութեան հետ:

Ս ենք որպէս եպիսկոպոսապետ, թէ՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայր Տաճարին մէջ Մեր կաթողիկոսական օծման առիթով և թէ՛ որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս Մեր ընտրութեան և գահակալութեան առիթով ի Ս. Էջմիածին, ուխտ կատարեցինք առաջի Աստուծոյ և առաջի հաւատացեալ ժողովրդեան «յանձն առնուլ զպաշտօնս զայս եպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ, և բոլորապտուղ ճուիրմամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց և կաթողիկոսական պարտուց, և առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան քրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դաւանութեան և ըստ Հայրապետական կարգաց և կանոնաց Աստուածպաշտութեան, անստերիւր և անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիղ հետս գնացից արժանաժառանգ յաջորդաց սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարթուղիմէոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի»:

Հ այաստանեայց Եկեղեցւոյ և հայ ազգի ամրութեան ու ստեղծագործական կենսընթացին մայր աղբիւրը մեր դարաշունչ սուրբ ալանդութիւնն է, Քրիստոսէն ժառանգուած և հայութեան կեանքով կերպաւորուած, մեկնաբանուած ու գունաւորուած: Այդ աւանդութիւնը վկէտք է ամուր և ան-

խախտ պահել Պօղոս Առաքեալի այնքան յստակ և պարտաւորիչ ցուցմունքներուն համաձայն (Ա. ԹԵՍ. Բ. 14, Ա. ԿՈՐՆԹ. ԺԲ. 11, Բ. ՏԻՄ. Բ. 2):

Նականօրէն աւանդութիւնը քարացած սովորութիւններու ընդարմացած ձեւականութիւններու գումարը չէ, այլ վառ ապրումով մշտանորոգ և կենսունակ ընդառաջումը Աստուծոյ կամքին և Քրիստոսի պատգամին, որ մեր հայրերու շունչով է կենսաւորուած և պատմութեան մէջէն է աճած, բայց պատմութեամբ չէ սահմանափակուած: Մեր եկեղեցւոյ և ազգի տոկունութեան ամրակուռ խարիսխ և մշտաբուխ աւիշ ընծայող ենթահողն է ան, որ կը կազմէ մեր ինքնութեան պահպանման գրաւականը, մանաւանդ այս ժամանակներուն երբ մարդկային ընդհանուր կեանքին մէջ կը տեսնենք այնքան անմարդկայնացող, մակերեսայնացող, ապակրօնականացող և ապազգայնացող բարքեր ու կենցաղակերպեր, որոնք ստուեր կը բերեն մեր քրիստոնէական հաւատքով և հայկական հոգիով թրծուած ազգային ինքնութեան ջինջ ու պայծառ պատկերին վրայ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ ներքին վերակենսաւորման և հոգևոր ու ազգային վերազարթօնքի ու վերաճաղկումի հրամայականը մեր առջև կայ որպէս առաջնահերթ պարտաւորութիւն: Աւետարանի ճշմարտութեանց, հոգևոր արժէքներուն, կեանքի բարոյական սկզբունքներուն քարոզութեան աշխուժացումը, Հայաստանեայց Եկեղեցւոյ ծիսական այնքան հարուստ աւանդութեան ժողովրդամերձ դառնալու անյետաձգելի անհրաժեշտութիւնը, գրականութեան և հաղորդակցութեան այլ միջոցներով քրիստոնէական հաւատքի և հայ եկեղեցական աւանդութեանց թարմ վերաշնչաւորումը և տարածումը, բարեսիրական և գործնական աշխատանքի ազդու միջոցներու ստեղծումը և այլ յարակից բազում բնագաւառներ և գործունէութեան ուղիներ և եղանակներ կարիքն ունին պատրաստուած նո՛ր հոգևորական սպասաւորներու ընտիր հոյլերու, որոնք պէտք է ըլլան ճառագայթարձակումը երկնային Լոյսին և մեր հայրերու շունչին: Մայր Աթոռի առաքելութեան այլազան և իրերալրացուցիչ բնագաւառներ, որոնք անյետաձգելի պարտաւորութեանց առջև կը դնեն մեր Սուրբ եկեղեցին: Կոչ կ'ուղղենք մեր երիտասարդ սերունդի զաւակներուն որ բացուիլ գիտնան հոգևոր ապրումներուն և հաղորդ ըլլան հոգեկան արժէքներուն, որպէսզի զգայուն և ատակ դառնան աստուածային կոչումին որ Ս. Հոգւոյն ներգործութեամբը կը յածի մեր շուրջ և մեր մէջ: Գիտնանք զայն լսել և խոնարհաբար ու արիաբար անոր ընդառաջել:

Վերածնդեան և վերազարթօնքի համազգային շարժումի այս օրերուն, մեր աղօթքին ու մտածումին ալաքը կ'ուղղենք ու կը սևեռենք մեր հայրենիքին վրայ, որ անա չորս տարիներէ ի վեր Աստուծոյ օրհնութեամբ և հայ ժողովուրդի տքնաթաթաւ, տաժանագին և հերոսական ջանքերովը մտած է նոր ճամբու մէջ, որ ազատութեան և անկախութե՛ն ճամբան է ժողովուրդի ինքնիշխան կամքով որոշելի և ընթանալի: Երջանիկ ենք որ կաթողիկոս ընտրուեցանք մեր ազատ ու անկախ Հայաստանի նոր Հանրապետութեան օրով: Անհուն սիրով և անսահման նուիրումի և ինքնաճանչական գոհաբերութեամբ ու խոր յարգանքի զգացումներով կ'ողջունենք մեր այս նոր ու պայծառ թուականն հայոց արդի պատմութեան և կը մնանք ամբողջականօրէն զօրավիգ անոր ամրացման և զարգացման:

Նայրախնամ սիրով կ'ողջունենք մեր պետութեան բոլոր սպասաւորներուն ազգընտիր և վեհմաշուք Նախագահէն սկսեալ մինչև Գերագոյն Խորհուրդի անդամները, Կառավարական կազմը, բանակն ու բոլոր պաշ-

ծօնեաները գնահատելով իրենց ներիրումը այս ամենադժուարին և ճակատագրական օրերու պայմաններուն տակ, և սպասելով որ կոչումի, ազգասիրութեան ու հայրենաշինութեան լայնախոհ, անշահախնդիր և անձնազոհական զգացումներով ու վերաբերումով առաւել ևս արմատաւորուի և անխախտելիօրէն ամրանայ ձեռք բերուած անկախութիւնը և ժողովուրդին կեանքը զարգանայ բնականոն կեանքի պայմաններու ստեղծումով հայրենիքին մէջ, ողջ հայութեան լիաւուէր ու անվերապահ մասնակցութեամբը:

Չմոռնանք երբեք, որ մահապիտի ցեղասպանութեան կրակէն ենք դուրս եկած և ութսուն տարիներու վերապրումի կամքով ենք զրահուած: Չմոռնանք, որ այսօր Արցախի հայութեան արդար գոյապայքարը մեր բոլորի նախանձախնդրութեան և զօրակցութեան կարիքն ունի: Չմոռնանք, որ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու հետապնդումը կը մնայ մեր նահատակներու անժամանցելի կտակը: Եւ այս բոլորին սիրոյն մեր ազգային ինքնութեան արժանապատուութեան զօրացումը մեր հասարակաց և ներիրական պարտքն է:

Ի դարու այս վերջին տարիներուն առաւել ևս շեշտ կարևորութիւն է ստացած քրիստոնէական եկեղեցւոյ միութեան որոնումի և համայն եկեղեցիներու կեանքին մէջ աւնոր վերահաստատման կարիքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը կոչուած է նոր և ուժգին թափ տալու միջեկեղեցական յարաբերութեանց այն բոլոր ջանքերուն, որոնցմով կարելի պիտի ըլլայ կենդանի հաղորդակցութեան մէջ ըլլալ քրիստոնէական միւս եկեղեցիներուն հետ և աւելի լայն ու գործնական դերակատարութեամբ մասնակից դառնալ քրիստոնէական միութեան համար աշխատող միջեկեղեցական շարժումներու և կազմակերպութիւններու ու հաստատութիւններու գործունէութեանց: Արագ հաղորդակցութեան միջոցներով յատկանշուած ներկայ ժամանակներուն՝ մեկուսացում և կղզիացում կրնան յանգիլ միայն լճացումի ինչ որ դիւրաւ կը բանայ ճամբան որ կը տանի դէպի աղքատացում, ուժալքում, ընդարմացում: Մեր սուրբ եկեղեցին իր հնադարեան ճոխ աւանդութեամբ մաս կը կազմէ այն կեանքին, որ Քրիստոսի «խորհրդական մարմնոյն» ներգործութիւնն է ի մէջ ժամանակի և ի վերայ երկրի: Մեր սուրբ եկեղեցին կարիքն ունի այլ եկեղեցիներու հետ ստեղծ յարաբերութեամբ անոնց փորձառութեանց դրական կողմերը առնելու որպէս գրգիռ և մղում, և՝ փոխադարձաբար՝ իրեն յատուկ հոգևոր, ծիսական, աստուածաբանական և եկեղեցական ու մշակութային ժառանգութիւնները բաժնելու այլ քրիստոնէական եկեղեցիներուն հետ:

Ահա, կանգնած երկրորդ հազարամեակի վերջալոյսի և երրորդ հազարամեակի արշալոյսի միախառնման հանգրուանին, Հայրապետական այսու Կոնդակաւ կը հրաւիրենք ձեզ բոլորդ անխտիր, հայ ժողովուրդի զաւակներ, որ պատրաստէք ձեր անձերը որպէս ընդունարան շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Վերստին ու մշտանորոգ ծնունդեան պէտք ունինք բոլորս: Այդ վերածնունդը Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ տեղի կ'ունենայ: «Պարտ է ձեզ ծնանել վերստին: Զի հողմ ուր կամի շնչէ, և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի՞ գայ կամ յո՞ երթայ, սոյնպէս և ամենայն ծնեալն ի Հոգւոյն» (ՅՈՎՀ. Գ. 8): Այո, մենք չենք գիտեր, չենք կրնար գիտնալ ո՞ւր կ'երթանք որպէս վերածնեալ մարդ: Դա Աստուծոյ գործն է: Մերինը՝ ընդառաջման պարտքն է: Բայց քաջ գիտենք, որ Աստուծոյ գիտցածը և ըրածը մեր բարիքն է միայն, թէ՛ անհատական և թէ՛ հաւաքական մեր գոյութեան

բարօրութիւնը, որ երկնքի արքայութիւնն է «ի ներքս ի մեզ», գերագոյն և անգերազանցելի երջանկութեան սկզբնաղբիւրը:

Այդ գոյավիճակը, ապրելու եղանակը Աստուած Ի՛նք ցոյց տուած է մեզի Իր Միածին Որդւոյն մարդեղութեամբը, Ս. Հոգւոյն յարաշարժ ներգործութեամբը, Աւետարանին և Ս. Եկեղեցւոյ Աւանդութեան անընդմէջ կենսագործմամբը: Այդ գոյավիճակին փորձը ունեցած են և մեզի փոխանցած՝ մեր հայրերը անցնող երկու հազար տարիներու հետևողական հաւատարմութեան սխրագործութեամբը: Այդ գոյավիճակը Ս. Պօղոս Առաքեալի նկարագրած կեանքի այն պատկերն է, զոր կը գտնենք Գաղատացւոց ուղղած իր թուղթին մէջ. կենսավիճակ՝ որուն մէջ Ս. Հոգւոյն պտուղները կը տեսնըուին ջինջ յստակութեամբ և կը վայելուին լիագոյն գոհունակութեամբ: Ահա ոսկի շարքը Ս. Հոգւոյն պտուղներուն. «Սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն» (ԳԱՂ. Ե. 22—23): Երբ այս առաքինագործ ոյժերը կեանքի վերածուին՝ կեանքը կ'ըլլայ իմաստալի, բերկրալի, յաղթանակ ի վերայ մահուան և ճանապարհ յաւիտենականութեան: Երբ այս հոգեկան ոյժերը տիրեն մեր կեանքին մէջ՝ այն ատեն մեր գոյութիւնը որպէս մարդ, որպէս ազգ, որպէս եկեղեցի և որպէս պետութիւն՝ կը դառնայ ճշմարիտ և պերճախօս վկայութիւն Աստուծոյ փառքին, բարիք՝ մարդկութեան և պսակ պարծանաց հայրենեաց մերոց Հայաստանեան:

Շնորհք Տեառն Աստուծոյ, Հօր և Որդւոյ և Սրբոյն Հոգւոյ և օրհնութիւն Սրբոյ Աջոյն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և լոյսն ի տեղւոջէ իջման Որդւոյն միածնի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 18-ն Յունիսի,
Յամի Տեառն 1995
և ի թուին Հայոց ՌՆՀԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ի Տօնի կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի
Հմր. 1 Ա/1



«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԱՒԱՓԵԼՈՒԹԻՒՆ Է»

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՕՆԻՆ
(18 Յուլիս 1995 թ.)

Յաւուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Եկայք շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Եկէք շինենք լոյսի սուրբ խորանը, որովհետև սրանից ծագեց մեզ համար լոյսը Հայաստան աշխարհում»:

Այս օրը բացառիկ իմաստով օր է Հայաստանեայց Եկեղեցու համար մեր ողջ ժողովրդի կեանքում: Տօն է այսօր Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի Մայր տաճարի: Ամէն մի հայ եկեղեցի իր աւուրց օրհնախմբութիւնը ունի, եւ ինձ համար այս օրը ողջ հայութեան, ամբողջ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր տաճարը եղող Սուրբ Էջմիածնի տօնն է: Նրա գաղափարի վերակենդանացումն է մեր մէջ, նրա խորհրդի ծաղկումը եւ մեր կեանքում նրա կատարելիք յեղափոխիչ դերի՝ խմորումի, պայծառակերպութեան օրն է այս օրը:

«Եկայք շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ»:

Ես այս պահին այս խորանի վրա երեւակայութեամբ մտաբերում եմ, թէ քանի հարիւր հազար անգամներ այս բառերը հնչեցին հայ ժողովրդի զաւակների շրթներից, քանի՜-քանի՜ անգամներ այս բառերը արձագանքուեցին Հայաստանեայց Եկեղեցիների կամարների ներքեւ, քանի՜-քանի՜ անգամներ այս բառերն արտասանուեցին եւ կրկին հնչում են այսօր հայ կրթական յարկերի ներքեւ, մշակութային սրահների բեմերից, ընտանեկան յարկերի տակ. **«Եկայք շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:**

Սկսօր, սակայն, եկէք մեր մոսաճումները, մեր ապրումները սեւեռենք այս բառերի վրա, որովհետեւ խօսքեր, որոնք յաճախ սասում են, յաճախակիօրէն կրկնում են առհասարակ, կորցնում են իրենց իմասսի թարմութիւնը՝ կրկնողութեան ճոգեբանական ազդեցութեան ներքեւ։ Սկսում ենք յաճախ «Հայր մեր» եւթ սասում գրեթէ մեքենարար՝ առանց այդ բառերից իւրաքանչիւրի իմասսին սեղրասոսելու։

Հարց սասենք սկսօր, ի՞նչ է ներսսական **լոյսի խորան**։ Եթէ մեզ հասարակ Սուրբ Հոգիածինը լոյսի խորան է, խորան բառի այն իմասսով, որ առհասարակ մարդիկ գործածում են, այսինքն մարմար կամ քար չինուած այն կառոյցը, որի վրայ դնում ենք աշտանակը, ճաճանչը, որի առաջ խունկ ենք ծխում, մոմ ենք վառում, այդ նիւթեղէ՞ն խորանն է, որ պիտի չինենք։ Խորանը լոյսի՝ մարդը ի՛նքն է։ Լոյսի բնակարանը մեր միտքն է, մեր սիրտն է, մեր ոգին է։ Եւ լոյսի ուսրածման դաշտը մեր կեանքն է։ Երբ սրբազան շարականագիրն ասում է, թէ լոյսի խորանը մենք պիտի չինենք, ես այսօր այդ խօսքի մէջ երեւակայում եմ ինձ, այդ հայ ոգեւորականին, ում այդ խորանի չինուածքն պարզապէս պատկերացնում է Նասուած Ինքը։

Խորանը լոյսի՝ լոյսը ի՛նքն է, որ սեղծում է Նասուած։ «Ես Լոյս յաշխարհ եկի»,—ասում է մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս։ Ճարտարապետը Սուրբ Էջմիածնի այս խորանի Նասուած Ինքն է՝ Իր Միածին Որդուն միջոցաւ։ Եւ մենք՝ մարդիկս, եթէ հրաւիրում ենք այսօր չինելու սուրբ խորանը, ինձ համար ներսսական է, որ մենք հրաւիրում ենք այսօր կառուցելու այդ խորանով և ոչ թէ կառուցելու խորանը։ Երբ մենք դառնանք մասնակից Նասածուն, դառնանք գործակից Նասածուն, այն սեղն է, որ կարող ենք սեղ «Եկայք չինեցուք սուրբ գիսրանն լուսոյ»։ Այլապէս մենք, իբրեւ մարդ էակներ, չենք կարող Նասծու լոյսի խորանը չինել։ Լոյսը Ինքը կը չինի Իր խորանը մեր մէջ։ Ես պատկերացնում եմ այն արուեսագէտին, բանասեղծին, երաժշտին, քանդակագործին, որ երբ սեղծագործում է, սպա նաեւ սեղծագործում է իր սեղծածով։ Երբ իր ոգին ճառագայթում է մարմարի մէջ, ձայների մէջ, բառերի մէջ, նա ինքն իրեն է արտայայտում, եւ իր արուեստով է, որ չինում է այն, ինչ որ է։ Մենք կարող ենք սուրբ խորանը չինել միայն այնպէս եւ այնքան, ինչքան որ մենք կարող ենք մասնակցել Նասծու չինարարութեան գործին, ոգեւոր չինութեան գործին։ Հարց եմ սալիս այսօր ձեզ եւ ամբողջ աշխարհի մեր հայ ժողովրդին, որ Սուրբ Էջմիածինն է դասում իրեն Մայր Նախ, քա՞ր է Էջմիածինը, ո՞ղ է Էջմիածինը։ Ոգի՛ է եւ ոգու ճառագայթում է, որ ճիսի միջից է մեզ հասնում, այնպէս քարը քար կլինի առանց ոգու։

Եթէ երբեք մենք ուզենանք ճշմարսօրէն, բուն էութեան ըմբռնել Սուրբ Էջմիածնի իմասսը, այդ իմասսի գաղսնի բանալին մենք մեր մէջ է՝ **ԷՋ-ՄԻԱԾԻՆ**։ Եւ Էջմիածինը այնքան Էջմիածին է, որքան Միածնական է, որքան Քրիստոս այս կենսրոնից խօսում է մեր ժողովրդին։ Էջմիածինը միայն լոյսի ըմպողը չէ, լոյսի ընկալողը չէ, այլ լոյսի ճառագայթումն է, լոյսի արձագանքողն է, լոյսի ցոլացուցիչն է։ Երբ մեր ժողովուրդը Էջմիածին է ասում՝ զՔրիստոս է հասկանում, Աւետարանն է հասկանում եւ նրա ամենից արժանըսնկալ զաւակին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, որի խոր Վիրապից դուրս գալու սօնն էր երեկ՝ շաբաթ օր։

Եւ ո՞վ էր Գրիգոր Լուսաւորիչ, դարձեալ եկէք բանանք մեր հոգիները այսօր՝ լսելու համար շարականի հոգելից, Սուրբ Հոգուն ներգործութեամբ

գրուած բառերը. Գրիգոր Նուսաորիչ **«քնար բաղցրախօս սաղմոսածային Հոգւոյ, յօրինեալ մարմնով և մատամբ հոգւոյն»**: Նուսաորիչ քնար մըն է բաղցրախօս, ճոխագարդ մըն է հաւատքի: Սաղմոսածին Հոգին է, որ հրա կեանքին, հրա աճման, հրա գրածներուն, հրա գործերուն միջից ճառագայթում է մեր կեանքում: Ահաւասիկ Նուսաորիչը իմչո՞վ է Նուսաորիչ, ճա, որ կազմուած է մարմնով և հոգւոյ մասերով: Ու եթէ երբեք ճա իր հաւատքի լոյսը դրեց այս կեանքում, այդ լոյսը պատճառ մեր մէջ պիտի կեցուցանէ, և մենք հրանով պիտի լուսաորուենք, որպէսզի մեր ժողովուրդը այս կեանքից լոյս առնէ:

Հետևաբար **Էջմիածինը հաւատամքին լինելուց առաջ՝ առաքելութի՛ւն է:** Այս բառերը ցանկանում եմ կրկնել. **Էջմիածինը աճելուն պատճառ, ճեղքող, գոլք, պարծանք ու փառաբանութիւն լինելուց աճդին՝ առաքելութի՛ւն է,** Սառճու թարգմանութիւնը, Աւետարանի բարոզութիւնը, մեր հայրերի սուրբ աղաղնների կեանքի փոխանցումը մեր ժողովրդի գաւակներին: Ա՛յս է խորհուրդը Էջմիածնի: Ու երբ մարդ հոգեղէն աչքերով կը դիտի այս արարվածը, այն ատեն է, որ Աւետարանի բառերով «բարերը կը խօսեն»: Բայց եթէ երբեք առանց հաւատքի, առանց հոգեկան լոյսի ճերգործութեան, առանց հոգեկան հաղորդութեան ճայի այս բարերին, այդ բարերը ի՛նչ առարերութիւն ունեն ուրիշ բարերից: Այդ բարերը հաւատքի, գաղափարի, հոգիի, ճուիրման ապուճգներ են, որոնցից մենք կեանքի ջուրն ենք խրումում Յիսուս Քրիստոսի Աւետարանի, մեր հայրերի միջոցաւ մեզ փոխանցուած:

Էջմիածի՞ն... Երբ այս բառը ճճչում է հայ ժողովրդի շրթներին, ժողովուրդը ի՞նչ է պատկերացնում՝ բարե՞րը միայն: Պատկերացնում է այն սուրբ հայրերին, ովքեր այդ բարերի մէջ աղօթք են խառնել, հոգեկան ապրումներ են զետեղել, իրենց կեա՛նքն են այդ բարերի մէջ դրել: Էջմիածին, Գրիգոր Նուսաորիչ և նրանից յետոյ, ակնարկելով միայն վերջին դարերին, ասելացնում եմ, Մովսէս Տաթեացի, Սիմէոն Երեւանցի, Գէորգ Դ Մեծագործ, Խրիմեան Հայրիկ, Վազգէն Կաթողիկոս, Կոմիտաս վարդապետ և երանելի, հոսանեծ այն վարդապետները, ովքեր Էջմիածնին Սառճու լեզուն են խօսեցնել տուել իրենց լեզուների միջից, իրենց կեանքերի միջից:

Եղբայրնե՛ր և քոյրե՛ր, մենք պէտք ունենք մարդկօրէն պատասխանելու սաղմոսածային ձայնին, մենք պէտք ունենք ներքին ամբողջական հոգեփոխութեան՝ արժանի լինելու համար այս սուրբ Տաճարին, այս արթնացնող աճումին ե՛ւ իբրեւ հոգեւորականութիւն, ե՛ւ իբրեւ աշխարհական ազգայիններ Հայաստանում և կամ աշխարհի չորս կողմը ցրուած: Եթէ ունես ոսկի՝ փայլեցրո՛ւ այն, թիթեղի մի՛ վերածիր, փոշի թող չառնայի, կեղտ թող չառնայի: Սառուած ոսկին է տուել՝ մենք նրա փա՛յլը լինենք և ոչ թէ կեղտը կամ փոշին: Էջմիածինը ո՛չյ է, բայց հոգի՛ պէտք է ունենալ այդ ոյժը գործադրելու համար, պէտք է բացուել:

Այսօր իմ այս վկայութիւնը, չեմ ասում բարոզը, իմ այս հոգու խօսքը չեմ կարող փակել առանց բացելու ձեր աչքերի, ձեր հոգիների առաջ այն բառերը, որոնք գրուել են և պահպանուել մեր Ժամագրքում: Ու մենք իբրեւ ժամամուտ այդ աղօթքը ասում ենք, բա՛ց քանի՞ հոգի է այդ աղօթքն իմացում: Մնացել է գրքի մէջ: Այսօր գրքից դուրս եմ բերել և ձեր հոգիների մէջ արեւի լոյսի պէս եմ ցանկանում սպրուածել նրա ոսկիացնող բառերը: Թող այդ բառերը լինեն ձե՛ր բառերը, ձեր հոգո՛ւ կեանքութիւնը ապահովող ներքին հոգեկան ոյժերը:



ԳԱՐԵԳԻՆ Ա ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ՈՒ ԱՂՕԹՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻՆ (27 Հուլիս 1995)

Պահպանված նախագահի հայտատոմսի համաբույնության,
Հարգարժան նախագահ Ազգային ժողովի բացման վիսոի,
Մեծարգո անդամներ Ազգային ժողովի,

Իր տեսակին մեջ իմ ստոլոված ոլոմսնութ[illegible]ը եզակի, առանձնահատուկ խմամբ և վերապահ ոչ: Գասունական գշանակություն ունի բացման այս վիսոը ազգային ժողովին, որովհետև մեր ազգ Հայաստանի ժողովրդական իշխանության մեջ է ազգ Սահմանադրության օրենքներով, գործադիր, դատական իշխանությունների հասուկ բաժանմամբ և վահեցողի, կառավարության և այլ կառուցվածքներ իրավասությունների և պատասխանատվությունների գշտումով:

Առաջին հերթին Մեզ կշռորհավորելու ազգ կարգ Ազգային ժողովի և կոչնհեր մեր Հանրապետության ազգ բարգ հույսով, որ ժողովը պիտի առաջնորդի Սահմանադրության պահպանվելով և մեր բոլոր բնույթ ժողովրդի ակնկալիքները և ազգ հիմնական խնդիրները:

Երկրորդ, սրտի պարտք կզգանք մեր գնորհակալությունը ազգ հանրապետության նախագահ <u>Գերապատիվ Տեր Գարեգին Բ</u>[illegible] և գործ[illegible] ազգ հիմնական ուղղությամբ մեր ազգ Հայաստանի Հանրապետության ազգ իրավունքների պահպանման, ազգ հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման, հայկական բոլոր համայնքների հետ ազգ կապերի ամրապնդման, հայության միասնության ազգ գործում:



«Սիրելիք,

Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպես ճոգևոր ճայր ամենեցուն, Մեզի ճամար գերազանց ճոգեկան գոճունակությամբ առիթ է կազգվիլ ձեր բոլորի առաջ և ճաճոյ մեր Ս. Եկեղեցիին, ճաճոյ մեր Ազգայի'ն Եկեղեցիին և ճաճոյ ամեն ճոգևոր կեդրոնին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ճայրապաշտամբ սիրով ողջունել ձեզ ձեր առաքելության այս սկզբնական ճաճիգլխավորին: Եվ առաջին ճերթին Մեր ձայնը կրկնապատկենք առ Ամենապատվ. Տ. Տ. Եղիշե Արքեպս. Դուրյան և կճայցենք Իր օրճնության ներքո Ազգային Ժողովին և ամեն բոլոր ամենամեծարժեք պատգամախոսներուն վրա.—

«Պաճպանիչ և յոյս ճաստատչող Քրիստոս Աստուած մեր, պաճեա՛, պաճպանեա՛ և օրճնեա՛ զերկիրս մեր զՀայաստանաց աշխարճ, շինեալ բարուաւք զաւակաց ազգիս ճայոց, ճոիքագործեալ արեամբ ճերոսից և ճաճատակաց, կառուցեալ և առեղծագործեալ շնորճօք, արճեստիւք և արուեստիւք տաղանդաշաւս ջանիւք ճոգւոյ և մտաց ապստամբաց որդւոցն ճայկազնեանց, պաճեա՛ զնա ի խաղաղութեան, յաջպաճողութեան և ի բարգաւաճութեան:

Օրճնեա՛ Տէր և զնախանձայոյզ Հաճբուպետութեանս մերոյ և զամենայն ժողովրդականիս պատգամատուս՝ զաճգատաւս Ազգային Ժողովոյս: Հետ ի վեճ բայ ճոգա զբազմապատկուսիկ շնորճս քո խնամութեան: Զօրացո զնոսա պարգեւօք և առաքինութեանցիւք արիութեան, ճոիքարարութեան և աճաճնիկիս ճոգեմաքառութեան: Ողջ և առողջ պաճեա ի ճոսա զսէր և զերկիւղ Քո սրբարար և զճախանձ և զջանս աշխարճաշինութեան ճայրենեացդ մերոց դարպեկաց: Սփոռջ պաճեա ի ճոսա զճոգս և զկամս և զտենչս շինութեան և բարեկարգութեան ժողովրդեանս մերոյ վասն պայծառութեան վերածնողեալ աճկախութեան Հայաստանեայց աշխարճիս, վասն յառաջդիմութեան վերածնեալ ազգիս և պետութեանս, զոր ճովանաւորեսցէ սուրբ և պատուական խաչիդ քո ի խաղաղութեան, վերկեա, Տէր, յերեսից և յաճեղկութենէ թշնամեաց, արժանացուսրեա զոճութեանդ փառաւորել զԱնձն քո և զՈրդի քո և զՀոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

(Վեճաւիսառն այսօրեղ լռության մի րոպե ճայտարարեց Հայրենիքի ճամար իրենց կյանքը, գործը և արյունը ընծայած ճանգուցյալ վաստակավորների և ճերոսների ճիշատակին՝ առանձնապես ճիշելով իր երջանկաճիշատակ ճախորդին՝ Վազգեն Ա. Կաթողիկոսին, որ եղել էր առաջին Կաթողիկոսը, որ ամենախ պետության Գերագույն խորճուրդին իր ճայրապետական խոսքն է ուղղել: Ապա շարունակեց իր պատգամը):

Սիրելի արք. Նախագաճ և ամենամեծար Ազգային Ժողովուս,

Մեր Հայրենիքի և ողջ Հայության, ներառյալ Հայրենիքի սիրով ոգեորված և պատասխանատվության պայմաններու տակ ապրող Հայության, աչքերը ձեզի' են ուղղված: Մենք մեր կյանքի մեջ առաջին ամեն անգամ լլկվում է, որ կկատարենք այս արարքը և կսրտատանջենք այս խոսքը մեր մայր Հայրենիքի Ազգային Ժողովին ճամար: Ո՛չ հավակնություն, ո՛չ ալ կարողությունը և ո՛չ ալ փափաքը ունինք խրատ տալու ձեզի: Որպես ճոգևոր ճայր և որպես առաջին ապստամբ Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին, սրտի պարտք կզգանք ձեզի ճետ կիսելու Մեր ճախանձախնդրությունը և միանգամայն ապաւումը, որ ձեր պաշտոնավարության ողջ շրջանին ներքին մտահոգ չընձեք այլ զգացումն ու մտածումը, որ Աստուծո Աչքն ու Սիրտը ի վերուստ կճսկեն ձեր վրա, Արագածի կատարին ան-

պարտաւ կախեալ Լուսաւորչի կաթողիկէ և Միածնաէջ Մայր տաճարի լուսաւորագոյթ և երկնաշխարհաքարոյր գմբեթին:

Մեր Տիրոջ և երկնաւոր վարդապետին ամենաճշմարիտ խոսքն է. **«Տուր գկայսերդ՝ կայսեր, և գԱստուծոյ՝ Աստուծոյ»:** Կայսեր բաժինը, աշխարհի ու երկրավորի բաժինը աճքաստված չէ Աստուծո բաժինեան և ոչ այլ հակադրված աճող: Կայսեր տրվածը կերթա Աստուծո, երբ տրվածը արդարությունը ունի որպես մղիչ ոյժ և որպես նպատակակետ: Եվ Աստուծո բաժինը օտար և հակադիր չէ կայսեր տրվածին, որովհետև Աստված է՝ մարդուն, ազգին և հայրենիքին բարիքին համար միայն, որպես «արարիչ երկնի և երկրի, երեսելիաց և աճերեւութից» և «խնամող մարդկան»:

Արդար է, որ մեր Հանրապետությունը ճանչցած է և կճանչնա խղճի և կրոնի ազատությունը իր բոլոր քաղաքացիներուն համար: Այդ ազատությունը ևս կնկատեմ որպես աստվածային կամքին արտահայտություն: Նույնքան արդար է, որ մեր Հանրապետությունը որպես հայ ժողովուրդի պետություն ճանչցած է և կճանչնա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որպես ազգային Եկեղեցի, որովհետև այդ Եկեղեցին աճբակտելիորեն ընդելուզված է, աճբաժանելիորեն շաղախված է հայության դարավոր կյանքի հյուսվածքին մեջ:

Մեր սուրբ Եկեղեցին միշտ զորավիգ է կանգնած հայոց պետության, որովհետև ամոր մեջ ճանչցած է ժողովրդի իմքնիշխան կամքին բնական արտահայտությունը, մանավանդ նեղկա ժամանակներու ժողովրդավարական սկզբունքներու և կարգերու պայմաններուն տակ:

Սհա թե ինչո՛ւ ջերմորեն և Հայրապետական հոգածության զգացումներով երբ կշնորհավորենք ձեզ որպես օրենսդիր վերին իշխանությունը մեր ժողովրդին, կմաղթենք, որ մնաք և տևեք այն բարձրությանը վրա, որով համայնատնական, ամբողջատեսական պարագրումով և հայրենասիրական ու ժողովրդավեր ոգիով, արդարամիտ և խաղաղասիրական ճախանձախնդրությամբ, հայրենապաշտպան զոհողության գիտակցությամբ ու գերազձական վերաբերումով ձեր ծառայությունները պիտի մատուցեք մեր պաշտելի ժողովրդին և հայրենիքին: Ընդառաջ ու մնաք մեզ ընտրած ժողովուրդին հետ ի մշտական հաղորդության, զգալուն և ընդառաջող՝ աճոր կարիքներուն, արդար իրավունքներուն և ազգային ճվիրական դատին, աճոր հառաջդիմական ձգտումներուն և գերագույն շահերուն: Երբեք չմոռնաճք, որ մեր բոլորի դատավորը Աստված է և դատարանը՝ պատմությունը, ժողովուրդը և հայրենիքը ընդդեմ մեր աչքի բիբը, մեր արտին տրուիը, մեր միտքին սլաքը և մեր հպարտության բարձրակետը:

Քաջ գիտենք, որ ձեր ճանապարհը չէ մարմարապատ կամ ծաղկազարդ, ոչ ալ հեզասահ և դյուրագնաց: Թող ձեր ծառայական ճանապարհորդության ոճը ըլլա այնպես, որ փուշն ու տատասկը բթանան ու չծրտանան, և ծաղիկն ու պտուղը դառնան բուրումնավետ և բեղմնատուր՝ ի վայելումն մեր տատասկապատառ, բայց պատվախնդիր ժողովուրդին և հեռատես ու հեռատես հայրենիքին և ի փառս Աստուծո և ի բարիս համայն մարդկության:

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ



Հունիսի 12—16-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ի հրավերով այցելեց Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա: Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, «Էջմիածին» հանդեսի գլխավոր խմբագիր Սաղիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, կրոնի գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ռաֆայել Պապոյանը, գավազանակիրներ Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանը և Գրիգոր վարդապետ Չիֆթչյանը:

«Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհելու էին եկել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը, Մայր տաճարի լուսարարապետ Հուսիկ արքեպիսկոպոս Սանթույանը, Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, միաբան հայրեր և Մայր Աթոռի պաշտոնյաներ: Հայաստանի Հանրապետության նախագահ մեծահարգ Լևոն Տեր-Պետրոսյանը Վեհափառ Հայրապետին և Նորին Սրբությանը ընկերակցող պատվիրակությանն էր տրամադրել նախագահական օդանավը:

ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հունիսի 12-ի երեկոյան ժամը 5-ին Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի ինքնաթիռը վայրէջք կատարեց Մոսկվայի «Վնուկովո-1» օդանավակայանում, որտեղ Հայոց Հայրապետին դիմավորեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ն՝ իր շքախմբով, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Յուրա Մկրտումյանը, Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդական փոխանորդ Եզնիկ ծայրագույն վարդապետ Պետրոսյանը, Ուկրաինայի հայոց առաջնորդական փոխանորդ Նաթան ծայրագույն վար-

դապետ Հովհաննիսյանը, Սանկտ Պետերբուրգի և Մերձբալթյան երկրների հայոց հոգևոր հովիվ Եզրաս աբեղա Ներսիսյանը, Կրասնոդարի հայոց հոգևոր հովիվ Տաթև քահանա Հարությունյանը, Կիսլովոդսկի հայոց հոգևոր հովիվ Սարգիս քահանա Պողոսյանը, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ Մովսես աբեղա Մովսիսյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, դեսպանատան աշխատակիցներ:

Օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցույց տրված ջերմ ընդունելության ողջ ընթացքը լուսաբանում էին տասնյակ լրագրողներ, «ԻՏԱ», «Վեստի» և այլ լրատվական գործակալությունների թղթակիցներ:

Ողջույնի և բարեմաղթանքի ջերմ խոսքեր փոխանակելուց հետո Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը և Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսեյ Բ Պատրիարքը ուղևորվեցին դեպի Ս. Դանիլովյան վանք, որտեղ տեղի ունեցավ Հոգևոր պետերի և պատվիրակության ներկայացուցիչների հանդիպում: Ռուսաց Պատրիարքը տեղեկություններ հաղորդեց Ղարաբաղի հարցի շուրջ այն եռակողմ հանդիպման վերաբերյալ, որը հաջորդ օրը տեղի էր ունենալու Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների միջև հաջորդ օրը հետ միջօրեին: Շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ խաղաղարար գործուն ջանքերի համար:

Պատասխան խոսքում Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց, որ ինքը տեսնում է Աստծո մատնակցությունը խաղաղության գործի մեջ: Եվ այդ խնդրում մեծ դեր է վերապահված Ռուսաստանին: Երկու բարեկամ ժողովուրդների և երկրների միջև պիտի շարունակվեն եղբայրական դարավոր կապերն ու հարաբերությունները և փոխադարձ գործակցության ներտացման խնդրում կարևոր դեր պիտի ստանձնեն Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական քույր Եկեղեցիները, ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ԴԱՆԻԼՈՎՅԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Հաջորդ օրը, հունիսի 13-ին, Նորին Սրբություն իր պատվիրակության ընկերակցությամբ ծաղկեպսակ դրեց Անհայտ զինվորի հուշարձանին Ալեքսանդրովյան այգում՝ հարգանքի իր տուրքը մատուցելով Հայրենական պատերազմում զոհված մարտիկների հիշատակին:

Նույն օրը Ս. Դանիլովյան վանքում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ի հրավերով և մասնակցությամբ տեղի ունեցավ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի հանդիպումը Կովկասի մուսուլմանների հոգևոր պետ Շեյխ Ուլ-իսլամ Ալլահ-շյուքյուր Փաշա-զադեի հետ: Բացելով այն, Ալեքսեյ Բ Պատրիարքը նշեց, որ Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների անդրանիկ հանդիպումը տեղի է ունեցել դեռևս 1988-ին՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու նախաձեռնությամբ: Նա հույս հայտնեց, որ ներկա՝ չորրորդ հանդիպումը սկիզբ կդնի փոխըմբռնման գործընթացին: Բանակցությունների ընթացքին Նորին Սրբության հետ ներկա էին Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը: Երեք հոգևոր պետերի խոսքերից հետո մամլոյի ներկայացուցիչներին բաժանվեց հայտարարության նախագիծը, որից հետո հոգևոր պետերը ներկայացրին իրենց հետ ժամանած պատվիրակության

Վեհափառ Հայրապետին դիմավորում է Մոսկվայի եւ
Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն

Հանդիպում Մոսկվայի պատրիարքարանում

Նվերների փոխանակում

Երախտագիտական վկայագրի ընթացքում

անդամներին: Մանրամասն և երկար քննարկումներից հետո, որոնք անցան փոխըմբռնման մթնոլորտում, ընդունվեց «Մոսկովյան հայտարարությունը», որ ստորագրեցին Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ը, Ադրբեջանի և Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ Ուլ-իսլամը: Այդ հայտարարությամբ ընդգծվում էր, որ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը կրոնական բնույթ չունի: Եռակողմ հանդիպման մասնակիցները իրենց գոհունակություն են հայտնում գերիների ազատ արձակման արդեն առկա փաստերի առթիվ, միաժամանակ հանդես գալով հայ-ադրբեջանական խաղաղարար կոնֆերանս անցկացնելու նախաձեռնությամբ: Երեք ժողովուրդների հոգևոր առաջնորդները կոչ են անում պետական իշխանության մարմիններին՝ անսալ խաղաղության աստվածահաճո ձայնին:

Ստորև ներկայացնում ենք Համատեղ Հայտարարության ամբողջական տեքստը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Ա և Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի Նախագահ, Ադրբեջանի Մահմեդականների Հոգևոր Առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահ-շյուքյուր Փաշա-զադե, հանդիպեցինք Մոսկվայում՝ քննարկելու համար զինված դիմակայության հաղթահարման ուղիները, ինչպես նաև միասնաբար խորհրդածելու այն բանի շուրջ, թե ինչպես կարող ենք մենք՝ կրոնական գործիչներս, նպաստել Ղարաբաղի հիմնախնդրի պատճառով առաջացած հակամարտության ապաքինմանը:

Մենք ուրախ ենք, որ մեր ժողովուրդների հոգևոր առաջնորդները հանդիպում են արդեն չորրորդ անգամ, և որ ականավոր հովվապետ ու խաղաղարար երջանկահիշատակ Սրբազնագույն Պատրիարք Վազգեն Ա-ի ներկայացուցիչների մասնակցությամբ 1988 թվականի մայիսի 5-ի, 1993 թվականի նոյեմբերի 17—18-ի և 1994 թվականի ապրիլի 15-ի հանդիպումներում սկսված գործընթացն այսօր հաջողությամբ շարունակվում է:

Մենք պաշտպանում ենք նախկինում նման հանդիպումների ժամանակ արտահայտված այն կարծիքը, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը զուրկ է կրոնական հիմքից և մեղսալից չէ քրիստոնեության ու իսլամի տեսակետից: Մենք կրկին դիմում ենք հակամարտող կողմերի պետական ղեկավարներին՝ գոյություն ունեցող վեճերի խաղաղ լուծման համար ամեն ինչ անելու կոչով: Մենք կոչ ենք ուղղում նաև հակամարտության տարածաշրջանում դեպքերի զարգացման վրա պատմականորեն ոչ քիչ ազդեցություն ունեցող Ռուսաստանի ղեկավարությանը՝ հնարավոր բոլոր ջանքերը գործադրել՝ այնտեղ կայուն խաղաղության հաստատման և խոշոր քաղաքական համաձայնագրի ստորագրման համար: Դրան հասնելուն կարող է օգնել նաև ողջ համաշխարհային ընկերակցությունը, և մենք նրան խնդրում ենք չմոռանալ նրանց ցավի մասին, ովքեր տառապում են կործանարար թշնամանքից:

Այժմ, երբ տարածաշրջանում իրադրությունը որոշ չափով կայունացել է, բայց հակամարտությունը կարող է ամեն րոպե վերսկսվել, անհրաժեշտ է խաղաղություն իրոք կայուն և արդարացի դարձնել, որպեսզի մարդիկ հնարավորություն ստանան վերադառնալու այն վայրերը, որտեղից նրանք արտաքսվել են պատերազմի պատճառով: Ընդհանրապես փախստականների հիմնախնդրի լուծումը, որը խաղաղության հիմնական պայմաններից է. պետք է դառնա բանակցությունների գլխավոր նյութերից մեկը: Առանձնահատուկ ուշադրություն է պահանջում գերիների և պատանդների ծանր ճակատագիրը, որոնց թվում կան շատ կանայք և երեխաներ:

Մենք ողջունում ենք կողմերի բարի կամքի քայլերը՝ գերիների և պատանդների ազատ արձակումը, և կոչ ենք ուղղում ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական գործիչներին, ակտիվացնել ջանքերն այս ազնիվ, մարդասիրական գործընթացում՝ մինչև վերջին գերյալի ազատ արձակումը:

Կրոնական գործիչները, քրիստոնեության և իսլամի բոլոր հետևորդները ի վերուստ կոչված են ակտիվացնելու իրենց մասնակցությունը խաղաղարար գործընթացի մեջ: Հենց դրա համար էլ մենք հանդես ենք գալիս հայ-ադրբեջանական հարաբերությունների հիմնախնդիրներին նվիրված հաշտության խորհրդաժողովի շուտափույթ անցկացման նախաձեռնությամբ, որպեսզի միասնաբար մարդկանց ավետենք հաշտության խոսքը: Այս գործում օգնության կոչելով Բարձրյալին, խնդրում ենք այս տարածաշրջաններում արկող բոլոր հավատացյալներին՝ աջակցել մեր խաղաղարար առաքելությանը: Կոչ ենք ուղղում նաև իշխանություններին՝ անսալ մեզ՝ ի բարօրություն իրենց կողմից առաջնորդվող ժողովուրդների:

Համոզված ենք, որ Տերը կօգնի իր հավատացյալներին վերականգնելու խաղաղություն ու հաշտությունը: Քանզի նրանց բարի, արդարացի խոսքը, ծառայությունը սիրույն և գթասրտությանը, նվիրվածությունը խաղաղության ու ճշմարտությանը, կարող են շատ ավելին անել, քան քաղաքական գործիչների վեճերն ու գիտվորականների հակամարտությունը: Իսկական խաղաղություն սկսվում է մարդու սրտում: Մենք հավատում ենք, որ մեր խոնարհ աղոթքներն ու ջանքերը մարդկանց կօգնեն հետու վանելու չարի ծառայությունը և իրենց սրտերը հանձնելու Բարձրյալին, Որը մեզ պարգևում է խաղաղություն, սեր և հաշտություն:

Բարձրյալ Արարիչը մեզ օգնական: Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

Ծայրագույն Պատրիարք
և Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԱԼԵՔՍԵՅ Բ

Պատրիարք Մոսկվայի
և Համայն Ռուսիո

Ա. ՓԱՇԱ-ՋԱԴԵ

Շեյխ-ուլ-իսլամ
Կովկասի ժողովուրդների
Վերին Կրոնական Խորհրդի
Նախագահ

Մոսկվա,
13 հունիսի 1995 թ.

Առաջին պաշտոնական հանդիպում

Ողջույնի խոսքերի փոխանակում պատրիարքարանի մատռան մեջ

Ընծայություն ի պատիվ Վեհափառ Հայրապետին

Նվերների փոխանցման

Այս հայտարարությունը գնահատվեց իբրև կարևոր քայլ խաղաղության ճանապարհին: Հայտարարության վերջնական տեքստի ստորագրումից հետո Գարեգին Ա Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Ալեքսեյ Բ Պատրիարքին, որի ճախաձեռնությամբ կայացավ եռակողմ հանդիպումը: Մենք կուզենք, որ պատերազմը երբեք չվերադառնա, և բոլոր հարցերը լուծվեն երկխոսության միջոցով, մենք ուրիշ ճանապարհ չունենք խաղաղության ճանապարհից բացի, վերջում ավելացրեց Նորին Սրբությունը:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Մոսկվայում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը: Դեսպան Ցուրա Մկրտումյանը ներկայացրեց Ռուսաստանի դաշնությունում հայության կացությունը՝ միաժամանակ ընդգծելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը մեծ ոգևորություն է առաջ բերել Մոսկվայի հայության շրջանում:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց դեսպանին ջերմ ընդունելության համար և իր գրքերը նվիրեց դեսպանատան գրադարանին:

ՃԱՇԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հունիսի 14-ին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալվեց Ալեքսեյ Բ Պատրիարքի նստավայրում՝ Ս. Դանիլովյան վանքում: Ընդունելությանը մասնակցում էին Ռուսաստանի Դաշնությունում Իսպանիայի, Լիբանանի, Սիրիայի, Հունաստանի, Արգենտինայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիո, Հայաստանի դեսպաններ և դեսպանությանց ներկայացուցիչներ, հոգևորական գործիչներ, պատվարժան հյուրեր:

«Մեր ազգերը կդառնան բարոյական առողջ հիմքերի վրա վերականգնվող ազգեր, երբ նրանց կյանքում կներգործեն քրիստոնեական հավատքը և բարոյական սկզբունքները,—պատասխանե խոսքում ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը: — Դրանով է, որ կարող կդառնանք առաջքն առնելու օտար և մոլորեցուցիչ քարոզություններին, որոնք փորձում են մեր հավատացյալների կյանքը խռովել և քրիստոնեական ճշմարտություններից հեռացնել: Առօրյա հացի նման այդ գործակցությունը կարևորություն է ստացել այս օրերին...

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայ Եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների հետ միասին և ողջ աշխարհում, Հայաստանից մինչև Միջին Արևելք և Եվրոպայից մինչև Ամերիկաները, ու Աֆրիկեից մինչև Ծայրագույն Արևելք տարածված իր բոլոր թեմերի անտ լծակցությամբ պատրաստ է այդ գործակցությունը հետաչ տանել Ռուս մեծ Եկեղեցու հետ միտ, եղբայրության, հարգանքի և հասարակաց պարտավորության սկզբունքներից առաջնորդված»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԵՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱ

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Հոգեկան խոր գոհունակության և եղբայրական սիրով օծուն ուրախությամբ ողջունում ենք Ձեզ Մեր այս առաջին հանդիպումին, որ տեղի է ունենում Աստուծո կամքով, մեր Եկեղեցիների փոխադարձ սիրո գորությամբ և միասնական գործակցության ամբողջական պատրաստակամությամբ: Թող մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, օրհնի և պտղաբեր դարձնի այս առաջին հանդիպումը Իր փառքի և Իր Եկեղեցու պայծառ ու արդյունառատ առաքելությանը համար՝ ի խնդիր ռուս և հայ ժողովուրդների հոգևոր շինության և վաս քրիստոնեական ընդհանուր Եկեղեցվո ու մարդկության խաղաղության և բարօրության:

Անհավասիկ երկու ամիսներ անցան այն օրից, երբ ողորմությամբն Աստուծո և ընտրությամբը հայ ազգին՝ կոչվեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսության ծանրագույն և բարձրագույն պարտավորության, հայ ժողովրդի պատմության ամենեն վճռական, դժվարին և միանգամայն խոստումնալից այս ժամանակներին:

Մեր գահակալության օրը Մենք խորապես քաջալերվեցինք՝ զգալով Ձեր եղբայրության սերն ու աղոթքը, հոգեկան զորակցությունը, որն արտահայտվեց Ձեր ներկայացուցչի՝ միտրոպոլիտ Ֆիլարետի ներկայությամբը ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ջերմ շնորհակալություն ենք հայտնում այդ եղբայրական սիրալիր և անկեղծ վերաբերումի համար:

Հայաստանից դուրս Մեր առաջին ճանապարհորդությունը փափագեցինք կատարել այստեղ Մոսկվա և Մեր առաջին միջեկեղեցական հանդիպումն ունենալ Ձե՛զ հետ: Պատճառը պարզ է: Պատմության բնական թելադրանքն է այդ: Վերջին դարերին հայ ժողովրդի և պետության ազգայինեկեղեցական, քաղաքական և մշակութային, ընկերային ու տնտեսական կյանքը զարգացել է ռուս ժողովրդի և պետության հետ սերտ հարաբերության պայմանների ներքո: Հայ Առաքելական և Ռուս Օրթոդոքս Եկեղեցիները հաճախ եղել են նույնատեսակ պայմանների ու կացություններ դիմագրավման հարկի տակ: Նրանց միասնական գործակցությունը հանդիսացել է բարիքների աղբյուր:

Ներկայումս մեր երկու Եկեղեցիներն ու երկու ժողովուրդներն էլ դեմ հանդիման են գտնվում այնպիսի մի նոր կացության, որը հատկանշված է բռնապետական կարգերից ձերբազատ և անկախ պետականության կառույցներով օժտված պայմաններով: Կրոնի, խոհրի ու խոսքի ազատ արտահայտության այս բարեբաստիկ շրջանին մենք կարիքն ենք զգում մեր ժողովուրդների կյանքում ուժեղ թափով ներգործող ազդեցության վերածելու քրիստոնեական սուրբ հավատի տարածման, Ավետարանի սուրբ և սրբարար սկզբունքների քարոզության գործը: Դրանով է, որ ազգերը կդառնան բարոյական առողջ հիմքերի վրա վերականգնվող ազգեր: Դրանով է, որ կարող ենք ձեռք բերել մեր ժողովրդի բարոյական տոկունությունն ու իսկական բարեկեցությունը: Դրանով է, որ կարող կդառնանք առաջքն առնելու օտար

Երկու հովվապետները Մոսկվայի պատրիարքարանում

Մոսկվայում կառուցվելիք «Քրիստոս-Փրկիչ» եկեղեցու մանրակերտի մոտ

և մոլորեցուցիչ քարոզություններին, որոնք փորձում են մեր հավատացյալների կյանքը խռովել և քրիստոնեական ճշմարտություններից հեռացնել: Առօրյա հացի նման այդ գործակցությունը կարևորություն է ստացել այս օրերին:

Մենք անձնապես և երկար տարիներից ի վեր ծանոթ ենք Ձերդ Եղբայրության, ինչպես նաև Ռուս Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Սինոդի պատվարժան անդամներից և մեր հոգևոր եղբայրներից շատերին: Անձնական բարեկամության այդ զգացումը եթե գիտենանք շաղախել մեր հասարակաց առաքելության հետ, այն ատենն շատ ավելի առատ և ընտիր արդյունքներ ձեռք կբերվեն Տիրոջ այգու մշակության մեր քրիստոսատուր առաքելության անդաստանում:

Նման գործակցությունը պետք է առավել լայն տարածք գտնի և նույն եղբայրական ոգով ու ներդաշնակ ջանքերով ծավալվի ընդհանուր քրիստոնեական Եկեղեցու և ողջ աշխարհի հետ մեր հարաբերությունների մարզում, մասնավորաբար միջեկեղեցական (Էկյումենիկ) հարաբերությունների այս ժամանակաշրջանում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայ Եկեղեցու գլխավոր մյուս Աթոռների և ողջ աշխարհում, Հայաստանից մինչև Միջին Արևելք և Եվրոպայից մինչև Ամերիկաները, ու Աֆրիկեից մինչև Ծայրագույն Արևելք, տարածված իր բոլոր թեմերի սերտ լծակցությամբը պատրաստ է այդ գործակցությունը հառաջ տանել Ռուս մեծ Եկեղեցու հետ սիրո, եղբարության, հարգանքի և հասարակաց պարտավորության սկզբունքներից առաջնորդված:

Ահա լրանում է երկրորդ հազարամյակը և բացվելու է երրորդը: Հայց. Եկեղեցին նշելու է իր պաշտոնական հիմնադրության կամ հայոց պետության կողմից քրիստոնեության ազգային կրոն հռչակման 1700-ամյակը: Մենք ապասում ենք, որ բոլոր քրիստոնեական Եկեղեցիները, և նրանց շարքում և առաջին կարգի վրա Ռուս Օրթոդոքս Եկեղեցին, լինեն մեզ հետ միասնական: Միասնական, որպեսզի շուրջ երկու հազար տարիներ քրիստոնեական հավատքը Հայաստանում կենդանի և ստեղծագործ պահած մեր Եկեղեցու դարավոր վկայությունը դառնա վերանորոգության ուժ մեր հայ ժողովրդի համար և առ Աստված գոհաբանության առիթ՝ մեր բոլոր քրիստոնեական քույր Եկեղեցիների համար:

Ահա թե ի՛նչ մտքերով, զգացումներով, որամադրություններով և առաջադրություններով նայում ենք ներկային և ապագային՝ միշտ մեր համոզումը խարսխելով Պողոս Առաքյալի խոսքի վրա, որն ասում է. «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» (Հռոմ. Ե 5), և մեր ներշնչման ուժն ստանալով մեր Տեր Հիսուս Քրիստոսից, որ ապահովեցնում է մեզ՝ ասելով. «Հանապաք քո կեցուցին զքեզ» (Մատթ. Թ 22):

Թող Տիրոջ ամենազոր Աջն ու ամենատես Աչքը առաջնորդեն մեզ բոլորիս, որպեսզի մենք ևս կարենանք առաջնորդել մեր ժողովուրդներին «ի վայրի դալարուջ եւ առ ջուրս հանգստեան» (Սաղմ. ԻԲ 2):

ԳԱՐԵԳԻՆ Ա
Ծայրագույն Պատրիարք և
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ընդունելության վերջում տեղի ունեցավ նվերների փոխանակություն: Ալեքսեյ Բ Պատրիարքին Վեհափառ Հայրապետը նվիրեց Ս. Էջմիածնի պատկերը կրող հուշանվեր, իսկ Ռուսաց Պատրիարքը Հայոց Հայրապետին ընծայեց գավազան և սափոր:

Կեսօրից հետո Հայոց Հայրապետն այցելեց այն վայրը, ուր կառուցվում է Ռուսաց մեծագույն Սմենսափրկիչ եկեղեցին: Ինչպես ներկայացրեց Ալեքսեյ Պատրիարքը, եկեղեցին պայթեցվել է ստալինյան բռնապետության տարիներին, 30-ական թվականների սկզբին և այժմ վերստին բարձրացող տաճարը ապաշխարանքի խորհուրդ ունի իր մեջ: Դիտելով կառույցը, Վեհափառ Հայրապետը Ռուսաց Պատրիարքին տեղեկացրեց, որ մինչև 2001 թվականը Մայր Տաճարում կկատարվի նաև Երևանում՝ ի նշանավորումն քրիստոնեության պետական ընդունման 1700-ամյակի:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Նույն օրը, երեկոյան, «Մետրոպոլ» հյուրանոցում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանի կողմից կազմակերպվեց հյուրընկալություն: Այդ օրը Հայոց Հայրապետի օրհնությունը ստանալու էին եկել պետական պաշտոնական բարձրաստիճան գործիչներ, նախարարներ, արվեստագետներ, գործարար մարդիկ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ «ՄԵՏՐՈՊՈԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՍՐԱՀՈՒՄ
(14 հունիսի 1995 թ.)

Այսօր, արդեն երրորդ անգամն ըլլալով մեկ օրվա մեջ, ես եղբայրական հանդիպում կունենամ Նորին Սրբության հետ: Առաջին երկուքը եղան ռուսական շրջանակի մեջ, Ռուս Պրավոսլավ Եկեղեցվո կեդրոնի մեջ և երկրորդը եղավ Նորաշեն նոր կառուցվող եկեղեցիի մեջ և այս երրորդը ավելի իմ սրտիս քաղցրորեն կխոսի, որովհետև Նորին Սրբությունը մեծ հյուր է հայ ժողովրդի համար, այստեղ Մոսկվայում:

Ռուսական Օրթոդոքս Եկեղեցվո և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և ամեն հոգևոր կեդրոնը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարաբերությունները այսօր նոր փայլ կստանան: Այստեղ ես կողջունեմ նաև բոլոր մեր այն եղբայրները, որոնք մուսուլմանական կրոնքին կպատկանեն: Մենք եղանք հյուրը Նորին Սրբություն Պատրիարք Ալեքսեյ Երկրորդի և մեր այդ հանդիպումը ունեցավ պատմական նշանակություն ոչ միայն երկու Եկեղեցիներու փոխհարաբերության ներտացմանը համար, այլ նաև այս տարածաշրջանի՝ հատկապես Կովկասյան շրջանի մեր եղբայրությունը և խաղաղության հանդեպ մեր պարտականությունը կատարելու առաքելության մեջ: Նորին Սրբությունը, մենք անձնապես և Ադրբեջանի իսլամ ժողովրդին պետը եղող շեյխ Ալլահ-շյուքյուր Փաշա-զադեն միասնաբար աշխարհին և համայն Ռուսաստանին և ամբողջ այս երկիրներու մեջ տարածվող հասարակությանը ցույց տվեցինք, որ մենք՝ կրոնքի սպասավորներս խաղաղության առաքյալներ ենք: Ես հատուկ շնորհակալություն կհայտնեմ Նորին Սրբու-

Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսի Բ-ն Վեհափառ Հայրապետին է հանձնում Ռուս Եկեղեցու «Անդրեաս Առաքյալի» անվան բարձրագույն շքանշանը

Ծաղկեղսակի զետեղում Անհայտ զինվորի գերեզմանին

թյանը այս գեղեցիկ գաղափարը ունենալու և գայն հատակ կերպով ի գործ դնելու համար:

Ես մեկ ամիս առաջ, առաջին անգամը ըլլալով իմ կյանքի մեջ, այցելեցի Արցախ ևահանգը և համոզվեցի, որ մեր ժողովուրդը այնտեղ կցանկա խաղաղություն և ոչ թե պատերազմ:

Երկրորդ խոսքս այսօր այն է, որ իմ գերագույն աստիճանի ուրախությունը կուզեմ հայտնել այն սքանչելի երևույթի մասին, որ ես տեսա Մոսկվայի մեջ այսօր, հետմիջօրեին, երբ տեսա Ս. Ամենափրկիչ եկեղեցիի վերաշինության սքանչելի գործը: Ասիկա շատ գեղեցիկ բան է, և կնշանակե, որ քրիստոնեական հավատքը ժամանակով չի չափվի և քրիստոնեական հավատքը անցյալին չի պատկանի, կենդանի է այդ հավատքը և նոր եկեղեցիներու ծնունդ կուտա այսօր:

Իմ խոսքս ձեզի է, հարազատ արյունակից, հավատակից, անվանակից եղբայրներ և քույրեր, Մոսկվայի հայ զավակներ: Այս առաջին այցելությունս է միայն, տակավին ուրիշ առիթներով պիտի այցելեմ ձեզի: Եվ կուզեմ, որ դուք այս երկրին մեջ, Մոսկվայի, այնքան կեդրոնական նշանակություն ունեցող քաղաքին մեջ արժեցնեք ձեր հայությունը նոր վկայություններով և դուք ալ գաք այն օրին, երբ մենք միասին դնենք նոր եկեղեցիի հիմնաքարը այս քաղաքին մեջ: Այս առիթով կուզեմ իմ գնահատանքս հայտնել բոլոր այն աշխատանքներուն, որ այստեղի առաջնորդը՝ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, իրեն օգնականներին հետ միասին առաջ կտանի, Աստված զինք հզորացնե: Շնորհակալության և գնահատանքի խոսք նաև մեր Հայաստանի Հանրապետության դեսպան պրն. Մկրտումյանին և դեսպանատան ամբողջ անձնակազմին, որ զորավիգ կանգնեցավ Սրբազանին՝ կատարեց և կկատարե տակավին իր գերագույն աստիճանի պարտականությունը հանդեպ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Աստված ծաղկյալ պահե Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ամուր զարգացման կյանքի մեջ դնե մեր նորահաստատ Հայաստանի Հանրապետությունը և Աստված նորացնե բարեկամությունը ընդմեջ Հայաստանի և Ռուսաստանի, ընդմեջ Ռուսական Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների:

Երեկոյան ժամը 9.30-ին Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Ալեքսեյ Բ Պատրիարքի նստավայր-վանք, որտեղ հոս Ուղղափառ Եկեղեցու պետը գնահատանքի ջերմ խոսքեր ասաց Հայոց Հայրապետին Մոսկվա կատարած այցելության առթիվ և պարգևատրեց Նորին Սրբությանը Ռուսական Եկեղեցու բարձրագույն՝ ԱՆԴՐԵՅ ԱՌԱՔՅԱԼԻ շքանշանով: Դանիել Մակովսկու երկրորդ կարգի շքանշաններով պարգևատրվեցին Վեհափառ Հայրապետի շքախմբի եպիսկոպոսները, իսկ վարդապետները արժանացան Դանիել Մակովսկու երրորդ կարգի շքանշանների:

Գարեգին Ա Կաթողիկոսն իր կարգին Ալեքսեյ Բ Պատրիարքին պարգևատրեց Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով, որ Վեհափառ Հայրապետի կատարած առաջին պարգևատրությունն էր, նաև անդրանիկ շքանշանը, որ տրվում էր հոգևոր գործչի:

Մոսկվա մայրաքաղաքը ամենուր հիացական վերաբերմունքով էր դիմավորում Հայոց Հայրապետին: Երբ հոգևորականների թափորը հունիսի 15-ի առավոտյան շարժվեց դեպի Ս. Հարություն հայկական եկեղեցի, Գարեգին Ա Կաթողիկոսին մեծարանքով ողեկցում և աջը համբուրելու էին գալիս նաև ազգությամբ ոռւս մարդիկ: Երգեհոնի հոգեպարար երաժշտության ներքո

Հայոց Հայրապետը ներկայանում է իր հոտին, ինչում է աղոթքը: Հայ և ռուս հավատացյալները նույն եկեղեցում էին՝ նույն խոհին ու զգացումին հաղորդակից: Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը բեմ է հրավիրում Նորին Սրբությանը: «Ես եկել եմ, որ ձեզ հաղորդեմ Սուրբ Էջմիածնից բխող հավատքի անդիմադրելի ուժը,—ասում է Վեհափառ Հայրապետը,—ամուր կեցիր, ժողովուրդ, քո քրիստոնեական հավատքի վրա: Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ՝ վերանորոգվեցեք: Քանզի դժվարություն՝ չի նշանակում հուսահատություն՝ վերանորոգվեցեք: Քանզի դժվարություն՝ չի նշանակում հուսահատություն և հուսահատություն իրար հետ այնպես են, ինչպես ջուրն ու կրակը»:

Էջմիածնից ժամանած հոգևորականները միանում են իրենց Հայրապետին և երգում «Էջ Միածին» շարականը: Հանդիսավոր այս պահից մեծապես տպավորված և համբուրելով Հայրապետի Աջը, հավատացյալները դուրս են գալիս եկեղեցուց:

ԱՅԼԱԶԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Այնուհետև տեղի ունեցան կարևոր գործնական հանդիպումներ պետական ղեկավարության հետ: Գարեգին Կաթողիկոսին հյուրընկալում են Մոսկվայի փոխքաղաքապետ Վ.. Ռեսինը, որից հետո Նորին Սրբությանը ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի նախագահ Իվան Ռիբկինը: Ջերմ զրույցների ընթացքում քննարկվեցին Ռուսաստանի հայ համայնքի կացությանը և բարեկամ ժողովուրդների փոխգործակցությանը վերաբերող կարևորագույն խնդիրներ:

Երեկոյան տասնյակ լրագրողների մասնակցությամբ տեղի ունեցավ Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի մամուլի ասուլիսը, որի ընթացքում Հայոց Հայրապետը պատմեց մոսկովյան իր շրջագայության և հանդիպումների մասին, պատասխանեց լրատվական գործակալությունների ներկայացուցիչների, թղթակիցների հարցերին:

Հուզիչ էր նույն օրը, երեկոյան, Գրողների Կենտրոնական Տանը կայացած հանդիպումը հայ համայնքի հետ:

«Ես եկել եմ զանգը հնչեցնելու՝ արթնացե՛ք. ինչի համար ենք ապրում,—իր հոտի հետ խոսեց Հայրապետը,—մենք բոլորս պարտք ունենք հայրենիքի հանդեպ, և պարտականության ձայնը զգացողը Աստծու ձայնը լսած կլինի»: Գարեգին Կաթողիկոսը հայրենիքին զորավիգ դառնալու միջոց համարեց «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամին զորակցումը: Հանդիպումը մեծ հոգում առաջ բերեց մոսկվաբնակ հայորդիների շրջանում: Նրանք լսեցին և տեսան նրան, ում սպասում էին՝ իրենց Հոգևոր Հոր, Հայոց Հայրապետին:

«ՄԵՆՔ ՄԵԿ ԵՂԱԾ ԵՆՔ ՄԵՐ ԴԺՎԱՐՈՒԹՅԱՆՑ ՄԵՋ, ՀԻՄԱ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐԱՐ ԳՈՐԾԱԿԻՑ ՊԻՏԻ ԸԼԼԱՆՔ»

Հունիսի 16-ին շարունակվեցին պաշտոնական ընդունելությունները: Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին ընդունեց Ռուսաստանի Դաշնության համապետական ժողովի Դաշնային Խորհրդի նախագահ Վլադիմիր Շումեյկոն: Ջերմ զրույցի ընթացքում շոշափվեցին երկու ժողովուրդների ներ-

Վեհափառ Հայրապետը ՀՀ դեսպանատանը դեսպան Յ. Մկրտումյանի
եւ Ասողիկ Սրբազանի հետ

Հրաժեշտի պահ

կա տնտեսական կացության և հոգևոր արժեքներին վերաբերող հարցեր: Ռուսաստանի պետության բարձրաստիճան պաշտոնյան իր գնահատանքի խոսքն ուղղեց հայ ժողովրդին և նրա հոգևոր պետին: Պատասխան խոսքում Նորին Սրբությունը մասնավորաբար ասաց. «Իսրայել կգնահատեմ այն գաղափարը, որ տնտեսական հիմքերեն ավելի գաղափարական հիմքերն են, որ ազգի ամրության խարիսխը կկազմեն: Մեր Եկեղեցիները կոչված են այնպիսի առաքելության, որ քրիստոնեական հավատքով առողջ ենթահող ստեղծեն տերությունների մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելեն ետք առաջինը Ռուսաստան գալուս պատճառը կբացատրեմ այն հավատքով, որ ունիմ երկու ժողովուրդներու սերտ գործակցության հանդեպ:

Ալեքսեյ Բ Պատրիարքի հետ 30 տարիներու ծանոթներ ենք: Ռուս Եկեղեցու Սինոդի անդամներն ալ ինձ ծանոթ են: Հավատքի վերզարթոնքը գիս կհիացնե այս երկրին մեջ: Իբրև Հայ Եկեղեցի պիտի ջանանք մեր նպաստը բերել Հայաստանի Հանրապետության ծաղկման»:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Վեհափառ Հայրապետն ավելացրեց. «Մենք մեկ եղած ենք մեր դժվարության մեջ, հիմա խաղաղության մեջ իրար գործակից պիտի ըլլանք»:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սրանով ավարտվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Ռուսաստան: Ինչպես նշվեց Ալեքսեյ Բ Պատրիարքի և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հումյուհիկեի մեջ, այցը չափազանց մեծ կարևորություն ուներ միջեկեղեցական հարաբերությունների սերտացման առումով, քանզի եղբայրական հարաբերությունների զարգացումը քրիստոնյա երկրների և Եկեղեցիների միջև այսօր անհրաժեշտ է, քան երբևէ: Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիները պատրաստ են սատարել միմյանց խաղաղության հաստատման և մարդկության բարօրության ծառայելու սուրբ գործում:

Հունիսի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի մաղթանքներով ճանապարհեցին Մինսկի և Բելառուսի միտրոպոլիտ Ֆիլարետը, Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Յուրա Մկրտումյանը, հոգևորական այլ գործիչներ և դեսպանատան աշխատակիցներ:

«Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Գրիգորիս և Գեորգ սրբազանները, միաբան հայրեր, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի դեսպան Ա. Ուռնովը, Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Շ. Գարամանուկյանը: Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի մեջ Վեհափառը դիմավորվեց միաբանների, հոգևոր ճեմարանի սանների և պաշտոնեության կողմից: Տեղի ունեցավ գոհաբանական աղոթք: Բսպրի գալուստյան խոսք ասաց Հուսիկ սրբազանը: Վեհափառն ամփոփ խոսեց իր հովվապետական այցելության մասին:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԻ ՄԱՍԻՆ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն 1995 թվականի հունիսի 12—16-ը պաշտոնապես այցելեց Ռուս Ուղղափառ Եկեղեցի:

Հունիսի 12-ին Գարեգին Ա Կաթողիկոսը և Նրան ուղեկցող անձինք ժամանեցին Մոսկվա: Օդանավակայանում մեծարգո հյուրին դիմավորեցին Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ն, Սուրբ Սինոդի անդամները և Ռուս Ուղղափառ Եկեղեցու այլ բարձրաստիճան հոգևորականներ: Նույն օրը Ալեքսեյ Բ և Գարեգին Ա Պատրիարքները հանդիպում ունեցան Ռուս Ուղղափառ Եկեղեցու Պետի պաշտոնական նստավայրում՝ Ս. Դանիլովյան վանքում:

Հաջորդ օրը, հունիսի 13-ին, Գարեգին Ա Կաթողիկոսը և Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը ծաղկեպսակ զետեղեցին Անհայտ Զինվորի գերեզմանին, Մոսկովյան Կրեմլի պատի տակ:

Նույն օրը տեղի ունեցավ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ի, Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի և Կովկասի ժողովուրդների Վերին կրոնական խորհրդի նախագահի, Ադրբեջանի մահմեդականների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահ-շյուքյուր Փաշա-զադեի հաղթաղարար հանդիպումը: Հանդիպման ընթացքում ընդունվեց և ստորագրվեց միասնական մոսկովյան հայտարարություն, որի տեքստը կցված է սույն հաղորդագրությանը: Խաղաղարար հանդիպման ավարտին երեք կրոնական Առաջնորդները հանդես եկան զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առջև:

Հունիսի 14-ին Գարեգին Ա Կաթողիկոսը այցելեց Ս. Դանիլովյան վանքի Ս. Երրորդության տաճար և այլ եկեղեցիներ, ինչպես նաև շինարարական հրապարակ՝ Ամենափրկիչ Եկեղեցու վերականգնման վայրում:

Նույն օրը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ն, ի պատիվ մեծարգո հյուրի, ընդունելություն կազմակերպեց Ս. Դանիլովյան վանքի իր նստավայրում, իսկ Հայ Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը ընդունելություն կազմակերպեց «Մետրոպոլ» հյուրանոցում:

Այցի պաշտոնական ծրագիրն ավարտվեց նույն օրվա երեկոյան Գարեգին Ա և Ալեքսեյ Բ Պատրիարքների հանդիպումով՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի աշխատանքային նստավայրում: Այդ հանդիպման ընթացքում Ալեքսեյ Բ Պատրիարքը Գարեգին Ա Կաթողիկոսին պարգևատրեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգևով՝ **Ս. Անդրեաս Առաքյալի** շքանշանով, իսկ Նրան ուղեկցող եպիսկոպոսներին, հոգևորականներին ու աշխարհականներին՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու շքանշաններով ու մեդալներով: Իր հերթին Գարեգին Ա Կաթողիկոսը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Բ-ին պարգևատրեց Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն պարգևով՝ **Ս. Գրիգոր Լուսավորիչ** շքանշանով:

Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների Պետերի հանդիպումների ընթացքում քննարկվեցին միջեկեղեցական համագործակցության և ժամանակակից հասարակության հիմնահարցերի լուծման մեջ միասնա-

կան ծառայության հարցեր: Երկու Պետերը միախորհուրդ էին բազմադարյա եղբայրության անսասանության մասին իրենց վկայության մեջ, որի հանգույցները հինուց ի վեր կապում են Հայ և Ռուս Եկեղեցիները, որոնք շատ մոտ են միմյանց իրենց մշակույթով և հոգևոր ժառանգությամբ: Այս եղբայրության ամրապնդմանը և լիակատար միության ձեռքբերման համար ճանապարհների ստեղծմանը նպաստում է հաջողությամբ ընթացող աստվածաբանական երկխոսությունը Ուղղափառ և Հին Արևելյան Եկեղեցիների միջև:

Երկու Եկեղեցիների Պետերը վկայեցին, որ իրենց պատմական բնակության երկրներում ապրող քրիստոնյաների եղբայրական համագործակցությունն այսօր անհրաժեշտ է, քան երբևէ, քանզի միայն նման համագործակցության մեջ կարող են մեծ արդյունքներ ձեռք բերվել Հայաստանի և ԱՊՀ մյուս երկրների ժողովուրդների միջև բազմակողմանի կապերի ամրապնդման գործում: Նաև հատկապես ընդգծվեց, որ երկու Եկեղեցիների հովիվներն ու զավակները, համագործակցելով մահմեդականների և բարի կամքի տեր բոլոր մարդկանց հետ, կարող են և պետք է աշխատեն իրենցից կախված ամեն ինչ՝ Ղարաբաղի հիմնահարցից ծագած կործանարար հակամարտությունը, կովկասյան տարածաշրջանի այլ հակամարտությունները և բոլոր այն իրավիճակները հաղթահարելու համար, որտեղ մարդկանց միջև եղած թշնամանքը դեռևս տիրում է աշխարհում: Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիները պատրաստ են միմյանց օգնելու՝ հասարակության մեջ խաղաղության, ճշմարտության, գթասրտության ու կառուցողական առաքելությունների իրականացման, մարդկանց բարօրության համար իրենց բազմաճյուղ ծառայության մեջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԱԼԵՔՍԵՅ Բ
Պատրիարք Համայն Ռուսիո

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԱՅՑԸ

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ



Հուլիսի 28-ի առավոտյան, դուրս գալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինը հովվապետական իր հինգերորդ այցելությունը կատարեց՝ այս անգամ Հայաստանի հյուսիս-արևելյան մասում գտնվող Գուգարաց աշխարհ՝ ուղեկցությամբ ուխտավորաբար Սուրբ Էջմիածնում գտնվող Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի, հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի և բարեշնորհ Սարգիս սրկ. Բոյաջյանի:

Ժամը 10-ին Գուգարաց թեմի առաջնորդանիստ Դիլիջան քաղաքի մուտքին Վեհափառ Հայրապետին ջերմորեն ընդունեցին թեմի առաջնորդ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, հոգևոր դասի, թեմական խորհրդի, քաղաքային և շրջանային իշխանությունների ներկայացուցիչները:

Մատուցված աղն ու հացն օրհնելուց և ճաշակելուց հետո, Վեհափառ Հայրապետը և իրեն ուղեկցող անձինք հրավիրվեցին քաղաքային մշակույթի տան դահլիճ, ուր, հակառակ աշխատանքային օրվա եռուզեռին, հավաքված էր հոծ բազմություն՝ հայցելու Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Թեմական խորհրդի անդամների, քաղաքապետի և սրբազան հոր ողջույնի և բարիգալստյան խոսքերից հետո, Նորին Սրբություն իր հայրական պատգամն ուղղեց տեղի ժողովրդին՝ կոչ անելով լծվել հայրենաշինության և եկեղեցաշինության սրբազան գործին:

«Սիրելի առաջնորդ Գուգարաց թեմի, գերաշնորհ Տ. Արսեն Արքեպիսկոպոս Բերբերյան, սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան քաղաքագլուխ, թեմական խորհրդի անդամներ, քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ և թանկագին զավակներ Հայոց ազգի, որ ձեր կյանքն ապրում եք բնության այս գեղեցիկ ծոցում՝ Դիլիջանում,

Առաջին հերթին ձեր քաղաքի մտավորական կյանքի, մշակութային կյանքի սիրտը եղող կենտրոնի մեջ եմ ես նախ իմ շրթները բացում որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Փառք և գոհություն եմ ընծայում Աստծուն, որ ինձ շնորհեց այս պահը՝ ձեզ հետ լինելու, ձեզ հետ հաղորդվելու, ձեր կապվածությունը մեր Եկեղեցուն, մեր քրիստոնեական հավատքին, մեր հայրենիքին իմ երակների տրոփի մեջ զգալու:

Այս առավոտ, ժամը 8-ին, ես գնացի Մայր տաճար Սուրբ Էջմիածին, մեր բոլորի սրբություն սրբոց եղող հոգևոր կենտրոնում աղոթք արեցի առ Աստված, որ իմ հովվապետական անդրանիկ այցելությունը Տերն Ինքը օրհնի և շնորհի, որ այս այցելությունը դառնա ինձ համար զորության մի նոր աղբյուր՝ բոլորիդ համար հոգեկան վայելքի և քրիստոնեական հավատքի ամրացման, մեր Եկեղեցու, ձեր բոլորի հոգիների մեջ ներգործության մի գեղեցիկ առիթ:

Ողջունում եմ ձեզ բոլորիդ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Եվ երբ այսպես դուք հավաքվել եք ճերմակ մազերով մեր ավագ և չափահաս մինչև տի երիտասարդ և մատղաշ սերնդի ներկայացուցիչներով, ես ձեր բոլորի մեջ տեսնում եմ անցյալից եկածը, բայց անցյալով չպարփակված ու անցյալի չվերածված մեր ամբողջական հայկական կյանքի մանրանկարը: Մենք այսօր մի խտացյալ մասնիկն ենք այն դարավոր ազգի կյանքի, որի ժառանգորդը լինելու պատիվը և պարտքը ունենք մեր արյան տուրքով, մեր ծագումով, մեր անցյալով, մեր հավատքով, մեր լեզվով, մեր գրականությամբ, մեր արվեստով՝ այն բոլորով, որ մի ազգ կդարձնի քաղաքակիրթ ազգ և ոչ թե միայն մի ցեղ, մի ժողովրդի գումար:

Ազգը հավաքական հոգի է. ես ձեզ չեմ ճանաչի անհատապես, դուք ինձ չեք ճանաչի անհատապես: Ով ինչ անուն ունի, ես չգիտեմ, բայց ձեզ բոլորիդ ճանաչում եմ, որովհետև հաղորդություն ունենք մեկ հոգիի, պատկանում ենք մեկ այն ժառանգության, որ լեզուն է, որով խոսում եմ ձեզ հետ, այն հավատքն է, որ բաժանում եմ ձեզ հետ, այն կապվածությունն է մեր հայրենիքին, որ բաժանում ենք միասին: Այս ամենը եթե չլինեն, մենք ո՞վ ենք: Նոր Ջուղայում, որտեղ ես առաջնորդ եմ եղել ժամանակին երկու և կես տարիներ, մի գեղեցիկ խոսք եմ կարդացել վանքի թանգարանում: Դուք տեղյակ եք որ Շահ Աբասը երբ հայերին տարավ Պարսկաստան տասնյոթերորդ դարի սկզբին, այնտեղ նրանք Զայենբերուդ գետի եզերքին տարածվեցին գաղթականների նման, բայց տաճարներ կառուցեցին: Քանի երեք տաճարներ կառուցեցին սքանչելի գեղազարդումով՝ վայելչություն ու հոգեկան ազնվություն հաղորդելով բարձրացող պատերին:

Այնտեղ մի փոքրիկ թանգարան կար, այդ թանգարանի մուտքին մի տոմար կար՝ տպավորությունների մի մատյան, որում մի հայ գրել էր հետևյալ տողերը. «Երբ ես այս թանգարանից ներս մտա, այսինչ այսինչյանն էի և քառասունյոթ տարեկան էի, հիմա, որ դուրս կելնեմ այս թանգարանից՝ հազար տարեկան եմ, և ես հայ եմ»: Իր փոքրիկ ինքնությունը, իր եսը մոռացել էր, որովհետև շաղախվել էր մեր մշակույթի արժեքներով, այդ սքանչելի նկարներով, արձաններով, ձեռագրերով: Տեսել էր այն ձեռագիրը, որին տասնեերեքերորդ դարում հայ մարդը շունչ էր հաղորդել, այդ շունչը ներթափանցել էր նրա մեջ այն օրը, երբ ինքը այդ թանգարանն էր եկել: Եվ ես էլ ինձ զգում եմ այն տարիքին, որին իմ ազգն է, ոչ թե տարիների, այլ դարերի գումարով:

Սիրելինե՛ր, մենք այսօր մեր Եկեղեցու և մեր ազգի ու մեր հայրենիքի պատմության մեջ ապրում ենք մի նոր դարաշրջան: Այսօր ամեն մի հայ երբ մի հայացք նետի անցյալին, պատմությանը և նայի ներկային

Վեհափառ Հայրապետը օրհնում է ներկաներին

Աղոթքի պահ

պատմության ոսկեյակի միջից և դրա միջից նայի ապագային, ի՞նչ պիտի զգա, և պիտի ասի. **ՓԱՌՔ ՔԵԶ ՏԵՐ, ՀԱՂԱԳԱՍ ԱՄԵՆԱՅՆԻ ՓԱՌՔ ՔԵԶ ՏԵՐ, ՈՐ ՏՎԵՑԻՐ ՄԵԶ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՕՐԸ:**

Բոլորդ էլ գիտեք, որ շատ քիչ ժամանակներ են եղել, երբ մեր ժողովուրդը հնարավորություն է ունեցել իր ազգային կամքը, իր ազգային միտքը ազատորեն արտահայտելու: Օտար ուժերի կողմից հարձակումների է ենթարկվել: Ես կխորհեմ, և պատմաբանները, վստահ եմ, ինձ հետ համաձայն կլինեն, որ ավելի հնություն ունենք մենք հողի տակ, քան հողի վրա: Եկել են, քանդել են, տարել են, կողոպտել են, բայց չեն կարողացել մեր հավատքը մեր հոգու միջից դուրս պոկել, չեն կարողացել մեր հողի անկախության իրավունքը մեզնից խլել: Դա՛ է մեր հարստությունը, և այսօր ամեն մեկը մեզնից պիտի անդրադառնա, որ ինքը բախտավոր է: Իմ հայրը այդպես բախտավոր չմեռավ: Երազեց իր հայրենիքը օտար երկրների մեջ, բայց Աստված ինձ, ձեզ, բոլորիս շնորհ արեց, որ տեսնենք այն, որ շատերի համար դարձել էր կարծեք այլևս անհավատալի: Յոթանասուն տարիների սովետական իշխանությունը մի այնպիսի ընդարմացում էր տվել մեզ բոլորիս, որ մենք դրսում, արտասահմանում էլ կարծեք չէինք հավատում, որ մի օր կգա: Բայց հույսը չէինք կտրել բնականորեն մեր արտի միջից, և այսօր ազատ, անկախ, ինքնիշխան, ինքնական մի հայրենիք ունենք, որի մեջ ազատորեն վերածաղկում է մեր Եկեղեցին, Հայոց դարավոր Եկեղեցին:

Երկու հիմնական իրողություններ ուզում եմ ձեր ուշադրությանը հրավիրել իմ այս առաջին խոսքի միջից, որ ուղղում եմ ձեզ: Երեկ ես մի ուրիշ գեղեցիկ օր ապրեցի իմ կյանքում: Առաջին անգամն էր, քառասունչորս տարիների իմ հոգևորական կյանքումս, որ ես ներս էի մտնում Հայոց աշխարհի, Հայոց Հանրապետության խորհրդարան: Այն ներկայացուցիչների առջև էի կանգնել, ում ժողովուրդն է ընտրել, և ոչ թե վերևից է պարտադրվել մեզ, մենք ենք ընտրել, մենք՝ մեր ազատական կամքով, մեր մտքով, մեր խղճով: Երբ կանգնեցի Ազգային Ժողովի անդամների դիմաց, Հանրապետության մեր վեհամշուք նախագահի հետ միասին, և նա իր խոսքն ասելուց հետո, ես, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, իմ աղոթքն արի և իմ խոսքն ասեցի՝ զգացի մի բան, որ հիմնական էր՝ այն, որ այլևս ոչ ոք մեզանից, եթե մի սխալ բան տեսնի մեր կյանքում, ուրիշին, օտարին չմեղադրի: Առաջ, երբ մի բան լավ չէր գնում մեր երկրում, ասում էինք, «մենք ի՞նչ անենք, վերից են անում, հյուսիսից է գալիս հողմը, մենք ինչ կարող ենք անել»: Բայց այսօր մենք ենք տերը և ծառան: Այս երկու բառերը ես զուգորդում եմ իրար հետ: Ոչ ոք այս հողի տերը կարող է լինել՝ առանց այս հողի ծառան լինելու: Աստված այս հողը տվել է մեզ, որպեսզի այդ հողը մշակենք, դրանից կյանք հանենք և Աստված փառավորենք: Մշակույթով, ստեղծագործությամբ, արվեստով այս աշխարհը մենք ծաղկեցնենք և մարդկության դիմաց կանգնենք հպարտությամբ, պատվով և Աստուծո առաջ՝ հավատարմությամբ:

Սիրելիք, ի՞նչ է այս հողը: Առեք Դիլիջանի այս գեղեցիկ բլուրներից, ծաղկավետ և կանաչազարդ բլուրների միջից մի բուռ հող և գնացեք մի բուռ հող վերցրեք Զիմբաբվե կոչված երկրից Աֆրիկայի և տարեք այս երկու հողերը, դրեք լաբորատորիայի մեջ և ասեք այդ լաբորատորիայի մարդին. ի՞նչ է այս հողերի տարբերությունը, ևս որտեղի՞ց պիտի գիտենա,

թե այս հայկական հող է և մյուսը՝ աֆրիկյան. հողը՝ հող է ամենուր: Հապա ինչո՞ւ այդ հողը հայկական է, որովհետև այնտեղ հայու քրտինքն է խառնվել, հայու ձեռքի հունարն է այդ հողի միջից շենք կառուցել, քարի վրա խաչքար է դրել, կենդանու կաշվից մագաղաթ է պատրաստել և ձեռագիր կերտել, թղթի վրա գիր է գրել, տաճար է կագնել՝ Հաղարծին, Գոշավանք, Օձուն, Սանահին, Հաղպատ... Մենք այդ հողո՞վ ենք հպարտանում, թե՞ այդ հողից, քարից դուրս բերած այն հոգեկան արժեքներով ենք հպարտանում, որոնք չեն անցնի, որոնք մահ չունեն: Մարտավորական հոգևոր արժեքները ո՛չ ժամանակով կկաշկանդվեն և ո՛չ էլ նրանք ժանգ կկապեն, միշտ կխոսեն: Մեսրոպ Մաշտոցը հինգերորդ դարում ապրեց: Նա Տարոն գավառի Հացեկաց գյուղից էր: Ո՛չ Տարոնը կա հիմա, ո՛չ Հացեկաց գյուղը, բայց իր գիրը կա, այդ գրով արտահայտված ապրումների հոսանքը կա մեր ժողովրդի մեջ: Այդ հոսանքն է, որ ինձ, ձեզ, մեր հոգևորականներին, բոլորիս, արտասահման, Հայաստան, Գուգարք, Այուցյաց աշխարհ, Արցախ, բոլորը իրար է կապում: Այդ ոգին՝ ոսկի թելը, հավատարմություն Աստծուն, Եկեղեցուն, հայրենիքին և ազգին, դրանից ավելի ի՞նչ ունենք:

Ապրենք ութսուն տարի, ուտենք, խմենք, քեֆ անենք, հետո՛ ինչ. հող ենք, խոտ ենք որպես մարմին: Աստվածաշունչ մատյանում, Սաղմոսաց գրքում, ասվում է. «Մարդոյ որպէս խոտոյ աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ, շնչէ ի նմա հողմ և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա». մարդու կյանքի օրերը խոտի նման են, կծաղկի, հողմը կփչի, կթառամի և չես իմանա՝ եղել է, թե չի եղել: Օրե՛րը մարդու, ոչ թե մարդո՛ւ ինքը: Սաղմոսերգուն ասում է. «Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր», իր օրերը խոտի նման են, բայց եթե այդ մարդը իր կյանքի ընթացքում մի այնպիսի գործ անի, որ իր զավակներին ոգի փոխանցի, այդ մարդը չի մեռնի, այդ մարդը կմնա իրրև ապրում, գաղափար, հավատք, նախանձախնդրություն, տեսիլք. կմնա իր զավակների միջից, և այդպես են մնացել մեր հայրերը մեր մեջ: Ես չէի լինի այն, ինչ որ եմ այսօր, եթե իմ մեծ մայրը ինձ Աստվածաշունչը պատմած չլիներ, եթե իմ գյուղի ուսուցչուհին ինձ Այբ, Բեն, Գիմը սովորեցրած չլիներ: Հետևաբար, մենք պետք է կարողանանք մեր կյանքում կարևորին արժեք տալ, անկարևորին, փծուն, ճղճիմ, ոչինչ եղող բաներին մեծ կարևորություն չտալ: Ի՞նչն է մնայունը և ի՞նչն է գնայունը. մնայունին պետք է կառչած մնանք մենք բոլորս: Հավանաբար կարդացել եք կամ հենց թերևս այս սրահում արտասանվել է այն գեղեցիկ բանաստեղծությունը Խաչիկ Դաշտենցի, որի մեջ երբ քեռին կալը մշակելիս օդին էր տալիս ցորենը և հողմն էր տանում, տղան դառնում էր քեռուն՝ ասելով, թե քեռի ջան, հողմին ես տալիս: Պատասխանում է քեռին, «հարդը գնում է, ցորենն է մնում»: Հետևաբար կյանքի մեջ հարդի բաժին կա. ուտել, խմել, քեֆ անել, հագնվել՝ թող լինեն, բան չունեմ ասելու, բայց դրանք մեր կյանքի նպատակը չլինեն, այլ հայրենիքը արժեցնելը: Նոր պետություն ենք կազմել, բայց պետություն կազմելով պետություն չի պահվի, պետք է շարունակենք համայնական, ընդհանրական շահերը վեր դասել մասնական, տեղական, ժամանակավոր, վաղանցուկ արժեքներից:

Իմ վերջին խոսքն այսօր հետևյալն է. մեր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, մի նոր դարաշրջան է մտնում Հանրապետության անկախության այս նոր շրջանին: Ժամանակ կար, և դուք ինձնից լավ գիտեք, որ չէիք կարող այսպես ազատ եկեղեցի գնալ, չէիք կարող Հիսուս Քրիս-

տոսի մասին լսել ո՛չ ռադիոյից, ո՛չ հեռատեսիլից, ո՛չ էլ գրքերից: Աթեիստական պրոպագանդան այնքան ուժեղ էր, ծաղր ու ծանակ էին անում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին: Այսօր աշխարհում ոչ մի երկիր, ոչ մի ժողովուրդ չկա, ուր Նրա անունը և վարդապետությունը տարածված չլինի: Երևակայեք, իմ սիրելի եղբայրներ, քույրեր, մտիկ արեք իմ այս պարզ խոսքին. աշխարհումս մի ազգ կա, որ կարող է ասել, որ ինքը առաջինն է եղել, որ քրիստոնեությունը ընդունել է որպես պետական կրոն: Դա իմ ու ձեր պաշտելի ազգն է: Բացեք միջազգային բառարանները, մեր հանրագիտարանները և նրանց մեջ Արմենիա-Հայաստան բառի տակը պիտի գտնեք. «Հայերն են եղել առաջին ժողովուրդը, որ քրիստոնեությունը ընդունել են պետականորեն»: Լավ, եղել է, Տրդատ արքան հռչակել է, Գրիգոր Լուսավորիչը քարոզել է, Մեսրոպ Մաշտոց գիրը տվել է, Աստվածաշունչը թարգմանվել է, եղե՞լ է, եղե՞լ է անցյալում: Դրանո՞վ պիտի հպարտանանք միայն: Այսօր ի՞նչ ենք անում: Այդ հավատքը հիմա ինչպե՞ս ենք ապրում, ինչպե՞ս ենք արժեցնում մեր այսօրվա կյանքում: Դրա մեջ է մեր արժեքը և ո՛չ թե միայն մեր հայրերի արածի մեջ: Դա նրանց փառքն է: Նրանք Աստուծո կողմից ընդունված են: Նրանք ո՛չ մեր աղոթքի պետքն ունեն, ո՛չ մեր փառաբանանքի: Բայց մենք նրանց պետքն ունենք, նրանց հոգուն, նրանց գաղափարին, նրանց ընվիրման, նրանց հերոսության: Եթե այս հերոսությունը, սրբությունը չլիներ, մեր հայրենիքը մեր ձեռքերում կլինե՞ր այսօր: Եթե նրանք, ովքեր իրենց կյանքն ամբողջ չընծայեին մեր ժողովուրդի հոգու մշակման համար, ընդրանք, ովքեր իրենց արյունը չտային հանուն այս հողի պաշտպանության, մենք այսօր Հայաստան կունենայի՞նք: Եթե հիմա ունենք, նրանց սուրբ կոտակն է:

Մենք այսօր պարտք ունենք նրանց թողածը ոչ թե պահել, պահպանել պահածոյի պես, այլ մշակել, ծաղկեցնել, առավել արժեքներով պտղավորել: Եթե ես իմ հորից ժառանգված ունեմ մի կտոր հող և այդ հողը թողնում եմ խոպան ու անմշակ, ես իմ հոր արժանի զավակը չեմ: Եթե նա ինձ թողել է մի կտակ, ես պարտավոր եմ այդ կտակը արժեցնել իմ կյանքով, իմ քրտինքով, իմ աշխատանքով: Դուք լսե՞լ եք, արդյոք, այն պատմությունը, որ մի հայր մի օր իր զավակներին կանչել է իր մահից առաջ և նրանց ասել. «Ես մի գանձ ունեմ և այն ես էլ չգիտեմ, ճիշտ որտեղ եմ պահել, բայց մեր պարտեզում եմ պահել»: Նրա մահից հետո զավակները գնում են և չեն իմանում, թե որտեղ է պահվել այդ գանձը: Սկսում են փորել, փորփրել, տակնուվրա անել հողը և չեն գտնում գանձը, բայց գարնանը տեսնում են, որ անմշակ ու խոպան հողը ծաղկել և դարձել է մի այգի: Հողը արժևորվել է, որովհետև մշակվել է, փորվել է, մարդու ձեռքն է խառնվել հողին, քրտինքն է խառնվել հողին և հողից կյանք է դուրս եկել: Թողնել հողը այնպես, ինչպես ստացվել է՝ դա իմաստ չունի, դա կլինի «երկիր աներևույթ և անպատրաստ», ինչպես ասում է Աստվածաշունչ մատյանը:

Իմ առաջին խոսքը անդրանիկ Հայրապետական այցելության առիթով թող լինի ձեզ բոլորիդ համար սրտից բխած այն խոսքը, որ վերանորոգության, վերարժևորման, վերաշխուժացման, վերագիտակցության, մեր ինքնության, մեր արժանապատվության վերարժևորման հրամայականով ապրենք մեր կյանքը, մեր նոր անկախացյալ, վերանկախացյալ այս հայրենիքում, և երբ գան ձեր զավակները մի քանի տասնյակ տարիներ անց, կարողանան ասել ձեզ համար. ապրե՛ք, հայրեր, ապրե՛ք, մայրեր, որ մեզ այսպիսի ժառանգ թողեցիք, այս հայրենիքի կյանքը՝ ազատ, անկախ Հանրապետությամբ

և ազատ ու աշխույժ և գործուն մեր Եկեղեցիով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, իր բոլոր թեմերով, բոլոր հոգևորականներով, մեր բոլոր մտավորականներով և՛ մշակութային, և՛ քարոզչական առաքելությամբ:

Սիրելի արքազան, աճապարանքով միայն շուրջ չորս ամիսներ են, որ ես այս ծանր պարտականությունը ստանձնել եմ իմ ուսերին Աստուծո տնօրինությամբ և մեր ժողովրդի կամքով: Ես պարտք եմ համարել ճանաչել մեր ժողովրդին, և ճանաչվել մեր ժողովրդից: Մի հովիվ չի կարող իր հոտին ծառայել, եթե չճանաչի այդ հոտը, այդ ժողովուրդը: Իմ այս առաջին այցելությունը ճանաչման, հաղորդության պահ նկատեցեք: Գուգարքի թեմը ևս հոգևազմ թեմ է: Առաջներում չկար այս թեմը: Երջանկահիշատակ, լուսահոգի Վազգեն Ա մեր նախորդի օրոք կազմվեց: Գիտեմ, դժվար օրերի միջից կանցնեք, բայց ես մի հիմնական սկզբունքի եմ հավատում: Նա, ով դժվարությանց միջից չանցնի, չի կարող մեծ գործ անել:

Դժվարությունները մեր ժողովրդի համար հաղթահարելի են: Ինչո՞ւ մեր հայրերը կարող էին շինել Գոշավանք, ինչո՞ւ մեր հայրերը կարող էին շինել Հաղարծին, Օձուն, ինչո՞ւ նրանք կարող էին հսկա եկեղեցիներ կառուցել ոչնչից, և մենք այսօր չկարողանանք պահել: Ի՛նչն է մեր թերությունը՝ մեր անտարբերությունը, մեր ծուլությունը, մեր անձնակենտրոն, նեղ, փոքրիկ, ճղճիմ հաշիվներով և արժեքներով ապրելու փորձությունը: Հետևաբար, ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ. եթե ուզում եք ձեր հոգեկան առողջության համար, ձեր բարոյական բարձրության համար, ձեր ազգի պատվի համար, ձեր երկրի շինության համար, ձեր զավակների առողջ դաստիարակության համար գործել, ձեր եկեղեցիներից մի՛ հեռանաք:

Կիրակիները առե՛ք-տարե՛ք էս երեխաներին եկեղեցի, թո՛ղ «Հայր մեր»-ն ասեն, թո՛ղ խաչ հանեն, թո՛ղ «Առաւօտ լուսոյ»-ն երգեն, թո՛ղ «Փառք ի բարձունս»-ը երգեն, և դրանցով իրենք գիրենք լիցքավորված և արժեքավորված զգան իբրև հայ: Դրա համար այսօր ես կոչ եմ անում բոլորիդ, և որտեղ որ գնամ, այս նույն հաղորդությամբ ուզում եմ մեր ժողովրդին այս կոչը անեմ. եկե՛ք վերանորոգվենք: Եթե անկախացանք, ազատություն ունեցանք, չենք կարող լինել այն, ինչ որ էինք այդ թվականից առաջ: Հետևաբար, պետք ունենք ներքին հոգեկան, ազգային, կրոնական դարձի, ներքին պայծառակերպության:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մեկնեց Գոշավանք: Այստեղ ավանդական աղն ու հացն օրհնելուց, սաղմոսների և աղոթքների ընթերցումից հետո իր հայրական օրհնությունը բաշխեց վանքի շուրջ հավաքված հավատացյալներին, որից հետո այցելեց Մխիթար Գոշի դամբարան և հարգանքի տուրք մատուցեց մեծանուն վարդապետի հիշատակին: Միջնադարյան Հայաստանի հոգևոր վեմերից մեկը եղած այս վանքում, որի վարդապետարանի համբավը տարածվել էր ողջ Հայոց աշխարհում Արևելյան Հայաստանից մինչև Կիլիկիա, մեր ազգային-հոգևոր կյանքում այդ ավանդների նորոգության կարևորությունը շեշտեց Վեհափառ Հայրապետը հավաքված ժողովրդին ուղղված իր խոսքում.

«Սիրելի՛ հավատավոր, հավատացյալ զավակներ Հայ Եկեղեցու, որ ապրում եք այս շրջանում և եկել եք այսօր այս Սուրբ Եկեղեցին,

Իմ կյանքում առաջին անգամ լինելով՝ ես գտնվում եմ այս արբավայրում և խոր շնորհակալություն և գնահատանք եմ հայտնում Գուգարաց թեմի

արքազան առաջնորդ Արսեն արքեպիսկոպոսին, որ այս հովվապետական այցելության առիթը ստեղծեց: Իր հրավերով ես այսօր եկա և երկու բան տեսա առաջին իսկ րոպեից, երբ հանդիպում ունեցա աչստեղ ձեզ հետ: Տեսա քարը, որ տեսանելի է մարմնեղեն աչքերով, և տեսա հավատքը, որը կարելի չէ տեսնել մարմնեղեն աչքերով, բայց կարելի է դա զգալ քարերի միջից: Բայց և՛ քար, և՛ հավատք իմաստ ունեն, որովհետև մեր կյանքի համար են: Երկրորդ բանը, որ տեսա և՛ մտեղեն, մարմնեղեն աչքերով, և՛ հոգեղեն աչքերով, այդ դուք եք, այս շրջանի բնակիչներդ:

Բնականորեն աշխարհում գրված առավել քան չորս միլիոն հայեր կան, որոնք ճայում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին. դրանցից ոմանք, շատերը, եթե ոչ բոլորը, ուզում են, որ մենք Սուրբ Էջմիածնից օրհնությունը տանենք, նրանց բաշխենք մեր կյանքով, մեր խոսքով և մեր գործով: Այսօր ձերն է կարգը, այսօր հերթը ձերն է: Ինձ ասում են, թե երկար տարիներից ի վեր, եթե ոչ հարյուրամյակներից ի վեր, կաթողիկոս չի եկել այստեղ: Ահա եկա: Եկա խոնարհվելու համար նրանց հիշատակին, ովքեր այս տաճարը կանգնեցրել են որպես իրենց հավատքի ճյուրական արտահայտություն: Այս քարերից ձև են տվել, կամարներ են կապել, գմբեթ են կառուցել, որպեսզի այդ բոլորի միջից աղոթեն Աստծուն, Աստծու ներկայությունը զգան իրենց հոգիների, իրենց կյանքերի մեջ: Նա, որ կնայի այս քարերին՝ քար չի տեսնի, նրանց մեջ հավատքի ուժը կտեսնի: Հիմա մենք մեքենաներ ունենք, բարձրացնում եք քարերը մեքենաներով, էլեկտրական հոսանքով: Բա այն ժամանակ ինչպե՞ս եղավ, մեր հայրերը ինչպե՞ս էին գործում: Եթե հավատք չունենայինք, հոգի չունենայինք, ինչո՞ւ այս տաճարը պիտի շինեինք, ինչո՞ւ իրենք իրենց պիտի չարչարեին: Արեցին, որովհետև սիրեցին: Սիրեցին կրոնը, սիրեցին Եկեղեցին, սիրեցին Աստծուն և այսպես կամարներ կապեցին, որպեսզի իրենց զավակները՝ այս երեխաները, գալիք սերունդները, բոլորն էլ ունենան այս հոգեկան ուժը եկեղեցու միջից իրենց ելող:

Այս եկեղեցին և մեր սուրբ հավատքը ձեզ մոտիկ զգացեք: Եկե՛ք, մի ծունկ աղոթք արեք, մի մոմ վառեք, մի «Հայր մեր» ասեք, մի խաչ հանեք, որ Աստուծո ներկայությունը զգաք, որ սուրբ կյանքը մեր մեջ տարածվի: Ճիշտ է, յոթանասուն տարիներ ազատ չէինք մեր կրոնական պաշտամունքը կատարելու, բայց հիմա ազատ ենք, հիմա անկախ հայրենիք ենք, հիմա այլևս ոչ ոք մեզ չի կարող ասել, թե պիտի չանես այն, ինչ որ մենք ազգովին ուզում ենք անել: Հիմա մերն է կամքը: Այս հողը մերն է, այս երկիրը մերն է: Երեկ ես գնացի և բացումը կատարեցի մեր հայրենիքի ծորընտիր Ազգային ժողովի, մեր Հանրապետության նախագահի հետ միասին: Այլևս ուրիշները չեն, որ մեզ պիտի տիրեն, մենք ենք, որ պիտի տիրենք: Բայց պիտի տիրենք ծառայելով, հողը անմշակ չթողնելով, եկեղեցին որբ չթողնելով, որպեսզի մենք եկեղեցուց որբ չդառնանք: Դուք եկել եք, չեք եկել, քարերից ոչինչ չի պակասի, բայց ձեզանից մի բան կպակասի, այդ հավատքի ուժն է, **որ կպակասի:**

Այստեղ Վեհափառը, դառնալով երեխաներին, մտերմիկ շեշտով շարունակեց իր խոսքը.

Երեխեք, ձեզ մի խոսք ունեմ ասելու, ինձ լսեք: Ես էլ ձեզ նման մի փոքրիկ երեխա էի ժամանակին: Ես էլ դաշտի հողի մեջ եմ մեծացել: Ածու եմ ցանել, ջուր եմ տվել հողին, ակոս եմ բացել, էլի հողի մեջ են իմ ոտքերս քայլել: Մի խոսքով հողի զավակ եմ և հողի հետ եմ ապրել և հողից

բանջարեղեն եմ դուրս բերել, պտուղ եմ դուրս բերել, նաև ցորեն եմ կտրել, կալ եմ արել, այդ բոլորը ինձ համար շատ սիրելի գործեր են եղել: Ուզում եմ, որ դուք էլ կապված լինեք մեր հողին: Հիմա արձակուրդի ժամանակն է, ազատ եք հիմա, սեպտեմբերին դպրոց պիտի գնաք և Ս. Մեսրոպի Այբ, Բեն, Գիմ-ը լավ սովորելուց հետո աղվոր-աղվոր, գեղեցիկ, սիրուն բանաստեղծություններ պիտի սովորեք, երգեր պիտի սովորեք և ամբողջ ձեր ընտանիքների կյանքը պիտի ծաղկեցնեք այսպիսի ապրումներով. խոստանո՞ւմ եք.

Տեսե՛ք, ձեր ձայնը որքա՜ն քաղցր է, և հիմա ով է լսում ձեր ձայնը, գիտե՞ք. Մխիթար Գոշը: Նա երկնքից նայում է ձեզ և ասում. «Ես զուր չապրեցի: Ես այս վանքի մեջ գիրք գրեցի, քարոզ տվեցի, աշակերտներ հասցրի, անհավասիկ այստեղ ապրում է Գոշավանքի շրջանի ժողովուրդը»: Հետևաբար, «դայիմ» բռնեցե՛ք, ամուր բռնեցե՛ք հավատքը, և Աստված ձեր ձեռքերից շնորհքներ ծաղկեցնի, և դուք ձեր ձեռքերով հողից կյանք հանեք և դուք կարողանաք բոլորդ մեր եկեղեցին ծաղկուն պահել մեր այս նոր հայրենիքի ազատ ու անկախ պետականության շրջանում:

Ես շնորհավորում եմ ձեր գյուղապետին, շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր գյուղին են ծառայում: Միշտ ներդաշնակ եղեք, միշտ իրար սիրով մնացեք, որովհետև մենք իրար հետ չլինենք սիրով, ո՞վ մեզ հետ կլինի սիրով, ոչ ոք: Մենք շատ թշնամիներ ենք ունեցել: Մեր ուժը մեր միության մեջ է, մեր՝ իրար հետ ներդաշնակ գործելու մեջ է: Աստված ձեզ բոլորիդ պահի ամուր, ձեր բոլորի կյանքին տա նոր էջ, և դուք արժեցնեք ձեր կյանքը՝ Սուրբ Էջմիածնի գաղափարով և Սուրբ Եկեղեցու գաղափարով»:

Տեսանելի էր հուզումնախառն ուրախությունը Վեհափառ Հոր, երբ օրվա երկրորդ կեսին այցելեց Թումանյանի շրջան, որտեղ առաջին անգամ ոտք դրեց Սանահին պատմական վանք. «Ես այսօր ծուռը եմ գալիս իմ հոգու մեջ և փառք եմ տալիս Աստծուն, որ պատանեկության շրջանից եկող երազանքներիս լույս տվեց այսօր ներկա գտնվելու համար սրբաշուք այս կամարներից ներս»:

Հրաժեշտից առաջ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն բոլոր այն երջանկահիշատակ վարդապետների, միաբանների շիրիմների առաջ, որոնք ապրել, ստեղծագործել, ճգնել և աղոթել են Սանահինի վանքի աստվածաստեղծ կամարների ներքո: Խանդավառ ժողովուրդը. վայելելով իր իսկ կողմից ընտրած Սրբազնագույն Կաթողիկոսի ներկայությունն ու օրհնությունը, աջհամբույրների և ծափահարությունների ուղեկցությամբ հրաժեշտ տվեց նրան՝ խոստանալով կյանքի կոչել բոլոր խրատներն ու պատգամները վասն շինության հայրենիքի և պայծառության սուրբ Եկեղեցու: Կարծեք շարունակելով Գոշավանքում ծավալված ոգեշունչ իր խոսքը, Վեհափառն ասաց.

«Սիրեցյալ և հավատացյալ, հավատարիմ ժողովուրդ Աստուծո և զավակունք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու,

Իմ կյանքի երազներից մեկն է, որ այսօր մարմին է զգենում այս այցելությամբ Սանահնի պատմաշունչ և հոգելից այս վեհավայրում, սրբավայրում:

Ես այս պատանիների նման երեխա էի, երբ Հայոց պատմության գրքերն էի թերթատում և այնտեղ Սանահին անունը պայծառագրվում էր իմ աչքերի առաջ: Աշխարհագրականորեն հեռու Հայաստանից, Սիրիայի և Լիբանանի ափերին, մենք ապրում էինք այդ երկրներում հայությունից հեռու, բայց ի՞նչն էր, ես հարց եմ տալիս, ի՞նչն էր այն ուժը, ի՞նչն էր այն քաշողականությունը, մագնիսականությունը, որ մեզ, հակառակ աշխարհագրա-

Աղոթքի պահ

Վեհափառ Հայրապետը Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Արսեն արքեպիսկոպոսի,
Միքայել ծ. վրդ. Աջապահյանի եւ թեմական Խորհրդի անդամների հետ

կան հեռավորության, հակառակ մշակութային կյանքի տարբերության, ամբողջությամբ հոգով ու սրտով կապում էր այս հայրենի հողին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և մեր բոլոր այն վանքերին, որտեղ Աստված խոսել է մեր ժողովրդին, մեր վանահայրերին, վանականներին աղոթքների, քարոզների, գրությունների, ճգնության միջից: Դա՛ հավատքն է, հավատքը: Այն հավատքը, որ հայ մարդին ասել է տալիս. «իմ այս ձեռքը կարող եք կտրել և հողի վերածել. դա դյուրին է, բայց չեք կարող ձեռագիր մատյանը, Ավետարանը իմ ձեռքիցս պոկել»: Գրչագրող, ձեռագրող, ընդօրինակող համեստ վանականը այս հավատքով է ապրել: Սուրբ Գիրքը, Աստուծո խոսքը հավիտենական է: Մարդիկ կգան, մարդիկ կգնան, թագավորություններ կըգան, թագավորություններ կգնան, բայց Աստված, հավատք, հայրենիք, ազգ, մշակույթ, գիրք, լեզու, գրականություն՝ սրանք են, որ կմնան, սրանք են, որ կպահեն մի ժողովրդի:

Իմ առաջին խոսքով ես ծունր եմ գալիս իմ հոգու մեջ և փառք եմ տալիս Աստծուն, որ իմ մանկության կամ պատանեկության շրջանի երազին լույս տվեց այսօր: Հակառակ որ երեկո է ժամը, հոգ չէ, ներքին լույսով, հոգեկան լույսով տեսնում եմ ձեզ բոլորիդ և մեր այս պատմական, սրբաշունչ համալիրը վանական, որի անունն է Սանահին:

Եղբայրներ և քույրեր, այս օրը իմ կյանքի հարստագույն օրերից մեկն է. ահա ներս մտա այս եկեղեցուց, այսօր առավոտյան գնացի Գոշավանք, եղել եմ նաև սրանից մի քանի տարի առաջ Հաղարծին, և այս երեկո գնալու եմ Հաղպատ, վաղը այցելելու եմ Օձուն: Ես այսօր ուզում եմ գրույցի նստել ինձ և ձեզ հետ և հարց տալ.—Ի՞նչ են նշանակում այս կառույցները, ճարտարապետական գեղեցկությունները, այս կամարները, այս ոճային միությունը, այս երկնամերձ սլացքը: Ինչո՞ւ են կառուցել կամ կառուցվել այս բոլորը.—Աստծու հետ հաղորդության մեջ լինելու համար: Մեր հայրերը եթե հավատք չունենային, ինչո՞ւ այս քարերը պիտի այստեղ գետեղեին, ինչո՞ւ իրենց կյանքը պիտի վտանգեին, ինչո՞ւ այսքան հոգնություն ու տառապանք հանձն պիտի առնեին, եթե այս կառուցվածքի հոգեկան իմաստին նրանք չհավատային: «Եկեղեցին հայկական մեր մի քարի տակ գետնի, դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփա մը ունի», ասել է Վահան Թեքեյանը, ցեղասպանության ոճրից ազատված մեծ բանաստեղծը: Նա նաև ասել է.

Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս:
Եկեղեցին հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նավահանգիստ մ'է խաղաղ, ցուրտ գիշերին՝ հուր և բոց,
Ու տոթակեզ ցերեկին անտառ մըն է ստվերոտ՝
Ուր շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մոտ...
...Եվ զանգակներն են բոմբյուն, և երգն է մի՜շտ
հաղթություն...

Եվ Եկեղեցին հաղթեց: Եկեղեցին չի կարող պարտվել: «Դուռք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն», ասում է Ավետարանը (Մատթ. ԺԶ 18):

Դուք ինձնից լավ գիտեք, դուք, մանավանդ միջին և ավագ սերնդի ներկայացուցիչներդ: Ինչե՛ր արեցին, որ մեր Եկեղեցին խորտակեն: Համայնավարական յոթանասուն տարիների բռնության տակ ծաղրեցին Հիսուսին, աթեիստական քարոզչություններ արեցին, մեր եկեղեցիները փակեցին, մեր

եկեղեցիները թատրոնների վերածեցին, մեր եկեղեցիները հարդահոցների վերածեցին: Ես աչքերովս տեսել եմ, երբ եկել եմ 1960-ական թվականներին մեր հայրենիք, այն ժամանակ խորհրդային իշխանության լուծի ներքև: Բայց Եկեղեցին մնաց: Սուրբ Էջմիածնի լույսը չի կարող խավարանվել, և, ինչպես ասել է բանաստեղծներից մեկը, չես կարող լույսը թաղել: Լույսը չի թաղվում, ճշմարտությունը չի խավարվում: Կարող ես աչքերդ փակել ճշմարտության առաջ, բայց ճշմարտությունը՝ ճշմարտություն է, Աստված՝ Աստված է և Նա է ստեղծել տիեզերքը: Ոչ ոք մարդկանցից, ոչ մեկ ուժ մարդկային կարող է Աստծուն դեմ գնալ, փորձել են և խորտակվել են:

Այսօր մեր հավատքը, ազատությունը, անկախությունը հաղթել են բռնության: Մենք այլևս տերն ենք մեր երկրի: Մենք ենք ծառան այս երկրի: Այլևս մենք ենք մեր արածների պատասխանատուն: Մե՛նք ենք ընտրել մեր Ազգային Ժողովը, մե՛նք ենք ընտրել մեր նախագահը, մե՛նք ունենք մեր սեփական պետությունը, մե՛նք ինքնիշխան, ազատ, անկախ պետություն ենք աշխարհի ուրիշ պետությունների շարքում: Ոչ ոքի այսօր ծառա լինելու, ստրուկ լինելու հարկավորության տակ չենք գտնվում. **ՓԱՌՔ ՔԵԶ, ԱՍՏՎԱԾ, ՀԱՋԱՐ ՓԱՌՔ ՔԵԶ, ՈՐ ՏՎԻՐ ՄԵԶ ԱՅՍ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ ԱՅՍՔԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ ԳՈՐԾՎԱԾ 1915 ԹՎԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՓԱՌՔ ՔԵԶ, ՏԵՐ, ՈՐ ԱՐԵՎԸ ԾԱԳԵՑՐԻՐ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԸ ՄԵՐ ԲՈԼՈՐԻ ԱՉՔԵՐԻ ՄԵՋ:**

Հիմա ազատությունը վերածագեց: Մենք ազատության մեջ ենք, ազատությունը մեզ հետ է, այլևս այնպես պիտի ապրենք, որ այլևս լինենք պատասխանատու, գիտակից, մեր հայրենիքի բարիքի և մեր ժողովրդի շահերի համար: Դուք ինչքան ուզեք, չեք կարող իմ ապրումները չափել, կշռել այս երեկո: Դուք այստեղ եք ապրել, ես ուրիշ տեղ եմ ապրել, ձոր եմ եկել հայրենիք: Ահավասիկ չորս ամիսներից ի վեր գտնվում եմ իմ հայրենի հողի վրա: Չորս ամսյա Կաթողիկոս եմ: Եվ, հետևաբար, երբ գալիս, այս գյուղերի միջից եմ անցնում, երբ տեսնում եմ մեր կանաչությունը, երբ տեսնում եմ մեր ժողովուրդը հողից իր ձեռքն է խառնում և հողից կյանք է հանում, ասում եմ. փառք Քեզ, Աստված, որովհետև Դու այս ժողովրդին այս հայրենիքն ես տվել, մեր հայրերի կտակով: Այս հայրենիքը մեզ դյուրին չի տրվել: Մենք նահատակներ ենք տվել: Մենք հերոսներ ենք տվել: Այս հայրենիքի պաշտպանության համար արյուն են թափել մեր հայրերը: Մենք չենք կարող թեթև վերաբերվել, մակերեսային լինել, անտարբեր գտնվել այս հողի նկատմամբ: Սուրբ է այս հողը: Չի ընդունվում ուրիշ տեղերի հողերին, դա մեր հայրերի կնիքն է: Այս հողերի վրա մեր հայրերի քրտինքը կա և արյունը: Երկու տեսակ հեղուկ, մեկը՝ քրտինք՝ աշխատանք, մյուսը՝ արյուն՝ հավատք, այս երկրի անսասանելիության, ինչպես հիմա մեր ժողովուրդը փաստում է Արցախում: Ես գնացի Արցախ: Տեսա՛ այդ ժողովրդին: Նա կառչե՛լ է իր հողին և իր կյանքի գնով պաշտպանում է այդ հողը: Բա ինչպե՞ս կլինի: Մենք արժանապատվություն չունե՞նք: Մեր հայրերի թողածը ուրիշները գան, առնեն, կլանեն ու տանե՞ն, որտե՞ղ է մեր արժանապատվությունը, Աստծու տված ազատությունը:

Այսօր աշխատանքի օրն է: Մենք մեր հայրենիքը պիտի կերտենք սեփական ճիգերով, մեր ջանքերով: Դրսից կօգնեն մեզ, այո, բայց դրսի օգ-

ճությամբ մենք չենք կարող հայրենիք կառուցել: Մե՛ր քրտինքով, մե՛ր աշխատանքով պիտի աճենք. մեր եղբայրները արտասահմանից կարող են մեզ օգնել, բայց ճրանք մեր գործը չեն կարող անել: Ես արտասահմանից եմ գալիս և լավ գիտեմ, թե ճրանք ինչ տեսակ ծանր պարտականությունների առաջ են գտնվում: Անհավասիկ ինձ հետ է եկել, դեռ այս առավոտ Կալիֆոռնիայից ժամանած, Կալիֆոռնիայի մեր առաջնորդ Տ. Վահե արքեպիսկոպոս Հովսեփյանը, որ ինքն էլ այնտեղ աշխատում է մեր հայրենիքի համար, մեր Եկեղեցու համար, Մայր Աթոռի համար, «Հայաստան» հիմնադրամի համար, բայց իրենք էլ դպրոցներ ունեն, իրենք էլ եկեղեցիներ ունեն, իրենք էլ պարտավորություններ ունեն: Կօգնեն, այո, բայց մե՛նք պետք է մեզ օգնենք, և ինչպես ասում է ժողովրդական խոսքը. «դու ջեզ օգնի, Աստված քեզ կօրհնի»: Եթե չկարողանանք մենք մեզ օգնել, ուրիշները չեն կարող մեզ օգնել:

Վերջապես ես ուզում եմ իմ վերջին խոսքը դարձնել դեպի մեր Եկեղեցին:

Եղբայրներս, քույրերս, զավակներս, լավ իմացեք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ամբողջ աշխարհում ամենից ավելի հոգեից և լուսաճառագայթ, լույս ափող հոգևոր կենտրոն է: Ես եղել եմ Միջին Արևելքում, եղել եմ Եվրոպայում, եղել եմ Հյուսիսային Ամերիկայում, եղել եմ Ծայրագույն Արևելքում, եղել եմ Հարավային Ամերիկայում, ո՛չ մի տեղ այնպիսի սրբավայր չկա, որ խոսի 1700 տարիներից ի վեր: Հռոմում եղել եմ, բայց մեր Եկեղեցին, իբրև Ազգային Եկեղեցի, աշխարհում եղել է առաջինը, և ճրա կենտրոնն է Սուրբ Էջմիածինը: Նա մագնիսի պես իրեն է քաշում մեր ժողովրդին: Պարույր Սևակի բառերով ասած՝ նա հավատքի «անլռելի զանգակատուն է»: Հավատքն է, որ խոսում է ճրա զանգակներից, ճրա քարերից, ճրա սրբատեղերից: Եկե՛ք երբեմն, այցելեք Սուրբ Էջմիածին, և Էջմիածնի լույսը ձեր հոգիների մեջ կմնա միշտ վառ և ճառագայթուն, ձեր աչքերը կմնան վառ և կրմպեն լույսը Սուրբ Գրիգոր Լուսավորչի հավատքի:

Այսօր անհավասիկ մենք այնտեղ ունենք միաբանություն, ունենք հոգևոր դաս: Ձեր սիրելի սրբազան առաջնորդը՝ Սրսեն արքեպիսկոպոս Բեքթեքյանը, որին շնորհակալություն եմ հայտնում, որ այսօր մեզ այստեղ հրավիրելով, մի նոր առիթ տվեց, որ մեր ժողովրդին ծանոթանանք, ճանաչենք ձեզ, և դուք էլ մեզ ճանաչեք, որպեսզի հոտ և հովիվ լինենք միասին: Հայր Միքայելն էլ Էջմիածնի միաբանությունից է և այնտեղ ունենք վարդապետներ, եպիսկոպոսներ, որոնք աղոթում են, գրում են, քարոզում են, ճանապարհորդում են: Մի խոսքով՝ Էջմիածինը առաքելություն է: Նրանից լույս է ճառագայթում Հայաստան աշխարհում, Արցախում և ամբողջ Սփյուռքում: Մենք պետք է կենդանացնենք մեր Եկեղեցին: Այս քարերը օգնեցին են, այո: Բայց այս քարերը թանգարա՞ն են, գանձատո՞ւն են, որ օտարները գան և մեր հայրերը գովեն: Ո՛չ, եկեղեցի է այս: Պիտի գա՛ք կիրակի օրերը: Աղոթք պիտի անե՛ք: Շարակա՛ն պիտի երգեք: Մեր հայրերի լեզո՛ւն պիտի լսեք: Մեր Ավետարանի ձա՛յնը պիտի լսեք: Ա՛յս է այս կառուցվածքների իմաստը: Չպե՛տք է թողնեք այսպես անհնանա: Եկե՛ք, ձեռք-ձեռքի տվեք: Ճարտասպե՛տ կանչեք: Ձեր ձեռքերո՛վը սպասհատակեք, ձեր ձեռքերո՛վը ճորագեք, հապա ինչպե՞ս մեր հարերը արեցին: Ի՞նչն է պակասում մեզ: Տեխնիկական տեսակետով ավելի առաջ ենք մենք հիմա: Հավա՛տքն է պակասում մեր մեջ: Անձնական ճաճո՛ւյքը տիրապետում է մեր մեջ: Արթնանանք,

ժողովուրդ, եթե անկախություն են հռչակել, տեր լինենք, հայրենաշե՛ն ժողովուրդ լինենք, ոչ թե հայրենասեր միայն: Հայրենասիրությունը արժեք չունի, եթե հայրենաշինության չվերածվի:

Ես այսօր կոչ եմ անում ձեզ, որ զորավիգ կանգնեք սրբազանին, մեր Գուգարաց թեմի թեմական խորհրդին, ձեր հոգևորականներին: Դուք եք եկեղեցին: Եթե դուք եկեղեցի չլինեք, այս քարերը քար կմնան: Դուք եք, որ պիտի շունչ տաք այս քարերին ձեր հավատքով և շունչ պիտի առնեք այս քարերից, ձեր հայրերի հավատքից: Ահա ինչն է իմ այս անդրանիկ, առաջին հովվապետական այցելության նպատակը: Սանահինի այս շրջանի մեջ ապրող մեր սիրելի, պատվական մեր ժողովրդին կոչ եմ անում՝ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, հանուն իմ բոլոր նախորդների, հանուն իմ նախորդ երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսի, որ երկնքից այժմ հայում է մեզ վրա: Չգիտեմ, քանի կաթողիկոս է եկել այստեղ մինչև հիմա, բայց ես եկել եմ, էլի՛ կգամ, եթե Աստված ինձ կյանք տա, և եթե դուք կարիքը զգաք: Ես չեմ եղել Կաթողիկոս՝ միայն Մայր Աթոռում լինելու համար, եղել եմ ժողովրդի համար: Ընտրվել եմ ժողովրդից, գործելու համար ժողովրդի հետ և գործելու ժողովրդի համար: Այս է եկեղեցականը: Ուզում եմ, որ բոլորդ էլ նոր գիտակցության բարձրանաք: Թողնե՛ք հին սովորությունները, թողնե՛ք հին մտայնությունները: Եթե նոր անկախություն ունենք՝ նոր լինենք հոգով, հավատքով, եկեղեցաշինությամբ, ազգասիրությամբ և, մանավանդ, հայրենաշինությամբ:

ՀԱՂՊԱՏԻ ՄԵՋ

Մեկ հազարամյակից ավելի՝ 992 թվականից, Տիրոջ խոսքն է քարոզվել Հաղպատավանքում: Մի քանի տասնամյակների հարկադրյալ լռությունից հետո, 1990 թ. ապրիլի 15-ին վերաբացվեց և այս Սուրբ Տաճարը, որ Բանի սպասավորությանը նվիրվեցին տեղի հոգևոր սպասավորները:

Իջնող երեկոն արդեն փռում էր մութի իր թևերը, երբ Վեհափառ Հայրապետը հասավ Հաղպատավանք, որտեղ հավաքված շրջակա գյուղերի բնակիչներին ուղղելով իր խոսքը ասաց.

«Այս Սուրբ Տաճարի մեջ իմ խոսքը սկսում եմ Աստվածաշունչ մատյանից ներշնչված և մեր Եկեղեցու Ժամագրքից վերցված հետևյալ տողով. «Փառք Քեզ Աստուած, Փառք Քեզ, Յաղագս ամենայնի Տէր Փառք Քեզ»: Ես առաջին անգամ լինելով իմ կյանքում, գտնվում եմ այստեղ: Քիչ առաջ մեկ ուրիշ լեռնային գագաթի վրա էի՝ հանդիպակաց կողմը՝ Սանահնի վանքում, ուր հիշեցի այն խոսքերը, որոնք մեր եկեղեցում հաճախ երգում ենք, երբ անդաստան ենք անում. «Օրհնեսցի եւ նախանձամեալ պահեսցի Հիւսիսային կողմն աշխարհիս՝ վանքս, անապատս, քաղաքս, գիւղս և բնակեալք ժողովուրդս ի սմա»: Ի՞նչ գեղեցիկ ճշմարտություն է դա: Հյուսիսային կողմն աշխարհիս Հայոց վանքերի այս առատությունը, վանքերի այս խոսքը կենդանի, քարեղեն խոսքը, բայց հոգեղեն ճշմարտությունների փոխանցման խոսքը ձեզ համար անգին հարստություն է:

Դուք, ամեն անգամ այս քարերին նայելիս, նրանց միջից Քրիստոս եք տեսնելու, մեր հայրերն եք տեսնելու, և դրա համար ես այստեղ պիտի մեջբերեմ մեր Սուրբ Ավետարանի այն խոսքը, որ ասում է. «Եթե այժմ մարդին



Գյումրի վտանգում է

լռեն, քարերը պիտի աղաղակեն» (Ղուկ. ԺԹ 40): Ուրիշներ եկան և հայ ժողովրդի գավակները լռեցրին իրենց հավատքի մեջ, բայց չկարողացան կապել քարերի լեզուն, նրա միջից եկող հավատքը մնաց մեր ժողովրդի համար հոգեկան զորության, տոկունության և հաղթականի աղբյուր և գաղտնի ուժ: Ինչպես ասում էի Սանահինի վանքում. ոչ թե միայն դուք այս լեռների վրա, այլ նաև ձեր նույն արյունը ունեցող, նույն անունը ունեցող, նույն անցյալի ժառանգը ունեցող և նույն ապագային նայող, արտասահմանում, աշխարհի չորս կողմերում ապրող հայերի համար Հաղպատը անուն չէ միայն, խո՛սք է կենդանի:

Մենք Հաղպատը ճանաչում ենք առանց տեսնելու. առաջին անգամն է, որ տեսնում եմ, հապա ինչպես է, որ ճանաչում եմ: Ճանաչում եմ, որովհետև այստեղ այնպիսի հոգևորականներ են ապրել, որոնք մեր ազգի, հայ ժողովրդի հոգուն, խոսքին, հավատքին անունդ են տվել, կյանք են տվել, Աստված են թարգմանել մեր ժողովրդին: Իրենց կյանքը մատաղ են արել մեր ժողովրդի անուցումի, հոգեկան պատրաստման և բարոյական ազգային տոկունության համար: Գրքեր ենք կարդացել, մեր վանականների սուրբերը մանք ուսասվանդել ենք միշտ դպրոցներում: Հաղպատը միայն աշխարհագրական չափերով չի չափվի, հոգին մետր չի ճանաչում, սահման չի ճանաչում:

Նրանք այստեղ են գործել, բայց իրենց ապրումներն ու գաղափարները աշխարհով մեկ տարածվել են, որովհետև ճշմարտություններ են քարոզել: Աստծով են խոսել, ոչ թե իրենք իրենց ուզած են ասել: Հետևաբար, դուք, հաղպատցի սիրելի ժողովուրդ, այսօր ես առաջին անգամ լինելով, եկել եմ ձեզ հայրապետական անդրանիկ այցելությունը տալու: Սրանից միայն չորս ամիսներ առաջ էր, որ Աստուծո կամքով և մեր ժողովրդի որոշումով ես ընտանձեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսության ծանր պարտավորությունը մեր հայրենիքի և հայ ժողովրդի կյանքի ամենադժվարին օրերին, որպեսզի Սուրբ Էջմիածնից, Մայր Աթոռից Աստված ինչ որ տվել է ինձ, ինչ որ տվել է մեր միաբան եղբայրներին, հոգևորականներին, այդ բոլորը մենք ընծայենք մեր սիրեցյալ ժողովրդին:

Ցանկանում եմ, որ դուք գգաք ձեր հոգու մեջ, որ Սուրբ Էջմիածինը այնտեղ չէ, ձեր սրտերի մեջ է: Ձեր աղոթքների մեջ հիշեցեք Մայր Աթոռը: Մի՛ մոռանաք, որ այնտեղ, Սուրբ Էջմիածնում 301 թվին Հայոց Տրդատ թագավորը քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Գրիգոր Լուսավորիչը հավատքը տարածեց, ժողովուրդը մկրտվեց և այդպես եղան, մնացին, շարունակեցին, տոկացին և հաղթեցին իբրև քրիստոնյա ազգ: Աշխարհով մեկ մարդիկ գիտեն այդ պատմական իրողությունը: Բայց այս երեկո ես ուզում եմ մի քանի բառով միայն ասել ձեզ, որ մենք անցյալով չպետք է միայն հպարտանանք: Մենք պետք է ապրենք այսօրվա կյանքով, այլևս անցյալի, դարերի մասին չպետք է խոսենք միայն, այլ պիտի փորձենք այս հայրենիքը, որ մի նոր ճանապարհի մեջ է մտել, այս հայրենիքը, որ ստրկական, օտար իշխանությունից դուրս է եկել, խորհրդային ճնշող վարչակարգից դուրս է եկել և այսօր ազատ-անկախ պետություն է դարձել, նոր վերանկախացյալ պետություն է եղել, սատարենք նրան:

Հիմա՛ է, որ մենք մեր հայրենիքը պիտի շինենք, եկեղեցիները պետք է շենանան, երիտասարդներից հոգևորականներ պիտի դուրս գան: Ժամանակին մի կին ասում էիք, որ ձեզ արգելվում էր, չէին թողնում: Ճիշտ է: Բայց հիմա ո՞վ չի թողնի: Այս երկրի և՛ տերն եք, և՛ ծառան: Ծառան լինելով՝ տերն եք:

Եվ դրա համար ես կոչ եմ անում, որ այս երիտասարդների միջից նոր նոր անձեր գան, գնան Սուրբ Էջմիածին, ուսանեն, զարգանան և գան, մեր ժողովրդի մեջ ծառայեն իբրև հոգևորական: Քիչ առաջ, Սանահինում մի մայրիկ մոտեցավ ինձ աղաչական ձայնով, գրեթե արտասվալից աչքերով ասաց. «Վեհափառ, այս եկեղեցում ամեն կիրակի թող պատարագ լինի»: Այո՛, բայց մարդու պետք ունենք: Նոր ենք դուրս եկել այն սոցիալիստական թմրությունից, թմբիրից: Շարժվենք, բարձրանանք, փոխվենք, նորոգվենք, աղոթք սովորենք, «Հայր մեր»-ը երգել սովորենք, բայց չասենք, թե օտարը մեզ արգելում է. ոչ ոք չի արգելում: Մենք հիմա պետք է արժեցնենք մեր անունը մեր Եկեղեցու մեջ, մեր հայրենիքի մեջ և մեր ազգի պատմության մեջ:

Երեք օր առաջ գնացի Խոր Վիրապի վանք և նայեցի Արարատին՝ մեր խորհրդանիշ լեռան, անմահության հուշարար Արարատ լեռան և այնտեղ հիշեցի մի խոսք, որ Ավետիք Իսահակյանն է ասել.

Արարատի ծեր գագաթին դար է եկել վայրկյանի պես ու անցել,
Անհուն թվով կայծակների աւրն է բեկվել ադամանդին ու անցել,
Հերթը հիմա քոնն է անա:

Մերն է, մենք էլ նայենք ծեր գագաթին, և մեր նայվածքն այնտեղ ներշնչման աղբյուր թող լինի մեր հայրենիքի բարիքի համար, մեր հայրենիքի շինության համար: Մի խոսքով՝ մենք նորանանք, վերանորոգվենք, վերստին հայանանք, վերստին քրիստոնեանանք և ազգի, Եկեղեցու ու հայրենիքի շահը ամեն բանից վեր դասենք: Այս պիտի լինի մեր նշանաբանը: Ի՜նչ մեծ ուրախություն էր ինձ համար երեկ, երբ առավոտյան ժամը 10-ին գնացի Հայոց նորընտիր Ազգային ժողովի կենտրոն, մեր պառլամենտ, և այնտեղ աղոթքով, Աստուծով, Քրիստոսով բացումը կատարեցի մեր գերագույն օրենսդրական մարմինը եղող Ազգային ժողովի՝ Հայաստանի Հանրապետության վսեմաշուք նախագահի հետ միասին: Դա պատմական օր էր: Այսուս մենք մեր սեփական իշխանություն ունենք՝ մեր կողմից, ժողովրդի կողմից ընտրված: Մենք մեր պետությունը պիտի արժեցնենք, որպեսզի կարողանանք հաղթահարել այսօրվա դժվարությունները: Ինձ մի ասեք, երբեք մի ասեք. Վեհափառ, Դուք մեր դժվարությունները չեք իմանում: Ես լավ եմ հասկանում, ձեզ հետ եմ ապրում: Ես էլ նեղությանց միջից եմ անցնում: Դժվարության առաջ վայ այն մարդուն, որ կընկրկի, կնահանջի, ո՛չ: Դժվարությունների առջև քաջ կերպով կենալ և կամքով, տեսիլքով, հավատքով հաղթելու մասին մտածել, ոչ թե գանգատվել, դժգոհել, բամբասել: Սրանք մի ազգի և իմ ազգին չեն մեծացնի. մեծացնողը գործն է, գո՛րծը:

Եթե օտար մեկը հարցնի ձեզ, մի ռուս կամ մի ուրիշ մարդ, ինչո՞ւ հայ եք, ի՜նչ պիտի ասեք: Հայ ենք հայրենիքով, հայ ենք Եկեղեցիով, հայ ենք Գրիգոր Լուսավորիչով, հայ ենք Վարդանանքով, հայ ենք Մեսրոպ Մաշտոցով, հայ ենք Գրիգոր Նարեկացիով, հայ ենք Հովհաննես Սարկավագ վարդապետով, հայ ենք մեր վարդապետներով, մեր հերոսներով, մեր սրբերով, մեր գրքերով, մեր երաժշտությամբ, մեր բոլոր ճարտարապետական ձեռնարկներով:

Այս պատճառով, իմ առաջին պատգամը փոխանցելով ձեզ Սուրբ Էջմիածնից, հորդորում եմ, որ մենք համախմբվենք մեր Եկեղեցու շուրջ, մեր հայրենիքի և մեր պետության շուրջ և դառնանք պետական մտածողություն

ունեցող ազգ, նորոգյալ Եկեղեցի, վասն փառացն Աստուծո, վասն պայծառության Եկեղեցվույս Հայաստանեայց և վասն շինության և բարեկարգության հայրենեայց մերոց Հանրապետության Հայաստանեայց, ամեն»:

Հյուրասիրություն կատարվեց Հաղպատավանքի նորոգյալ շենքում: Առաջնորդ Սրբազանը և քաղաքային իշխանությունները մեծ ջանք էին ի գործ դրել նորոգելու և բնակելի դարձնելու համար վանքի բնակարանային բաժինը:

Հաջորդ օրը, հուլիսի 29-ին, առավոտյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը վերստին իր խոսքն ուղղեց Հաղպատավանքում հավաքված ժողովրդին.

«Սիրելի ժողովուրդ Աստուծո, դուք չեք կարող երևակայել, թե ինչ ապրումների ենթարկվեցին մեր հոգիները, երբ այսօր մենք այս դարավոր եկեղեցու կամարների ներքո վերստին վերակոչեցինք մեր մտքերում, մեր հոգիների մեջ վերապրեցրինք հիշատակը երկու սրբերի, որոնք ապրել են առաջին դարում, երբ տակավին ո՛չ Հաղպատի վանքը կար, ոչ Սանահինի վանքը: Մեր Հայաստան աշխարհը այն ատեն տակավին քրիստոնյա չէր: Հիսուս Քրիստոս, մեր Երկնավոր Վարդապետը, որ Պաղեստինում քրիստոնեությունը բերեց և ժողովրդին քարոզեց, մեր Երկնային Վարդապետը՝ Աստվածորդին, Նա ընտրեց տասներկու առաքյալներ, տասներկու մարդիկ, որոնց սովորեցրեց քրիստոնեության սկզբունքները, թե ինչպես պիտի ապրել կյանքը, որ մարդ երջանկություն ունենա:

Այդ տասներկու առաքյալներից մեկն էր Թադեոս անունով մի անձ, որ կոչվում էր Հուդա Հակոբյան: Նա Հիսուսի Հարությունից հետո եկավ մեր աշխարհը և քարոզեց: Մենք այդ ժամանակ ունեինք մի թագավոր, որի անունն էր Սանատրուկ: Դուք, աշակերտներդ, Հայոց պատմության դասերին սովորել կամ սովորելու եք այդ թագավորի անունը: Նա ուներ մի աղջիկ, որի անունն էր Սանդուխտ: Եվ երբ Թադեոս առաքյալը քարոզում էր, նրա քարոզը այնքան գրավիչ էր, այնքան դուր էր գալիս, որ հետևում էին ուշադիր: Այդ հետևողների մեջ էր և թագավորի աղջիկը՝ Սանդուխտը: Առաքյալի քարոզությամբ նա հեռացավ հեթանոսական կրոնքից: Կուռքերը պաշտելու, արևը պաշտելու, կրակը պաշտելու հեթանոսական սովորություններից հրաժարվեց և հետևեց Ավետարանի քարոզություններին, Ավետարանի ճշմարտություններին, որոնք Քրիստոս բերել էր աշխարհ, և Իր Առաքյալը՝ Թադեոս, բերել էր Հայաստան աշխարհ: Այս պատճառով էլ մեր Եկեղեցին կոչում ենք Առաքելական:

Այս առաքյալը շատերին քրիստոնեության դարձրեց, և նրանց մեջ Սանդուխտը շատ մոտից հետևեց նրան քայց հայրը՝ թագավորը, զայրացավ, թե ինչպես կլինի, որ իր աղջիկը թողնի իր հայրերի հեթանոսական կրոնքը և հետևի մի առաքյալի քարոզությանը: Կանչեց իր մոտ աղջկան և ասաց. թո՛ղ այս նոր վարդապետությունը, մի՛ հետևիր այդպիսի ուսումներին, դու քո հայրերի պաշտած կուռքերը պաշտի: Նա ասաց. «Ով հայր, քեզ շատ եմ սիրում, ես քեզնից չեմ ուզում հեռանալ, քայց ճշմարտություն է ասա, այս քարերը չեն աստվածները, Աստվածը ստեղծիչն է երկրի, Աստվածը ստեղծիչն է մարդկանց: Հետևաբար, ինչպես ճշմարտությունը թողնեմ՝ այս է ճշմարտությունը»: Եվ հետո քանի անգամ հայրը փորձեց համոզել նրան,

բայց նա չհամոզվեց, որովհետև ճշմարտությունը գտել էր: Լույսը տեսնողը չի կարող այլևս խավարի մասին մտածել, լույսը գեղեցիկ է, լույսը ճանապարհ ցույց կտա: Սանդուխտ կույսը լույսը գտավ՝ իմացական լույսը, հոգևոր լույսը, կյանքը ինչպես ապրելու գաղտնիքը գտավ: Թագավորի զինվորները նրան սրով սպանեցին և նաև սպանեցին Թադեոս առաքյալին:

Պարսկաստանի հյուսիսը մի վանք կա. ես շատ եմ եղել այդ վանքում, դա Թադեոս Առաքյալի վանքն է, որտեղ նահատակվել է: Պատմիչը ասում է, որ երբ Թադեոս Առաքյալի գլուխը կտրեցին, հանկարծ մի ժայռ բացվեց և նրա մարմինը ժայռի մեջ ամփոփվեց: Սանդուխտ կույսն էլ հանդիպակաց բլուրի վրա նահատակվեց. երկուսի գերեզմաններն էլ կան. տարին մեկ անգամ գնում են մարդիկ հուլիսին, Վարդավառին, գնում են այնտեղ ուխտի և հպվում են այն ժայռին, որի մեջ կա նրա մարմինը:

Սիրելի հավատացյալներ, ի՜նչ գեղեցիկ երևույթ, որ մենք այսօր, մենք բոլոր հոգևորականներս գտնվեցինք այս տաճարի մեջ և երկու հազար տարի վերապրեցինք այսօր շարականների միջից: «Քեզ պարծի այսօր սուրբ եկեղեցի», ասում է շարականագիր վարդապետը: Ո՜վ Սանդուխտ կույս, քեզնով մենք կհպարտանանք, որ դու ճշմարտության համար քո կյանքը տվեցիր. տեսեք մոտավորապես հազար ինը հարյուր տարի է անցել նրա նահատակությունից, բայց մենք ամեն տարի այս օրը երգում ենք այս շարականները և աշխարհի չորս ծագերում, որտեղ որ հայ լինի, այդ հավատքով է վերստին նորոգվում:

Այդպես դուք էլ եկեք եկեղեցի, ամփոփվեցեք ձեր մեջ և ասեք. «Ով Տեր, փառք Քեզ, որ մեզ կյանք տվեցիր, ողորմիր, և մեր երեխաներին Քո շնորհներով մեծացրու»: Եվ այսպես փառք տալուց հետո խնդրեք, որպեսզի Աստված նորոգի մեր կյանքը, երջանկացնի և հայրենիքը ամուր պահի, մեր ազգը ամուր պահի. ձեր եկեղեցի գալով է, որ եկեղեցին եկեղեցի կլինի: Հիսուս ասել է. եթե երեք հոգի իրար մոտ գան իմ անունովս, ես նրանց մեջ կապրեմ: Դուք, անվավասիկ, երբ հավաքվեք Հիսուսի հավատքով, այդ հավատքը կվերանորոգվի ձեր մեջ և այս քարերը վերստին շունչ կառնեն: Երբ մենք այստեղ շարականները երգում էինք, ես մտածում էի. շուրջ հազար տարի այս վանքը մեզ նման հավատացյալներով է լցվել: Վարդապետներ, քահանաներ, եպիսկոպոսներ այստեղ երգել են այս շարականները:

Մենք, որ հիմա վերստին նոր կյանք ենք ապրում, եկեք շենացնենք մեր կյանքը՝ գալով եկեղեցի, օգնելով սրբազան առաջնորդին, օգնելով քահանային: Երեխանե՛ր, ինչ լավ բան կլինի, եթե դուք սովորեք եկեղեցու արարողությունները՝ «Առաւօտ լուսոյ, Արեգական արդար, առ իս լոյս ծագեա»: Ո՜վ դու լույսի առավոտ, արդար Արեգակն Հիսուս, իմ մեջս լույս իջեցրու, ես խավարի մեջ չմնամ: Այս աղոթքը «Սէր անուն Յիսուս, սիրով Քո ճմլեա սիրտ իմ քարեղէն»: Ո՜վ Հիսուս, Քո անունն է սեր, Քո սիրով ճմլի իմ սիրտը, քարեղեն սիրտս թող լցվի Աստուծո սպրումով: Ներսես Հայրապետ Շնորհալին սա գրել է ութ հարյուր տարիներ առաջ, և մենք այսօր երգում ենք: Իսկ եթե հանկարծ դադարեր մեր շրթերին հնչելուց, մենք ինչով հայ պիտի լինեինք, եթե Մեսրոպի լեզուն դադարի մեր շրթներին, մենք ինչով հայ պիտի լինենք, եթե եկեղեցու շարականները դադարեն, ինչով մենք հայ կմնանք:

Թող այս այցելությունը լինի բոլորիս համար վերանորոգման, մի նոր կյանքի առիթ, որպեսզի դուք հաճախակի գաք, մաքրեք եկեղեցին, սրբեք

եկեղեցին, աղոթք եկեղեցում, Աստուծո փայլը ձեր մեջ կա, ձեր աղոթքի ձայնը պիտի առ Աստված բարձրանա: Տեսե՛ք, այստեղ ինչ լավ գրել են Մայր Աթոռի միաբանները. «Ամեն մի ճշմարիտ քրիստոնյայի պարտքն է հաճախել եկեղեցի, մանավանդ կիրակի և տոն օրերին մասնակցելու սուրբ պատարագին»: Այս բոլորը գրվել են, և դուք պետք է կարդաք: Ի՞նչ արժեք ունի աղբյուրը, եթե ջուրը չեմ խմում: Ճշմարտությունն այս է: Եթե մենք չենք ընդառաջում, ի՞նչ կլինի, ճշմարտությունը ոչինչ կկորցնի. մենք կկորցնենք:

Մեր Եկեղեցին հոգևոր ջրի աղբյուր է, հոգևոր սննդի աղբյուր է, բայց պետք է մոտենանք, գանք, որ առնենք, ինչպես և պատարագին ասվում է. «Մատիք առ Տէր և առէք զլոյս»: Եթե չմոտենաք, չեք կարող առնել. «Ճաշակեցեք և տեսեք, զի քաղցր է»: Որտեղից կարող եք իմանալ, թե քրիստոնեությունը քաղցր կրոն է, եթե չճաշակեք, չսովորեք: Հետևաբար օրհնում եմ ձեզ այս առավոտ և իմ կյանքումս այս առավոտը երբեք չպիտի մոռանամ, որ ես այս տարի, հուլիսի 29-ին, գտնվեցի Հաղպատի վանքում, մեր սիրելի ժողովրդի այս ընտիր զավակների հետ: Աստված ձեզ օրհնի, Աստված ձեզ զորացնի, դուք էլ եկեղեցիով հպարտանաք և ճոխանաք, ամեն»:

Այնուհետև Վեհափառը մեկնեց Օձուն՝ հանդիսապետելու Սուրբ Աստվածածին եկեղեցու օծման արարողությանը, որով Աստծո ևս մեկ տան դռներ բացվեցին հավատացյալ ժողովրդին իր մեջ առնելու, միաձուլելու և տարրացնելու համար, որպեսզի հայ հավատացյալը այս թանձրացած հոգետան միջից կարողանա իր ձայնը հասցնել Աստծուն՝ զորավիգ ունենալով տաճարիս արթուն վերադիտող Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետի բարեխոսությունն ու աղոթքները: Օծման արքազան արարողությունից հետո ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, իսկ «Հայր մեր»-ից առաջ, եկեղեցու օծման կապակցությամբ, շնորհավորանքի խոսք ասաց Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը՝ քաջալերելով օձնեցիներին Է՛լ ավելի ամուր կառչելու իրենց աստվածատուր եկեղեցուն և հայրենի սրբություններին: Սուրբ պատարագից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը ծաղիկներ զետեղեց Սուրբ Հովհան Օձնեցի Կաթողիկոսի դամբարանին:

Վերադառնալով Հաղպատավանք, Վեհափառը մասնակցեց երեկոյան ժամերգությանը:

Այցելության երրորդ օրը Հաղպատավանքում ս. պատարագ մատուցեց Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը մկրտության խորհուրդը պարզ քարոզով՝ ներկայացրեց ժողովրդին, որին հաջորդեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը:

«Սիրելի հոգևոր եղբայրներ և թանկագին հավատավոր զավակներ Հայոց ազգի, որ այս շրջանի աշխարհագրական գեղեցկատեսիլ վայրի մեջ եք ապրում,

Այսօր ես բացառիկ հոգեկան վայելք ունեցա՝ այս տաճարի մեջ մատուցված պատարագով: Եկեղեցին ինքը պատարագ է: Պատարագ բառը կնշանակե ընծա, ընծայ: Քրիստոս ինքը պատարագվեց խաչի վրա, ինքն իրեն ընծայեց մեր փրկության համար. մեր հայրերը իրենց հավատքի արդյունքը եղող, իրենց ճաշակին, արվեստին հանդեսը եղող այս տաճարը կառուցեցին և ընծայեցին մեր ժողովրդին ու մեր ժողովրդի միջից՝ Աստծուն:

Այսօր, երբ այս բարեղեն պատարագի մեջ հոգեղեն պատարագը կմատուցվի, ես ծնկի կգամ Աստուծո առջև, կասեմ. «Փառք Քեզ Տեր, որ վերջապես լեզու տվեցիր այս քարերին, վերատին մեր ժողովրդի հոգու մեջ ապրեցրիր անմահության, մահվան վրա հաղթանակ տանելու հավատքի գիտակցությունը»:

Քրիստոնեությունը այն հավատքն է, որ մարդուն կտա ուժ՝ չվախենալու բոլոր տեսակի փորձանքներից, որովհետև քրիստոնյա ազգը այն է, որ կհավատա մահից հետո շարունակվող երկնային, երանական, հավիտենական կյանքին: Մեր հայրերը ի՞նչ ասեցին. մեկ անգամ ևս լսեցե՛ք. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: Եղիշե պատմիչն է գրել այս բառերը: Այն մարդը, որի իմաստը մենք չենք իմանում, դա մահ է, բայց այն մարդը, որի իմաստը հասկանում ենք, դա անմահություն է: Օրինակ. մի վանական այս վանքում, Հաղպատում կամ Սանահինում կամ Օձունում կամ Գոշավանքում կամ Հաղարծինում, երբ գրել է մի մագաղաթի վրա, Հայոց լեզուն է դրոշմել, երբ այդ լեզվի միջից ճշմարտությունն է փոխանցել մեզ, այդ մարդու մարդը մահ չէ, որովհետև այդ մարդը իր գործի միջից կանմահանա: Մահացել են նաև այս վանքի շինարարները, իրենց հավատքի վկաները այս քարերն են, բայց եթե մարդ անմահության գաղափարը կորցնի, կյանքի մեջ իսկ մեռած կլինի: Ճիշտ է, կապրի, կուտի, կըխմի, բայց կենդանիներն էլ կուտեն-կխմեն. մարդը մարդ է, երբ անմահության կհավատա, և այդ անմահությունը մագնիսի պես իր կյանքը կքաշի իրեն: Եթե մարդը այս ըմբռնումը չունենա, Աստուծո հոգին իր մեջ չունենա, Աստուծո հոգին իր մեջ չծաղկեցնի, այդ մարդը կդադարի կյանքից, այն կյանքից, որ անմահության ճանապարհն է մեզ համար:

Ուրիշ մեկ խոսք ևս հիշեցնեմ ձեզ, որ չմոռանաք, եղբայրներ, քույրեր. երբ հինգերորդ դարում մեր Հայաստան աշխարհը վտանգի մեջ էր, երբ պարսից թագավորը՝ արքայից արքա Հազկերտը, հայերին ուրանալ էր ստիպում, որ թողնեն, հրաժարվեն քրիստոնեական կրոնից և դառնան կրակապաշտ, կանչեց իր մոտ Հայաստանի նախարարներին, իշխաններին, որոնց հետ էր նաև Վարդան Մամիկոնյանը, Վահան Ամատունին, Գնունին, Խորխոռունին, Սրվանձտյանց իշխանը, և ասաց. «Դուք քաջ զինվորականներ եք, դուք Հայոց Այրուձիի ղեկավարներն եք, դուք իմ բանակի մարտիկներն եք»: Պատվական զորավարներ, նախարարներ Հայոց ազգի, ես կարդացել եմ ձեր Ս. Գիրքը, զարմանում եմ. դուք հավաքվել էք շուրջը մի Հիսուսի, որն Իր կյանքն անգամ չկարողացավ փրկել մի քանի հրեաների ձեռքից և խաչվեց: Նա Ինքն Իրեն չկարողացավ պաշտպանել. ինչու ենք հետևում այդ Մարդուն՝ Քրիստոսին»:

Այն ժամանակ Սրվանձտյանց իշխանը մոտեցավ արքային և ասաց. «Արքա՛, դու ինչո՞ւ քո ընթերցումը մինչև վերջ չես հասցրել, դու կագնել ես այն կետի վրա, որտեղ Հիսուս խաչվեց, շարունակեիր և պիտի տեսնեիր, որ Հարության առավ, հաղթեց մահվան, գերեզմանից դուրս եկավ, և այս է այն ուժը, որ մեր հայրերին լցրեց հավատքով»: Այս Հարության հավատքը Քրիստոս մեզ տվեց, մենք այդ հավատքով ապրեցինք դարեր շարունակ: Եղան պահեր, երբ մենք տկարացանք, եղան պահեր, երբ մենք զորացանք: Հիմա եկել է այն պահը, որ մենք մի նոր գիտակցությամբ, մի նոր արթնացումով, հոգևկան անդրադարձումով գիտակցելու ենք, որ մտնում ենք մի նոր շրջան Հայոց պատմության: Ես չգիտեմ, պատմիչները ինչ պիտի ասեն ապագայում, բայց վստահ եմ, որ պիտի ասեն արդի ժամանակների պատմու-

Փոխրիկները ծաղիկներ են մատուցում Վեհափառին

Վեհափառը օրհնում է մանուկներին

թյան համար. բայց անպայման պիտի գրվի. նախադարաբաղյան շրջան, հետդարաբաղյան շրջան և նոր անկախության շրջան:

1988-ին բռնություն էր մեր երկրի վրա, մենք մեր կյանքով չէինք ապրում: 1988-ից հետո հայերը եղան առաջիններից մեկը, որ Երևանի հրապարակի վրա մեկ միլիոն ժողովուրդ հավաքվեց և «Ղարաբա՜ղ, Ղարաբա՜ղ» կանչեց: Ահա եկավ ազատությունը, և մենք մեր հավատքը պիտի վերակենդանացնենք, առանց այդ հավատքի՝ խեղճ կմնանք:

Չենքը տուր մի մարդի ձեռքը, որ խիղճ չունի, հոգի չունի, կարող է ոճրագործ լինել, բայց նույն չենքը տուր մի ուրիշ մարդի, որ հավատք ունի, հայրենիքի գաղափար ունի, ազատության գիտակցություն ունի, նա հերոս կլինի, նա ուրիշի չի սպանի, նա հայրենիք կպաշտպանի: Մարդն է կարևորը, ինչպիսի մարդ պիտի լինենք, հավատքով մարդ պիտի լինենք, գաղափարով մարդ պիտի լինենք և պարկեշտությամբ, հայրենանվիրությամբ մարդ պիտի լինենք:

Աստծու գաղափարը, անմահության գաղափարը կենդանի պիտի պահենք մեր մեջ: Ասենք՝ ապրեցինք հիսուն տարի, ապրեցինք ութսուն տարի, ապրենք շատ-շատ տարիներ, բայց եթե մեր կյանքը արժեցուցած չլինենք, տարիները ի՞նչ արժեք ունեն: Տարիների գումարը չէ որ կարժե: Մի մարդ իր կյանքում անմահության մի հրաշք գործ է անում և հավերժանում է. այդ մեծ գործը միայն տաճար կառուցել չի, այս երեխաներին առողջ դաստիարակություն տալ, քրիստոնեական, հայկական մաքուր զգացումներ փոխանցել, կնշանակի անմահության ճամփով քայլել:

Եկեք կյանքը արժևորել գիտենանք: Աստված մեզ տվել է կյանքը, մենք չենք ստեղծել աշխարհը, Աստվածն է տիեզերքի արարիչը և մարդկանց կյանքի տվիչը: Երևակայեցեք, ինչ կարող է պատահել. մի փոքրիկ եռակ մեր արտի մեջ եթե գոցվի, մենք չկանք, մի փոքրիկ երակ եթե մեր ուղեղի մեջ փակվի, մենք կկորցնենք մեր գիտակցությունը: Հրաշք է կյանքը, հրաշք: Գիտնականներին հարցրեք, բժիշկներին հարցրեք, ի՞նչ կազմվածք է մարդու կազմվածքը, ի՞նչ կազմվածք է տիեզերքի կազմվածքը, ասողե՞ր, հյուղենե՞ր: Այս բոլորի հետև Աստված կա, Աստծո ուժը կա: Մարդիկ մոռացան և տեսաք, թե ինչ վիճակի հասան: Աստծուն մոռացողը՝ ինքն իրեն կմոռանա, և դրա համար եմ ասում, որ մի նոր շրջան է եկել:

Ես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից այս անմահության շունչն եմ բերում ձեզ իմ տկար շրթներով: Հարյուր երեսուն հայրապետներ այդ գահի վրա նստել են: Ես կկարծեմ, բոլորի համար անխտիր այդ գահը փշոտ գահ է, դժվար գործ է եղել. դա խաչ է, մենք խաչն ենք շալակել, գոհողության գաղափարով ենք շարժվել և ուզում ենք բոլորն էլ այդ գաղափարով առաջ գնան:

Ավարտելով իմ այսօրվա խոսքը, հրավիրում եմ ձեզ բոլորիդ, ո՞վ հաղպատցիներ և շրջապատի բնակիչներ, այնպես արեք, որ ձեր հոգեկան կյանքը ձեր բնության գեղեցկության նման լինի: Սքանչելի բնություն ունեք, ձեր լճանապարհները, ձեր գետը, մեկ խոսքով այդ բնությունը կանգնչափեք, հոգիով թող լցվի, դուք էլ կանգուն մնաք հոգիով, զվարթ մնաք, հավատավոր՝ գիով թող լցվի, դուք էլ կանգուն մնաք հոգիով, զվարթ մնաք, հավատավոր՝ ղի զավակ Հովհաննես Թումանյանն է.

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հավատով անսասան,

Ով նայում է վառ հույսերով
Դեպի Հայոց ապագան,
Նա կտեսնի էն մշտավառ
Ջահը կախված երկնքից,
Ասես Աստուծո աչքը պայծառ
Հսկում է ցած երկնքից:

Ապրե՛ք, այդ հավատքով ապրե՛ք, այդ «ղայիմությամբ» ապրեք, տոկունությամբ, զորությամբ, հավատքով: Մի վախենաք, Աստված ձեզ հետ է, Քրիստոս ձեզ հետ է, մեր հայրերը գերեզմաններից դուրս են եկել, ձեր մեջ են վերածնվել, քայլեցե՛ք նրանց ճանապարհով, ամեն»:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Հովհաննես Սարկավագ վարդապետի, Հովհաննես Երզնկացի վարդապետի և մյուս միաբանների շիրիմների առաջ, որոնց գործերը, ինչպես Վեհափառն ասաց. «աղբյուր են մշտահոս, աղբյուր իմաստության մեզ բոլորիս համար»:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՄԵՋ

Այցելության վերջին օրը, հուլիսի 31-ին, Վեհափառը հրաժեշտ տալով Հաղպատավանքին, մեկնեց Նոյեմբերյանի շրջան, որտեղ Սուրբ Սարգիս եկեղեցում հանդիպում ունեցավ և իր օրհնությունը բաշխեց տեղի հավատացյալ բնակչությանը:

«Փառք Քեզ Տէր, յաղագս ամենայնի փառք Քեզ Տէր»:

Այս բառերով եմ բացում իմ շրթներն այս առավոտ երբ կաթողիկոսական պարտավորության կատարման ընթացքում առաջին անգամ լինելով, ձեր աչքերին եմ նայում, ձեր դեմքերին եմ նայում և հայ ժողովրդի կյանքը ներկայումս և ապագայի համար ձեր բոլորի առաջահայաց և վերապահաց, նպատակասլաց նայվածքների միջից եմ դիտում:

Ինչու ընտրեցի այս բառերը Աստվածաշնչից քաղված և մեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ժամագրքից մեջ բերված. Փառք Քեզ, Աստված, Փառք Քեզ, ամեն բանի համար փառք Քեզ, որովհետև, սիրեցյալ եղբայրներ, քույրեր, զավակներ Հայաստանյայց Եկեղեցու, մենք ինչ որ ենք, Աստծուն ենք պարտական, այն Գերագույն ուժին, որի ծնունդն է տիեզերքը, որի ծնունդն ենք մենք, Նրա շնորհքին, Նրա զորության: Նա է աղբյուրը կյանքի: Դիտեցեք տիեզերքը, դիտեցեք այս լեռները, դիտեցեք դաշտերը, դիտեցեք ծովերը, դիտեցեք աստղերը, ի՛նչ հրաշալի ներդաշնակություն ու գեղեցկություն: Մի հունդ ենք ցանում հողի՛ մեջ, այդ հունդից ծառ է դուրս գալիս և պտուղ է առատորեն տալիս: Մի երեխա է ծնվում, տակավին քայլել չգիտի, և տեսնում եք, թե այդ երեխան մի մարդ է դառնում, մի արվեստագետ է լինում, մի գրագետ է ծնվում, մի մտավորական, մի ժողովրդի սպասավոր է առաջ գալիս:

Ով կդիտի տիեզերքը, ով կդիտի ինքն իրեն, չի կարող չընդունել, որ Աստված կա, որ Աստված է մեր ստեղծիչը, և նա, ով կհեռանա Աստծուց, հեռացած կլինի ինքն իրենից, ինքն իր հարազատությունից, ինքը կօտարանա իր բնությանը, Աստվածաստեղծ բնությանը:

Մեր հայրերը այդպես ապրեցին. Փառք Քեզ, Աստված, որ կյանք տըվիր մեզ, ասացին: Ես այսօր, անվավասիկ վաթսուն և ավելի տարիներ օտար աշխարհների մեջ ապրելուց հետո, եկել եմ իմ հայրենիք, այն հողը, այն ժողովուրդը, որի զավակն ես եղել իմ հայրերը, բայց ես առիթ չեմ ունեցել, բախտ չեմ ունեցել այս հողի մեջ ծնվելու:

Սիրելիներ, դուք աստիճանաբար պիտի հասկանաք, թե ինչ կընշանակի լինել անկախ պետություն. ուրիշից, ուրիշի կամքից, ուրիշի շահից կախում չունենալ: Որոշել, անել այն, ինչ որ ձեր և մեր հայրենիքի և մեր պետության և մեր Եկեղեցու գերագույն շահն է: Դուք գիտեք, թե ինչ է նշանակում գերի լինել: Գերի լինել, նշանակում է քո սեփական կամքը ուրիշին հանձնել, և գերին մարդ լինելուց կդադարի: Մարդուն Աստված ստեղծել է ազատ, իսկ մենք յոթանասուն տարի ապրեցինք մի այնպիսի շրջան, որ մեր սեփական յուրահատուկ կամքը ճնշվեց ուրիշ իշխանության կողմից: Այժմ, անվավասիկ Աստված մեր երեսին նայեց և տվեց մի նոր շրջան ազատ, անկախ Հայաստանի Հանրապետության նոր շրջան: Ես այսօր գալիս եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ ասելու համար ձեզ բոլորիդ. ժամանակ կար, և դժբախտաբար երկար տևեց այդ ժամանակը, որ մեր հավատը մեր սրտերի մեջ կողպել ուզեցին, խեղդել ուզեցին, փչացնել ուզեցին, երբ մեր եկեղեցիները փակեցին, երբ մեր եկեղեցիները շտեմարանների վերածեցին, թատրոնի սրահների վերածեցին, երբ մեր հոգևորականներին աքսորեցին: Բայց այսօր անվավասիկ մի նոր շունչ է փչում: Ինչպես Վահան Թեքեյանն է ասում. «Հարության շունչն է անա հորիզոնից ծայր տված, որ կփչե մարմնույդ վրա»:

Նոր կյանք, վերհարություն, վերստին մեր հավատքի, դարավոր հավատքի արտահայտությունը եղող մեր Եկեղեցու շուրջ բոլորվելու, Եկեղեցիով հարստանալու, հավատք ըմպելու, հավատքով ապրելու, Ավետարանով ապրելու, Քրիստոսի ճշմարտություններով ապրելու: Այդ ճշմարտություններից ամենից մեծը ի՞նչն է, գիտե՞ք, ամենից մեծը. «Ինչ որ չես ուզում, որ մարդիկ անեն քեզ համար, դու մի արա ուրիշի համար»: Սրա մեջ է ամբողջ քրիստոնեության էությունը: Ուզո՞ւմ եք, որ ուրիշը գողանա ձեր սեփական ձեռքերով շահվածը, չեք ուզում, մի արեք: Ուզո՞ւմ եք ուրիշը ձեր մասին չար խոսի, չեք ուզում, մի անեք ուրիշին: Կյանքի երջանկության գաղտնիքը Ավետարանի մեջն է, այդպես ապրեցին մեր հայրերը դարեր շարունակ:

Այս առավոտ, երկրորդ անգամը լինելով, ես իմ աչքերը բաց արեցի արևի լույսին Հաղպատավանքում: Հինգ կարևորագույն վանքեր տեսա անցնող երեք օրերին. տեսա Գոշավանքը, Սանահինը, Հաղպատը, տեսա Հառիծինը, Օձունը և այս առավոտ Ճանապարհիս վրա դեպի Նոյեմբերյան, տեսա նաև Ախթալան:

Քարը դադարել է քար լինելուց՝ դառնալով հավատքի աղբյուր: Ով կըճայի այդ քարերին, խաչքարերին, այդ բոլոր նվիրական արձանագրություններին, գերեզմաններին, նրանցից կյանք կառնի և ոչ թե մահ: Նրանք ապրում են. տեսեք, ես երբեք հայրենիքում չէի եղել ժամանակին: Այս ամենի մասին կարդացել էի, ներշնչվել էի Հովհաննես Սարկավագ-Իմաստասերի կյանքից: Նա մահացել էր տասնմեկերորդ դարին, բայց ինը հարյուր տարի է, որ մենք նրանից կյանք ենք ըմպում:

Ինչ որ քարերի մեջ ապրում է՝ դա հավատքն է, ոգին, գաղափարը: Եթե մի ժողովուրդ պակասի հավատքից, հավատացեք, այդ ժողովուրդը տկար կլինի անպայման: Չի կարող տոկալ և ստեղծագործել:

Նյութականը, դրամը այդ մարդին, ազգին չի մեծացնի, կփչացնի, երբեմն, եթե մարդը չգիտենա, ինչպես դրամը պիտի գործածի: Մեր Եկեղեցին, սիրելիներ, մի նոր շրջան է ապրում, և մի մոռանաք, որ Եկեղեցին դուք եք, հավատացյալները դուք: Եկեղեցի բառը հունարեն բառ է և կնշանակի հավատացյալների ամբողջությունը, միությունը ի Քրիստոս, հավատքով: Նույնիսկ այն ժամանակներին, երբ մեր եկեղեցիները քանդել էին և մենք եկեղեցի չունեինք, դաշտի մեջ էլ կարող էինք հավաքվել, աղոթք անել և եկեղեցի դառնալ: Կարևորը հոգին է, հոգին, հավատքն է, պատկանելիության զգացումն է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն և նրա միջից՝ Հիսուսի Քրիստոսի, Աստվածորդվույն, որի պաշտամունքը մեր հայրերը հռչակել են պետական կրոն 1700 տարիներ առաջ, և մեր ազգը եղել է առաջին ազգը աշխարհում, որ պետականորեն ընդունել է Քրիստոնեությունը:

Չգիտեմ, թերևս այստեղ էլ գալիս են աղանդավորներ, քարոզում են, իրենց ուզածն են ասում, բայց ոչ ոք ճիշտը չի ասում: Բոլորն էլ Սուրբ Գիրք են գործածում, բայց ամեն մեկը իր ուզածն է ասում, խաբում են մեր ժողովրդին: Այդպիսի մարդկանց առաջ ձեր մտքերը, ձեր սրտերը կփակեք ու կասեք. մենք ձեր հետ կապ չունենք, մենք քրիստոնյա ենք: Ուզո՞ւմ եք քրիստոնեություն քարոզել, գնացեք այն ազգերին, որոնք Քրիստոսը չեն ճանաչում: Բուն քրիստոնյա քարոզիչները այդպես են արել ժամանակին: Թող չգան Հայաստան, թող չգան հայ ժողովրդի զավակներին, որոնք իրենց արյունն են տվել քրիստոնեության համար, հավատքի համար: Այս ամբողջ վանքերն են չինել, ապրել են, իրենց գրքերն են Քրիստոսով դրոշմել: Դա՛ մեզ համար անպարգանք է, կնշանակի, չեն ճանաչում մեզ: Հետևաբար, «դայիմ» մնացեք այս Եկեղեցում, ամուր կապվեցեք դուք, երեխաներ, եկե՛ք եկեղեցի, սովորեցեք քահանա հոր կողմից, ինչպես խաչ հանել, ինչպես «Հայր մեր»-ը ասել, ինչպես «Առավոտ լուսո»-ն երգել, թող լեցվի ձեր կյանքը Աստուծմով, եկեղեցիով, որպեսզի պարապ չմնա ձեր կյանքը, և ուրիշները չգան, այդ պարապությունը չօգտագործեն, չշահագործեն:

Ահա այս մտածումներով ես ողջունում եմ ձեզ այս առավոտ: Աստված ձեզ բոլորդ օրհնի, և ես խնդրում եմ միասին երգենք «Հայր մեր»-ը, ամեն»:

Նոյեմբերյանով ավարտվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինի հովվապետական հինգերորդ այցելությունը՝ տրված Գուգարաց աշխարհին, և նույն օրը Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ԲՈՅԱՋՅԱՆ

ՄԵԼԻՔԳՅՈՒՂԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

1995 թվականի հունիսի 25-ը պատմական օր եղավ Արագածի շրջանի բարձրաբերձ լեռներում ծվարած Մելիքգյուղի և շրջակա՛քի հազարավոր բնակիչների համար: Այդ օրը տեղի ունեցավ ուղիղ վաթսուն տարիներ առաջ, 1935 թվականին, փակված Ս. Հովհաննես եկեղեցու վերաբացումը: Օրը կրկնակի անգամ արժևորվեց, քանզի, սիրով ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի հրավերին, եկեղեցու օծման ու վերաբացման գմայլելի արարողությանը նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետը:

Այս ուրախալի առիթով Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գավազանակիր Տ. Միքա՛ել ծ. վրդ. Աջապահյանը և ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանը:

Ավանդական աղունացով Արագածի շրջանի սահմանին թեմի առաջնորդի և առաջնորդական փոխանորդ Տ. Սեպուհ վրդ. Զուլջյանի հետ Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև Շիրակի տարածաշրջանում ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչ Ա. Քոչարյանը, Արագածի շրջխորհրդի նախագահ Ա. Կարապետյանը, Գյումրիի քաղաքապետ Մ. Վարդանյանը, մոտակա այլ շրջանների ղեկավարներ, Մելիքգյուղի գյուղական խորհրդի նախագահ Ա. Կարապետյանը և բազմահարյուր բնակիչներ:

Այստեղից ավտոմեքենաների շարասյունն ուղևորվեց Մելիքգյուղ, որտեղ գտնվում է ԺԹ դարի վերջին կառուցված Ս. Հովհաննես եկեղեցին, որն ոչ մեծ չափսերի մի աղոթասրահ է, որի փայտյա տանիքը հենվում է Սարդամիշից բերված վեց ընտիր գերանների վրա, որոնք պահպանվել են մինչև այսօր:

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, որից հետո տեղի ունեցավ եկեղեցու պղծված և ապա վերաօծրոգված ու բարեզարդված բեմի ու խորանի օծման արքազան արարողությունը: Օծման արարողությունից հետո մատուցվեց ս. պատարագ: Պատարագիչն էր Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արքազանը: Օծման արարողությանն ու ս. պատարագին ներկա էին ինչպես ղեկավար անձինք, այնպես էլ բազմահարյուր բնակիչներ և՛ Մելիքգյուղից, և՛ մերձակա գյուղերից:

Պատարագի ավարտին, եկեղեցուց դուրս հավաքված հոծ բազմության առջև, առաջնորդ արքազանի և շրջանի ու գյուղի ղեկավարության խոսքերից հետո, ոգեշունչ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ ներկաներից յուրաքանչյուրի սրտում ու հոգում դրոշմելով օրվա իմաստն ու խորհուրդը:

Վեհափառ Հայրապետը ի մասնավորի նշեց, որ այս դեպքը անկյունադարձային է իր կյանքում այն իմաստով, որ թեև ինքը բազմաթիվ եկեղեցիներ է օծել Լիբանանում, Սիրիայում, Պարսկաստանում, ԱՄՆ-ում, Բելգիայում և այլուր, սակայն առաջին անգամն է, որ իր բուռ մատը թաթախում է Սրբալույս Մյուռոնի մեջ՝ նրանով դրոշմելու համար հայրենիքի սուճ քարերը...:

Հատկանշական է նաև այն, նշեց Վեհափառը, որ իր այս անդրանիկ օծման արարողությունը տեղի է ունենում մի փոքրիկ գյուղում, ուր տեղի բնակչությունը իր սեփական ուժերով ու հնարավորություններով կարողացել է վերականգնել ավերված մատուռը և հույսը չի դրել դրսից եկող օգնության ու օժանդակության վրա: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ սա է ճշմարիտ եկեղեցակերտումի ճանապարհը, քանզի ժողովուրդն է, որ կառուցելու է իր եկեղեցին՝ իր ճակատի քրտինքով ու արդար վաստակով: «Երբ դուք կատարեք ձեր պարտքը, վստահ եղեք, որ արտասահմանի ձեր եղբայրներն ու քույրերը իրենց ձեռքերը կմիացնեն ձեր ձեռքերին», ասաց Վեհափառը:

Խոսքի ավարտին Վեհափառը կոչ ուղղեց ժողովրդին, որ չսահմանափակվեն եղածով, այլ մշտապես լցնեն եկեղեցին աղոթքով ու խնկով, որպեսզի տաճարը չմնա սոսկ քարեղեն շինություն, այլ խոսի Աստծուց, Ավետարանից, մեր հայրերից և խոսեցնի հայորդիներին:

Ապա Վեհափառը իր գոհունակությունն արտահայտեց ու շնորհակալություն հայտնեց բոլոր այն անձնավորություններին և ղեկավար անձանց, ովքեր ատոռ են կանգնել եկեղեցու վերաօծրոգման աշխատանքներին և իրենց լուման են ներդրել այս գեղեցիկ ձեռնարկի մեջ, և իր օրհնությունը բաշխեց հավաքված ժողովրդին:

Անմոռանալի օր եղավ հունիսի 25-ը, որը վստահաբար խմորելու է շրջանի հայության կյանքն ապագայում: Կրոնական վերազարթոնքի շունչը կա է, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջից տարածվում է ողջ Հայաստանում և Արցախում:

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԽՈՐ ՎԻՐԱՊ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՇՐՋԱՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Շիրակ և Արցախ աշխարհներին և Մոսկվա֊ի հայ համայնքին տված հովվապետական այցելություններից հետո, սույն թվականի հուլիսի 25-ին առաջին անգամ, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, ուխտավորաբար գտնվեց Խոր Վիրապի պատմական վանքում՝ իր աղոթքը միախառնելու հայոց հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից իր հայրական օրհնությունները տանելու Արարատի շրջանում բնակվող իր սիրեցյալ հոտին՝ ուղեկցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, Կանադա֊ի հայոց թեմի առաջնորդ Հովնան արքեպս. Տեր-Ներսեսյանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևմտյան թեմից՝ Ֆրեզնոյի հոգևոր հովիվ Սաուն վրդ. Զմրուխտյանի, Ս. Էջմիածնի միաբաններից՝ Սեպուհ վրդ. Չուլջյանի, Միքայել ծ. վրդ. Աջապահյանի, բարեշնորհ Վարուժան և Սարգիս սարկավագների:

Առավոտյան ժամը 10-ն է: Արարատի շրջանի մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու են եկել տեղական իշխանության ղեկավարները, բազմաթիվ հյուրեր: Ծափողջույններով, ծաղիկներով և ավանդական աղ ու հացի հյուրասիրությամբ Վեհափառ Հայրապետին ընդառաջ են գալիս դպրոցահասակ երեխաները: Նրանք իրենց հայացքներից ցոլացող խինդ ու բերկրանքով, ուրախությամբ և մանկական անուշ ժպիտով են դիմավորում Վեհափառ Հորը: Պատմական է պահը և հիշարժան՝ բերք ու բարիք արարող արարատցու համար, բարիգալստյան իր խոսքում նշում է Խոր Վիրապի վանահայր Տ. Մխիթար քհն. Սարիբեկյանը:

Մինչ ավտոմեքենաների շարասյունը ուղղվում էր դեպի Խոր Վիրապ, դաշտ ու այգի թողած գյուղացիները Փոքր Վեդի գյուղաքաղաքի կենտրոն էին փութացել՝ տեսնելու Վեհափառ Հայրապետին և ստանալու նրա շնորհաբաշխ օրհնությունները: Կրկին բարիգալստյան, կրկին երկպատկեցության և արևշատության մաղթանքներ: Խոր Վիրապի փոքրիկներից կազմված երգչախմբի մանկական անուշ ու զիլ ձայներով «Հրաշափառ»-ի երգե-

ցողության հնչյունների ներքո Վեհափառ Հայրապետին առաջնորդում են Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցի, ուր հավատացյալների խումբն ըստ բազմության ու տեղի հոգևոր դասը սիրով սպասում էին Վեհափառ Հոր գալստյանը: Եկեղեցում կարճատև աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետը, իր հայրական խոսքն ուղղելով հավատացյալ ժողովրդին՝ հավատքով, սիրով և միաբանությամբ մեր ազգի պատմության համար 1700 տարի շարունակ առաքելություն ունեցող Խոր Վիրապի վանքի արժեքը լավագույնս ապրելու կոչ է անում: Նա մաղթում է նաև պտղաբերություն և առատություն Հայոց դաշտերին ու այգիներին:

Այնուհետև եկեղեցու սեղանատունը Վեհափառ Հայրապետի պատվին տեղի է ունենում ընդունելություն:

Այստեղից Վեհափառ Հայրապետն ուղևորվում է շրջանային կենտրոն՝ Վեդի ավան: Ամենուրեք, գյուղամիջյան ճանապարհներին, ճամփեզրերին ցնծություն և անսահման ուրախություն է տիրում Վեհափառ Հայրապետի գալստյան առիթով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարգանքի իր տուրքն է մատուցում Վեդի ավանի եղբայրական գերեզմանատունը հանգչող Հայաստանի սահմանամերձ շրջաններում և Արցախում զոհված հայորդիների հիշատակին: Հոգեհանգստյան աղոթքից և ծաղկեպսակի զետեղումից հետո, Վեհափառ Հայրապետը ելնում է ամֆիթատրոն, ուր, չնայած այրող և կիզիչ արևին, հազարավոր հայորդիներ, երկար սպասումներից հետո, հոտնկայս ծափահարություններով դիմավորում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այստեղ մանկապարտեզի սանների կատարմամբ հնչած **«Խորհուրդ Մեծ և Սքանչելի»** շարականը, աղոթքներն ու ազգային-հայրենասիրական երգերը հուզմունքով են լցնում բոլորի սրտերը:

Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոսը ողջույնի խոսք է ասում և հրավիրում Վեհափառ Հայրապետին՝ իր հայրական պատգամն ու հորդորները տալու ժողովրդին: Անդրադառնալով հավատքի պահպանմանն ու զորացմանը, Վեհափառը կոչ է ուղղում տարեց, միջին և երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին և փոքրերին՝ հավատարիմ մնալու լուսավորչահիմն հավատքի ավանդներին և հայրենաշինության վեհ գործին:

Հավատացյալ ժողովրդի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը բարձրանում է բարձունքի վրա գտնվող Եղեռնի զոհերի հուշարձան, և քիչ այն կողմ գտնվող տարածքի վրա, Վեհափառի հոգեհանգստյան աղոթքից հետո, զետեղվում է զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշաքարը:

Վեդի ավանում երկժամյա դադարից հետո, շրջանային և քաղաքային իշխանությունները, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էին հյուրասիրություն Խոսրովի պատմական արգելանոցի գեղատեսիլ մեկ անկյունում:

Վերջում Վեհափառ Հայրապետը, իր գնահատանքը հայտնելով և հայրական օրհնություններն բաշխելով բոլոր կազմակերպիչներին, Խոր Վիրապի վանահայր Տ. Մխիթար քհն. Սարիբեկյանին և ներկաներին, կոչ արեց բոլորին միշտ հորոգված, արդար և ազնիվ աշխատանքով արժևորելու և հորոգելու անցյալից մեզ ավանդված ազգային-հոգևոր արժեքները:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԲՈԼԴԵՐՆԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1995 թվականի հունիսի 28-ից հուլիսի 2-ը Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքի մերձակա Բոլդերնի Բողոքական Ակադեմիայում տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում, որի կարգախոսն էր՝ «Սովորել ապրել բազմակրոն Եվրոպայում»:

Այդ խորհրդակցական հավաքը կազմակերպված էր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կրթության բաժնի, Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի և Բոլդերնի Բողոքական Ակադեմիայի միասնական ջանքերով, որին իրենց մասնակցությունը բերեցին 27 հոգի եվրոպական 13 երկրներից:

Մասնակիցները, որոնք ծառայում են հովվական կամ ուսուցչական աշխարհներում, ներկայացնում էին Եվրոպայի քրիստոնեական բոլոր մեծագույն հարանվանությունները: Հավաքի նպատակն էր՝ ուղեգծեր մշակել բազմակրոն Եվրոպայի պայմաններում քրիստոնեական հավատքը սովորելու և ուսուցանելու համար:

Հավաքը շեշտեց այն հանգամանքը, որ քրիստոնյա եվրոպացիներն այսօր ստիպված են կարևորություն ընծայել այն իրողությանը, որ Եվրոպան այլևս զուտ քրիստոնեական կրոնի աշխարհամաս չէ. նա բազմաթիվ կրոնների մի աշխարհամաս է դարձել: Ուստի սովորելու և ուսուցանելու նպատակն է մարդկանց ամրապնդել իրենց անձնական ինքնության մեջ, զարգացնել ըմբռնողություն ու հարգալից վերաբերումը մյուս կրոնական ավանդությունների հանդեպ և օգտագործել բոլոր կրոնների ներուժը՝ խաղաղության ու ներդաշնակության մեջ ապրելու ուղղությամբ:

Բազմակրոն Եվրոպայում ապրել սովորելը ներառնելու է պատմության վերարժևորումը՝ որիշ կրոնական ավանդությունների տեսանկյունից դիտված: Այն կարիք ունի նաև ներկայի խորունկ վերլուծության, երբ հաճախ կրոնն օգտագործվում է կրոնական համայնքների միջև տնտեսական, քաղաքական անհավասարությունները թաքցնելու համար:

Այն կարիք ունի հետագա որոշակի կրթական ջանքերի, որոնք ինում են ունկնդրելու, ապահովության ստեղծման մեթոդները զարգացնելու, ինքնությունը հարաբերությունների մեջ կառուցելու և հակամարտությունները լուծելու ունակությունից:

Հավաքն իր գնահատանքն արտահայտեց դասագրքերը վերանայելու և փոխադարձ ընդունելի ծրագիր մշակելու ուղղությամբ կատարված ջանքերի նկատմամբ:

Այն առաջարկեց ուսումնասիրել կրթական գործընթացի հնարավորությունը, որը կարող է կառուցվել ինչպես խաչակրաց արշավանքների սկբնա-

վորման 900-ամյակի, այնպես էլ մահմեդականների կողմից քրիստոնյա Արևելքի ճվաճման 1300-ամյակի շուրջ: Այն կարող է միաանաբար կազմակերպվել Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի հետ և կարող է առիթ հանդիսանալ Եվրոպայում քրիստոնյաների ու մահմեդականների հաշտության և նոր ու ստեղծագործ հարաբերությունների հաստատման համար:

Հավաքի մասնակիցներն ընդունվեցին Ցյուրիխի Բարեկարգյալ Եկեղեցու Սինոդի կողմից, որը շեշտեց ներդաշնակ համակեցության բացարձակ անհրաժեշտությունը մի քաղաքում, որտեղ մահմեդականությունն այսօր դարձել է երրորդ մեծագույն կրոնական հարանվանությունը Հռոմեական և Կաթոլիկ Եկեղեցիներից հետո:

Մասնակիցներն այցելեցին նաև մահմեդական բուհիացիների համալիք, ինչպես նաև Հրեական ուսումնական կենտրոն, որն ստեղծվել է քրիստոնյաներին հրեական կյանքին ու ավանդություններին ծանոթացնելու նպատակով:

Սույն հավաքին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցում էր Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, որը հավաքի անցկացման օրերին նախագահեց Հոլոդափառ Եկեղեցիների միասնական պաշտամունքին, ինչպես նաև կիրակնօրյա ընդհանրական եզրափակիչ աղոթքին, որի ընթացքում հանդես եկավ անգլերեն քարոզով՝ ուղղված հավաքի մասնակիցներին:

Մ. Ծ. Վ. Ա.

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ, ԴԵՊԻ ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Սույն թվականի հուլիսի 19-ին հոգևոր ճեմարանի երրորդ և վեցերորդ լսարանների 12 սաներ, գլխավորությամբ վերատեսուչ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Ֆրեզնոյի Հովիվ Հոգեշնորհ Տ. Սաուն վարդապետ Զմրուխտյանի և ճեմարանի քարտուղար պրն. Անդրանիկ Հակոբյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեցին ուխտագնացության դեպի Հավուց Թառի Ս. Ամենափրկչի ԺԲ դարի հոյակերտ վանք, որը գտնվում է Գեղամա լեռների բարձունքներից մեկի կատարին, Գառնիի ձորի հանդիպակաց կողմում:

Որոշ տեղ ավտոմեքենաներով անցնելուց հետո, ուխտավորները պատրաստվեցին սարերի լանջով ոտքով բարձրանալ դեպի վանք: Հեռվից երևում էր Հավուց Թառը, որն իշխում էր անդնդախոր ձորերին: Այն նման էր սարի կատարին նստած հսկա մի բազեի: Հուլիսյան տոթ եղանակին երեք կիլոմետր երկարություն ունեցող անհարթ և քարքարոտ արահետը կտրում էինք շատ դանդաղ: Համախ կանգ էինք առնում սրտի արագ զարկերը հանդարտեցնելու համար:

Աղոթքի մրմունջներով, սաղմոսների արտասանությամբ և հոգեզմայլ շարականների երգասացությամբ բարձրանում էինք դեպի Ս. Ամենափրկիչ: Մոտ 40 րոպե վեր ելնելուց հետո, կանգ առանք Հավուց Թառին դեմ-հանդիման: Հեռվից երևացող փոքրիկ վանքը մեր աչքերի առաջ դարձել էր հսկա մի համալիր՝ մի քանի եկեղեցիներով, միաբանական խուցերով, պարտեզ-այգիներով, միաբանական սեղանատունով և իր կրթական օջախով, ուր սերունդներ էին ուսանել: Կանգնել էինք հիացագին ու զարմացած այս հրաշալիքի առաջ, հրեշտակների երկնքից կախված այս հողեղեն բնակարանի դիմաց, որն, ավա՜ղ, ամայացել, այրիացել և լքվել էր:

Վանքի շրջապատում և պարտեզներում վայրի բուսականություն իր թևերն էր տարածել, մոլախոտեր, անպտուղ, անխնամ ծառեր և դրանց կողքին հավերժորեն քնած, անդարձ մեկնած բազում վանականների տեղերից խախտված շիրմաքարեր:

— Սուրբ է այս հողը, հանի՛ր կոշիկներդ, անկեզ մորենին է սա՝ Քո՛րեք լեռան բարձունքի վրա, որն անընդհատ վառվում է, անսպառ խոսքեր է ասում բոլոր այցելուներին և նրանց, ովքեր ձորի մյուս ափից անցնելիս խաչակնքում են և ողորմի տալիս անցավորներին: Անտծու հավիտենական

տունն այս, հավիտենական, ուր հրեշտակներ են ապրում: Այստեղ վանականները, հին օրերի իրենց կյանքի օրինակով, գերեզմաններից ամեն օր արշալույսին և վերջալույսին հառնում են՝ վեղարներն իրենց գլխին, իբրև ուխտապահ, իբրև հաղթական Եկեղեցու հավատարիմ զինվորներ, գալիս են շարք-շարք աղոթք մատուցելու եկեղեցում Բարձրյալն Աստծուն և օրհնում երկիրն Հայոց և Եկեղեցին Հայաստանյայց:

Երկյուղածությամբ մոտենում ենք վանքին, մտնում ներս, աղոթքի հատվածներ մրմնջում՝ ընթերցելով պատերի և խաչքարերի արձանագրությունները և իմանում, թե ովքեր էին այն երախտավորները, որոնք իրենց գյուղական օժանդակությունն էին տրամադրել կառուցելու համար այս հոգևոր կենտրոնը, այն հողերեն հրեշտակների բնակարանը, հավատի անեսսասելի այս ամրոցը, որը մնում է իբրև վկա հայոց ազգի տառապանքների և անմահության:

Խմբվում ենք աղոթարանի առաջ, կրակ վառում, խունկ ծխում և սկսում հոգեհանգստյան շարականներ ու աղոթքներ երգել և արտասանել բոլոր նըրանց համար, ովքեր եղան ճրագներ, ջահեր, մոմեր՝ լույս ու հոչակ տալով այս վանքին և մեր մշակույթին: Աղոթում ենք սրտեռանդն ոչ միայն այս շրջապատում հավիտենապես քնածների, այլև աղոթում ենք բնկած ու փշրված այուների, խաչքարերի, կամարների, խոյակների, գմբեթների ու տովորական քարերի համար, որոնք մարդկանց մահը իրենց մահվամբ ավելի սարսափելի ու տոսկալի են դարձնում:

Մեր վանքերը ավերակներ են դարձել, մեր Եկեղեցու հաղթական զրավակները արդեն մյուս աշխարհ փոխադրված՝ որքա՜ն են տխրում՝ տեսնելով, որ հայի հոգին է ավերակվում, հայի հավատի կանթեղն է շիջում և անլույս մնում: Ավա՜ղ, ո՛վ պետք է մտահոգվի այդ մասին:

Ուխտավորներս, հոգեհանգստյան արարողությունից և երգաստացությունից հետո, նստում ենք եկեղեցու մուտքի առջև կանգնեցված խաչքարի և գերեզմանաքարերի հարևանությամբ և բարձունքից դիտում աշխարհն Հայոց: Լուռ էինք բոլորս, բոլորս էլ ազդված և հուզված, բոլորս հաղորդակցվել էինք այստեղ մեր Աստծու հետ: Խոկում ու խորհրդածում էինք, թե ո՛րն է մեր կոչումն այս կյանքում, և թե ինչպե՛ս կարող ենք հասնել այն զոհողության բարձունքին, որը եղավ այս վանքի վանականության կյանքը՝ այնքան նման մեր Փրկչի կյանքին: Ժամերն անցնում են աննկատ: Կամաց-կամաց ուխտավորներս շրջվում ենք դեպի առաջ, դեպի ձոր, ուր մեզ սպասում էին մեր մեքենաները:

Թաբոր լեռան վրա Հիսուս իր աշակերտներից Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին բացահայտեց իր աստվածային դեմքը՝ այնտեղ պայծառակերպվելով, իր կողքին ունենալով Մովսես և Եղիա մարգարեներին և լուսեղեն իրականությունը Աստծու: Այստեղ, այս բարձունքի վրա, ասես պայծառակերպվեցինք նաև մենք՝ ուխտավորներս, տեսնելով մեր նախնիների հավատն ու զոհողությունը, նվիրումն ու պաշտամունքը:

Թեթևացած և հոգևին մխիթարված, իջանք աշխարհ՝ միշտ ունենալով ձգտումը հասնելու այն երանական վիճակին, որն ապրեցինք այս վանքի կողքին՝ Հավուց Թառի բարձունքին:

ՈՒԽՏԱՎՈՐ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՆԱՄԱԿԻ ՄԱՍԻՆ

Եփեսացիներին հասցեագրված Պողոս Առաքյալի նամակը բացահայտում է աստվածային ծրագրի, այն է՝ Քրիստոսով որպես գլուխ համախմբել բոլոր արարածներին երկնքում և երկրի վրա (Եփես. 1.10): Առաքյալը հրավիրում է Աստծու ժողովրդին ապրել այնպես, որ Քրիստոսով նրանց միությունը իրականություն դառնա և արտահայտվի նրանց հասարակաց կյանքով:

Եկեղեցու գոյության գլխավոր նպատակը իրականում դրսևորվում է նրա միության մեջ: Եկեղեցին մեկ է, սուրբ, ընդհանրական, այսինքն՝ կաթողիկե ու նաև առաքելական: Այն ծրագրված և հաստատված է Աստծու կողմից, որպեսզի դառնա ամբողջ մարդկության փրկության միջոց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի փրկարար գոհագործությամբ:

Եկեղեցու էությունը նրա միության մեջ է կայանում, որովհետև ինչպես Եփեսացիների նամակի առաջին գլխի տասներորդ համարն է ասում, Եկեղեցու նպատակը մարդկային ցեղը միասնականության բերելն է: Նրա դուռը մկրտության ավազանն է, մեղքերի քավությունն է, Սուրբ Հոգու շնորհների որպես երկնավոր պարգև ստացումը և հավատացյալների՝ Աստծու կողմից ընդունված լինելու հավաստիացումն ու վստահությունը, որպեսզի նրանք միշտ հիշեն այն վեհ կոչումը, որին կանչված են Տիրոջ կողմից:

Եկեղեցու նպատակասլաց լինելը կախում ունի նրա անդամների հաշտարար սիրո ոգու իրագործումից, Եկեղեցու ծոցում առաքյալների կողմից ավանդված կանոնական կյանքին նրա անդամների հետևողական լինելուց: Այս բարոյական իդեալը և հրահանգված միասնությունը երկուսն էլ թեև տրված են մեզ, սակայն, մյուս կողմից, դրանք նպատակներ են, որոնց համար հարկավոր է ջանք ի գործ դնել:

Եկեղեցու ծոցում գոյություն ուներ մի ակնբախ լարվածություն. դա հրեաների և հեթանոսների միջև եղած բաժանումն էր: Էապես կարևոր էր Եկեղեցու համար շրջանցել այս բաժանումը: Քրիստոսի քավչարար մահվամբ ոչ միայն ճանապարհ էր հարթվում անհատի համար Աստծու հետ հաշտության, այլև ստեղծվում էր մի երկնային հասարակություն, ուր հրեաներն ու հեթանոսները միացած էին:

Հեթանոսները այս երկնային հասարակության մեջ ընդգրկվելու ոչ մեկ հնարավորություն չունեին: Հրեաները Աստծու խոստումի ժառանգորդներն էին ըստ Աբրահամի հետ կնքված ուխտի, որի արտաքին նշանը թլփատությունն էր: Հեթանոսները «հրեական հասարակապետությունից մերժված էին և օտար ացած՝ ուխտի խոստումներից»: Սակայն Քրիստոսի քավչարար և հաշտարար մահը ստեղծեց Աստծուն մոտենալու հնարավորություն նույնիսկ նրանց համար, որոնք նախկինում ապրել էին «առանց Աստծու»: Երկնային այս ծրագիրը անծանոթ էր նախորդ սերունդներին, բայց այժմ Աստված գանկացավ բացահայտել Իր հավերժական նպատակը և մանավանդ հայտնությամբ ընտրեց Պողոս առաքյալին դառնալու այն առաքյալը, որին մանավանդ վստահվեց հեթանոսների առաքելությունը, որով և նաև հաստատվեց ի վերուստ նրա առաքելական հանգամանքը:

Սակայն ո՞րն է այն Եկեղեցին, որտեղ հրեաները և հեթանոսները միացել էին: Այդ Եկեղեցին այն չէ, ուր մկրտությամբ հեթանոսները դառնում էին մովսիսական, նման ժողովարանի նորադարձներին: Դա չէր նշանակում նաև, որ քրիստոնեությանը դարձած հրեաները հրաժարվում էին իրենց նախահայրերի Աստծուն տված ուխտից: Եկեղեցին Աստծու նոր ստեղծագործությունն էր ոչ այն իմաստով, որ նրա կապը խզվում էր հին ուխտի հետ. այլ՝ թե՛ հրեան, թե՛ հեթանոսը Քրիստոսի հաշտարար մահվամբ միացած՝ ներկայանում էին Հորը նույն մեկ հոգով:

Եփեսացիներին ուղղված սույն նամակում գլխավոր հարցը Եկեղեցու ընդհանրականությունն է և նրա աստվածային ծագումը: Քրիստոսը գլուխ է Եկեղեցու, և որպես այդպիսին, նրա փառքը փոխանցված է իր Մարմնին: Այս ըմբռնումով Եկեղեցու և նրա դերի պատմության մեջ Եփեսացիների նամակը նվազ նման է Կողոսացիների նամակին, քան հռոմայեցիներին գրված թղթին: Հռոմայեցիներին ուղղված նամակի 9—11 գլուխներում Պողոս առաքյալը հեթանոսությունից դարձած քրիստոնյաներին համարում է որպես միջանկյալ շարժման հետևողների, իսկ մովսիսականությունից դարձածներին՝ որպես անկախ շարժման հարողների, որոնց վիճակը ժամանակավոր է և պայմանական: Աստծու բուն և վերջնական նպատակը միակ Եկեղեցում մովսիսականություն ու հեթանոսությունը հաշտեցնելն է:

Հեթանոսների վիճակը Աստծու ժողովրդի մեջ նմանեցվում է խաղողի վազում պատվաստված մի ճյուղի, որ անպտուղ լինելու դեպքում արժանի է կտրվելու և այրվելու: Հռոմայեցիներին գրած Պողոսի նամակում անցկացված գիծը շարունակվում է Եփեսացիներին գրված նամակում իր ճարտարապետական նկարագրով, ուր Եկեղեցին պատկերվում է որպես հիմնական այն կառույցը, որի քարերը և մնայուն մասը կազմում են հեթանոսությունից դարձած քրիստոնյաները իբրև հիմնաքարերը այդ շենքի: Հռոմայեցիներին ուղղված նամակի 9—11 գլուխներում արտահայտված կիսաջատագովական վերաբերմունքը, որպես հեթանոսաց առաքյալի վերաբերմունք, Եփեսացիներին ուղղված նամակում փոխարինվում է տիեզերական Եկեղեցու գաղափարով՝ ավելի լայնածավալ և տևական համաշխարհային իր չափերով:

Մեր ասածը պարզաբանելու համար անհրաժեշտ է պատասխանել որոշ հարցերի: Եթե Եկեղեցին այն հասարակական կազմակերպությունն է, որի միջոցով Աստված տնօրինեց մարդկային ամբողջ ցեղի փրկագործությունը Քրիստոսով, ապա ինչո՞ւ այն հայտնվեց պատմության բեմահարթակում այդքան հապաղումով: Եվ ինչո՞ւ է նա ժամանակի և տարածության մեջ

ակնհայտ և ցցուն թերությունների առարկա: Պողոսի՝ Եփեսացիներին հասցեագրված նամակը սույն հարցերին պատասխանում է՝ ասելով, որ Եկեղեցին լոկ տեղական և մասնավոր կազմակերպություն չէ և ոչ էլ սոսկական մի նոր ստեղծագործություն: Եկեղեցու առաքելությունը տարածվում է բոլոր սերունդների վրա, «Աստծուն փառք Եկեղեցում և ի Քրիստոս Հիսուս բոլոր ժամանակներում հավիտյանս հավիտենից. ամեն» (Եփս. 3. 21): Առարչի մտքում էր Եկեղեցու արարումը դեռևս հավիտյաններից առաջ (Եփս. 3. 9—11) և նա բացահայտեց մարդկությանը, իր այդ գաղտնի ծրագիրը (որը թաքնված էր ամբողջ նախորդող դարերի ընթացքում), թե ինչպես պետք է այն իրականացվի: «Եվ Աստված արեց այս բանը իր հավիտենական նպատակի համաձայն, որին պետք է հասնել մեր Տեր Հիսուս Քրիստոսով» և կյանքի կոչեց այդ նպատակը «ի լրումն ժամանակաց» (Եփս. 1. 10): «Դրա համար էլ դուք հիշեցե՛ք, որ մի ժամանակ հեթանոսներ էիք մարմնի նշանով, որ կոչվում է անթլփատություն (մարմնի վրա ձեռքով կատարված թլփատության համեմատ), քանի որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք և հեռացած Իսրայելի քաղաքացիությունից, տարագրված խոստման ուխտից և ոչ մի հույս չունեիք ու առանց Աստծո էիք աշխարհում: Իսկ այժմ Հիսուս Քրիստոսի միջոցով դուք, որ մի ժամանակ հեռացած էիք, մերձավորներ եղաք Քրիստոսի արյամբ, որովհետև նա է մեր խաղաղությունը, նա, որ երկուսը մեկ դարձրեց. քանդեց իր մարմնի մեջ ցանկապատի միջնորմը՝ թշնամությունը, և ջնջեց հրամաններով տրված պատվիրանների օրենքը, որպեսզի իրենով երկուսին դարձնի մի նոր մարդ և խաղաղություն հաստատի ու իր խաչով հաշտեցնի երկուսին մեկ մարմնի մեջ Աստուծո հետ. քանզի թշնամություն սպանեց իր մեջ: Եվ եկավ, խաղաղություն ավետարանեց ձեզ՝ հեռու եղողներիդ, և խաղաղություն՝ մոտ եղողներիդ, որովհետև նրանով է, որ երկուսս էլ արտոնություն ունենք մերձենալու Հորը մեկ Հոգով: Ապա, ուրեմն, օտար և պանդուխտ չեք, այլ՝ համաքաղաքացի սրբերին և ընտանի՝ Աստծուն, կառուցված առաքյալների և մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուսն է, որի վրա և ամբողջ կառույցը, կապված և հարմարված, վերանում է մի տաճարի՝ սուրբ Տիրոջով, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծու՝ Հոգով» (Եփես. 2. 11—22):

Սույն համարներում տեսնում ենք Աստծու անչափելի շնորհը, որ իջնում-հասնում է մեզ, այնքան, որ հեթանոսները Քրիստոսի միջոցով դառնում են ժառանգորդներ Աստծու ուխտի՝ տրված իր ժողովրդին, և այսպիսով իրականանում են Եսայի մարգարեի խոսքերը՝ ասված 57.19-ում. «Խաղաղություն եմ տալիս բոլորին, և՛ մերձավորին, և՛ հեռավորին. ես կբուժեմ իմ ժողովրդին»: Հեթանոսների այս միավորումը Եկեղեցին «նոր» է դարձնում պատմության բեմում: Նրանք միաձուլվում են «մի նոր մարդու մեջ», որ Քրիստոսն է:

Մովսիսական օրենքը վերացվում է, որովհետև այն սահմանափակվում էր հրեականությամբ և դառնում միջոց ցեղային այլամերժության և այդպիսով ստեղծվում էր «թշնամության բաժանարար մի պատ»: Միևչդեռ միասով իրականանում են Եսայի մարգարեի խոսքերը՝ ասված 57.19-ում. «Խաղաղություն եմ տալիս բոլորին, և՛ մերձավորին, և՛ հեռավորին. ես կբուժեմ իմ ժողովրդին»: Հեթանոսների այս միավորումը Եկեղեցին «նոր» է դարձնում պատմության բեմում: Նրանք միաձուլվում են «մի նոր մարդու մեջ», որ Քրիստոսն է:

Մովսիսական օրենքը վերացվում է, որովհետև այն սահմանափակվում էր հրեականությամբ և դառնում միջոց ցեղային այլամերժության և այդպիսով ստեղծվում էր «թշնամության բաժանարար մի պատ»: Միևչդեռ միասով ստեղծվում էր «թշնամության բաժանարար մի պատ»: Միևչդեռ միասով իրականանում են Եսայի մարգարեի խոսքերը՝ ասված 57.19-ում. «Խաղաղություն եմ տալիս բոլորին, և՛ մերձավորին, և՛ հեռավորին. ես կբուժեմ իմ ժողովրդին»: Հեթանոսների այս միավորումը Եկեղեցին «նոր» է դարձնում պատմության բեմում: Նրանք միաձուլվում են «մի նոր մարդու մեջ», որ Քրիստոսն է:

Մովսիսական օրենքը վերացվում է, որովհետև այն սահմանափակվում էր հրեականությամբ և դառնում միջոց ցեղային այլամերժության և այդպիսով ստեղծվում էր «թշնամության բաժանարար մի պատ»: Միևչդեռ միասով ստեղծվում էր «թշնամության բաժանարար մի պատ»: Միևչդեռ միասով իրականանում են Եսայի մարգարեի խոսքերը՝ ասված 57.19-ում. «Խաղաղություն եմ տալիս բոլորին, և՛ մերձավորին, և՛ հեռավորին. ես կբուժեմ իմ ժողովրդին»: Հեթանոսների այս միավորումը Եկեղեցին «նոր» է դարձնում պատմության բեմում: Նրանք միաձուլվում են «մի նոր մարդու մեջ», որ Քրիստոսն է:

Մովսիսական օրենքը վերացվում է, որովհետև այն սահմանափակվում էր հրեականությամբ և դառնում միջոց ցեղային այլամերժության և այդպիսով ստեղծվում էր «թշնամության բաժանարար մի պատ»: Միևչդեռ միասով

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Այսօր աշխարհն ընդհանրապես և Եվրոպան մասնավորապես քաղաքական, ընկերային, մշակութային զանազան հիմնախնդիրներից զատ ստիպված է անդրադառնալու նաև կրոնական մի նոր իրադրության, որն առաջադրում է նոր խնդիրներ և պահանջում յուրօրինակ, երբեմն արտառոց լուծումներ:

Ի դարի վերջի Եվրոպան այսօր կրոնական առումով նույն մայրցամաքը չէ, ինչ էր ընդամենը մի քանի տասնամյակ առաջ: Այս իրողության համապարփակ ընկալման պարագային անկատելի են հետևյալ որոշակի տարբերակիչ գծերը.

ա) Ավանդական քրիստոնյա երկրներում տիրող հետզհետե աշխարհայնացման (սեկուլարիզացիա) գործընթացը և անհատների քրիստոնեական ինքնության աստիճանական կորուստը: Սա հատկապես վերաբերում է ինչպես Արևմտյան Եվրոպայի, այնպես էլ Արևելյան Եվրոպայի (նախկին կոմունիստական) երկրներին, թեև նրանց գաղափարական ենթահողը և առարկայական ու ենթակայական շարժառիթներն ու պատճառները, ինչպես և անցած ճանապարհը տարբեր են:

բ) Նախկինում միատարր քրիստոնյա երկրներում զգալի չափով այլ կրոններ դավանող բնակչության (մահմեդականներ, հրեաներ, բուդդայականներ ևն) ներհոսքը և անհատների կրոնական ու մշակութային ինքնության խաթարումը բնական փոխազդեցությունների և շփումների հետևանքով (սինկրետիզմ): Սա նույնպես վերաբերում է եվրոպական բոլոր երկրներին (չնչին բացառությամբ):

գ) Կրոնական փոքրամասնությունների խուլ կամ բացահայտ պայքարը իրենց իրավունքների համար, որոնք հաճախ ստանում են անթաքույց հակամարտության ձև և երբեմն հանգեցնում պատերազմի: Այստեղ հաճախ կրոնական գործոնից դուրս լուրջ շարժառիթներ են լինում ընկերային ու քա-

ղաքական գետնի վրա: Երբեմն կրոնական գործոնը կարող է բացարձակապես բացակայել, սակայն տարբեր կրոններ դավանող մարդկանց նույնիսկ քաղաքական հակամարտությունը նորանոր խնդիրներ է հարուցում կրոնական գործիչների առջև:

Վերոհիշյալ կետերի վերլուծումը մեզ տանում է հետևյալ խորհրդածություններին:

Մի կողմից (Արևմտյան Եվրոպայի երկրներում) ընկերային բարվոք վիճակը և կենցաղային դյուրությունները մարդկանց հաճախ հոգեբանական մի այնպիսի «կշտության», որի ժամանակ հոգևոր-կրոնական պարտականությունները դառնում են սոսկ առօրյա միապաղաղ կենսաձևի մեջ փոփոխություն մտցնելու մի պարզ եղանակ, կամ էլ ընդհանրապես դուրս են մղվում կյանքից՝ մարմնապաշտ ու նյութապաշտ արժեքների դավանման մեջ արժեզրկման ենթարկվելով: Մյուս կողմից (Արևելյան Եվրոպայի երկրներում) ընկերային ծանր վիճակը, կենցաղային զանազան ու անվերջանալի դժվարությունների հաղթահարումը, ինչպես նաև տասնյակ տարիների ընթացքում աթեիստական դաստիարակության գործած ավերը տեղ չեն թողնում կրոնական ապրումների ու դավանական ինքնության անհրաժեշտության գիտակցության համար:

Սեփական կրոնական ինքնության նման կորստի ու ոչնչացման պայմաններում անհատը այլ (և ոչ միայն այլ) կրոններ դավանող մարդկանց վերաբերվում է կա՛մ անթաքույց արհամարհանքով ու անտարբերությամբ, կա՛մ թշնամանքով, որը ծնվում է անգիտությունից (ոչ միայն առարկայական, այլև ենթակայական) ու նրա հետևում մշտապես ներկա եղող վախի զգացումից: Միևնույն կան նաև անհատներ, որոնք պետք եղած անհրաժեշտ պաշարը չունենալով, հաճախ անգիտակից կերպով ենթարկվում են այլ կրոնների ազդեցությանը և զոհ գնում սեփական տգիտությանը: Սինկրետիզմն այս պարագային չարյաց փոքրագույնն է: Միևնույն հետևանքին սեփական տգիտությամբ կարելի է բացատրել բազմաթիվ եվրոպացի երիտասարդների անվերապահ դարձը դեպի արևելյան միստիկ և էզոթերիկ կրոնները:

Ե՛վ արհամարհանքը, և՛ թշնամանքը հավասարապես կարող են հակամարտության և անգամ պատերազմի շարժառիթ լինել: Հաճախ բացարձակապես սեկուլյար մարդկանց կողմից արտահայտված գերակայության բարդույթը կամ գործված ոճիրը զոհի կողմից ընկալվում է որպես դիմացինի կրոնական համոզմունքի արտահայտության արդյունք և իր անդրադարձն է ունենում հակառակ ուղղությամբ՝ այս անգամ արդեն հավատացյալ անհատների հանդեպ: Մյուս կողմից՝ քիչ չեն դեպքերը, երբ սեփական ինքնության գիտակցության ոչ ճիշտ ընկալումը հանգեցնում է ֆանատիզմի և դուռ բացում մերժողական կեցվածքի և դրանից բխող բոլոր հետևանքների համար: Հարցը երբեմն սպառնական տեսք է ստանում հատկապես մեկ կրոնից մյուսը անցում կատարածների հանդեպ:

Հետևաբար, այսօր Եվրոպայի քրիստոնյա Եկեղեցիները կանգնած են մի մարտահրավերի առջև, որից խուսափելն անհնարին է: Ինչպե՞ս դիմագրավել աշխարհայնացման անխուսափելի սպառնալիքին, և միևնույն ժամանակ կարողանալ բաց և անկեղծ հարաբերություններ մշակել այլադավանների հետ: Սրանք լուրջ հարցեր են, որոնց լուծմանն արդեն իսկ լծվել են բազմաթիվ եկեղեցական հարանվանություններ: Անկախ յուրաքանչյուր երկրի յու-

րահատկություններից, լուծման բոլոր եղանակներն էլ պետք է ունենան հետևյալ ընդհանրությունները.

ա) Գաղափարական գիտակցված պայքար սեկուլյարիզմի դեմ՝ Ավետարանի քարոզությամբ և քրիստոնեական ինքնության խորը բացահայտմամբ և արժևորմամբ: Սա իր մեջ ներառնում է ինչպես աշխարհիայնացման վատ հետևանքների և հասարակության հարաճուն բարոյազրկման ցուցադրումը, այնպես էլ սեփական դավանանքի խոր իմացություն ու կենդանի և ոչ թե ձևական հաղորդության հաստատումը Եկեղեցու հետ:

բ) Լայնախոհ վերաբերմունքը այլադավանների հանդեպ և հարգանքը նրանց հոգևոր ժառանգության, պաշտամունքի ձևերի և կենցաղային ավանդական նիստուկացի ընկալմամբ: Սա չի կարող իրականանալ՝ առանց դիմացինի համոզմունքներն ու աշխարհընկալումը վերջինիս տեսանկյունից դիտելու իրողության: Անհրաժեշտ է այլադավան հարևանի կրոնական համոզմունքների խոր և ոչ թե մակերեսային ու հաճախ թյուր իմացություն:

գ) Խաղաղության և հաշտության ընդհանուր կոնտեքստում պետք է, սակայն, առավելագույնս թույլ չտալ մարդկանց ընկերային, գաղափարական, մշակութային և այլ ճնշումների ենթարկելով կամ էլ բացահայտ անհեթեթի մարդորսությամբ դավանափոխության ենթարկելը: Սա կարևոր պայման է առաջին երկու կետերի միջոցով ձեռք բերված առավելությունները արդյունավետ դարձնելու համար:

Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, ապա այն այսօր հայտնվել է յուրահատուկ պայմաններում: Այն իր կողմնորոշմամբ եվրոպական երկիր է և այդպիսին էլ ընդունվում է արդեն միջազգային հանրության կողմից. միևնույն ժամանակ կենցաղակերպի ու աշխարհընկալման մեջ այն դեռևս շարունակում է մնալ որպես բացառապես ասիական երկիր: Կրոնական կոնտեքստում դիտելիս, մենք կարող ենք տեսնել, որ հանրապետության վիճակը, թեև կան այսօրվա որոշ առարկայական նպաստավոր պայմաններ, բոլորովին էլ բարեւտես պատկեր չի ներկայացնում:

Այսօր պատեհ կամ անպատեհ առիթներով զանազան ամբիոններից 1700-ամյա քրիստոնյա հայտարարվող ազգն ավելի քան աշխարհայնացած վիճակում է: Պարզագույն թվաբանական հաշվարկներն էլ կարող են ցույց տալ, որ հանրապետության բնակչության անգամ մեկ տոկոսը կանոնավորապես եկեղեցի չի հաճախում: Ուստի բնակչության ինքնությունը տոկոսի կապը եկեղեցու հետ, եթե այդպիսին կա, զուտ ձևական է և հաճախ պարզ սուրբ է ազգային սովորությունը: Խոսք չի կարող լինել քրիստոնեական ինքնության խոր և ճշմարտացի ընկալման մասին. բնակչության գրեթե 100 տոկոսն էլ, անգամ համոզված աթեիստները, առանց այլևայլության հայտարարում են, որ իրենք քրիստոնյա են, սակայն չնչին փոքրամասնություն է, որ տարրական գիտելիքներ ունի քրիստոնեության մասին անգամ ոչ թե որպես դավանանք, այլ սոսկ կենսաձև:

Վերևում մենք հիշեցինք որոշ առարկայական նպաստավոր պայմանների մասին: Ամենավերևում հիշված երկրորդ կետը կարծես թե այսօր մեզ չի սպառնում: Մեր հանրապետության մեջ գրեթե չկան կրոնական այլադավան փոքրամասնություններ: Մեծագույն հատվածը եզդիներն են, որոնք, սակայն, կրոնական իմաստով ազդեցիկ չեն: Այնուամենայնիվ, այլադավանների հետ բազմադարյա համակեցությունը իր զգալի հետքերն է թողել մեր ժողովրդի հոգեբանական կերտվածքի և կենցաղային նիստուկացի վրա: Ուստի այսօր մենք գործ ունենք ոչ թե սինկրետիզմի սպառնալիքի, այլ դրա

իրական գոյության հետ, որը մշտապես խոչընդոտում է մեզ մեր քրիստոնեական ինքնության որոնման մեջ:

Այսօր Հայաստանում չկա նաև կրոնական փոքրամասնությունների պայքար, թեև որոշ աղանդավորական հակում ունեցող հարանվանություններ փորձում են իրենց «զոհի» լուսապսակով ներկայացնել: Նման կրոնական փոքրամասնությունների գոյությունն այսօր մեկ անգամ ևս վկայում է աշխարհայնացման ու սինկրետիզմի վնասների մասին, քանզի նոր հավատք հայտնաբերածներից շատերը կա՛մ տարրական գիտելիքներ իսկ չունեն Մայր Եկեղեցու հավատքի ու դավանանքի մասին, կա՛մ էլ բացարձակ որևէ վտանգ չեն տեսնում արևմտյան կամ արևելյան զանազան կրոնների ազդեցության մեջ:

Այժմ որո՞նք պետք է լինեն Հայաստանի Հանրապետության խնդիրները՝ կրոնական տեսանկյունից դիտված: Ցավալի է, բայց փաստ, որ այսօր կրոնական բոլոր հիմնախնդիրների լուծումը դրված է Հայ Առաքելական Եկեղեցու ուսերին: Եկեղեցին պետք է պայքարի աշխարհայնացման դեմ, ջանքեր գործադրի քրիստոնեական ինքնության ձևավորման համար, լուսաբանություններ ու վերլուծումներ կատարի մյուս կրոնական հարանվանությունների մասին, խաղաղություն և ներդաշնակություն ապահովի համայնքների միջև և անգամ այն համայնքների հետ, որոնք անթաքույց թշնամանքով են տրամադրված իր նկատմամբ:

Այդպե՞ս, սակայն, այս ամենը սոսկ հոգևորականության գերխնդիրն է: Բնավ՝ ո՛չ, և երբեք՝ ո՛չ: Աշխարհայնացման ու սինկրետիզմի դեմ պայքարը, սեփական ուղղափառ քրիստոնեական ինքնության հաստատումը և լայնախոհ վերաբերմունքի դաստիարակումը մեկ խավի կամ մեկ դասակարգի գործ չէ, այլ համազգային խնդիր: Մենք այստեղ չենք կարող ներկայացնել այդ նպատակի իրագործման համար հնարավոր ծրագիր, քանզի դրա համար հիրավի անհրաժեշտ են բոլոր խավերի միասնական ու ներդաշնակ գործունեությունը՝ հայրենի պետության, կառավարության և եկեղեցական իշխանության ընդհանուր հովանավորության ու ղեկավարության ներքո:

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի (1780—1799 թթ.) կոնդակներն ու նամակները բացառիկ կարևորություն ունեն Հայաստանի ու հարևան երկրների 18-րդ դարի վերջին տասնամյակների քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի պատմությունն ուսումնասիրելու համար: Բարձր գնահատելով Ղուկաս Կարնեցու նամականու արժեքը, Գյուտ քահանա Աղանյանցը «Դիվան հայոց պատմության» հատորներից մեկն ամբողջովին նվիրել է նրա նամականուն[1]: Գ. Աղանյանցի ընդհատված աշխատանքը շարունակել է տողերիս հեղինակը՝ «Դիվանի» նոր շարքի առաջին հատորում հրապարակելով ավելի քան 1200 նամակներ[2]: Դրանք ընդգրկում են Ղուկասի գործունեության սկզբնական տարիները՝ 1780—1785 թթ.: Պատրաստ են հրատարակության մնացած տարիների նամակները, որոնք ամփոփվելու են երկու գրքերի մեջ: Ստորև ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում Ղուկասի անտիպ նամակներում առկա որոշ նյութեր, որոնք վերաբերում են Էջմիածնի ու շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային պատմությանը: Դրանք գլխավորապես քաղված են կաթողիկոսի նամակագրությունը պարունակող սևագիր մատյաններից:

Ղուկաս Կարնեցու նամակներում ու կոնդակներում անընդհատ շոշափված են Էջմիածնի վանքի ու շրջակա վայրերի տնտեսական ու մասամբ մշակութային կյանքի հետ կապված բազմաթիվ հարցեր: Նամակներում շատ վկայություններ կան Էջմիածնի նվիրակների գործունեության վերաբերյալ, որոնք ուղարկված լինելով հեռավոր թեմերը, փութաջանորեն կատարում էին նյութական միջոցներ, տարբեր տեսակի ապրանքներ ու մթերք-

---

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780—1800), հրատարակեց Գիւտ արագ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1898:

[2] «Դիւան հայոց պատմութեան», նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա (1780—1785), աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984:

ներ ձեռք բերելու և Էջմիածին ուղարկելու ոչ դյուրին առաջադրանքները: Առատ տեղեկություններ կարելի է գտնել բազմաթիվ մարդկանց ու հաստատությունների կողմից Էջմիածնին արված նվերների, վանքի համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերման ու գնման, ուխտավորների այցելությունների, ապրանքների ու մթերքների գների, Երևանի խանության սահմաններում ու շրջակայքում դրամի կուրսի և այլ հարցերի մասին: Կաթողիկոսը շատ ժամանակ էր հատկացնում կտակներով Էջմիածնին ժառանգված դրամի ու գույքի ձեռք բերմանը: Այդ կապակցությամբ նա հարկադրված էր գրագրության մեջ մտնել տարբեր մարդկանց հետ: Միաժամանակ նա ժողովարարական կոնդակներ էր տալիս սուր կարիքի մեջ ընկած անձանց, ինչպես և նյութական օգնության կարոտ մի քանի եկեղեցիների ու վանքերի:

Նախկինի նման նամականու մեջ շատ տեղեկություններ կան թեմերում Էջմիածնի համար գանձանակների ստեղծման, գումարների հավաքման ու առաքման, գանձապահների ընտրության ու փոփոխման վերաբերյալ: Գրություններում խոսվում է նաև գերի ընկած մարդկանց փրկագնման, Էջմիածնապատկան ճորտերի վիճակի, պարբերաբար կատարվող մոմահավաքության մասին և այլն:

Չնայած քաղաքական միանգամայն անբարենպաստ պայմաններին, Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման գործը ճիշտ է դանդաղորեն, բայց և այնպես առաջ էր գնում, և տարբեր անձանց ողղված նամակներում կաթողիկոսը գրում էր նաև նորոգման ընթացքի մասին:

Հաջողությամբ էր գործում Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը, և կաթողիկոսի նամակների մեջ արտացոլված են տպարանն անհրաժեշտ տպագրական թղթով ու գործիքներով ապահովման, լույս ընծայված գրքերի վաճառքը կազմակերպելու և դրանք զանազան վայրեր ուղարկելու խնդիրները:

Այս ամենը քաղաքական կացությանը վերաբերող, ինչպես և այլ նյութերի հետ հրաշալի ատաղձ են Արևելյան Հայաստանի ու շրջակա վայրերի պատմություն լուսո ամենայնի և բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար:

Այժմ ավելի հանգամանորեն ծանոթանանք նշված տեղեկություններին:

Ինչպես երևում է գրագրություններից, վանքում կամ այլ վայրերում իրականացվող շինարարական կամ վերանորոգման աշխատանքները կատարվում էին գլխավորապես ի հաշիվ դրսից ստացված դրամական նվիրատվությունների: Այլևայլ երկրներում ապրող հայրենասեր հայերը վանքին օգնելու և իրենց հիշատակը հավերժացնելու համար հատկապես մեծ փափագ ունեին մասնակցելու Էջմիածնի Մայր տաճարի նորոգմանը: Իսկ այն ժամանակ նորոգման հատկապես մեծ կարիք ունեին տաճարի սյուները: Շուտով նվիրատվությունների հաշվին նորոգվում են բոլոր սյուները, և ստացված գումարները կաթողիկոսն օգտագործում էր եկեղեցու այլ մասերի նորոգման համար:

Այսպես, 1786 թ. հունվարի 7-ին Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին ուղղված նամակում Ղուկասը գրում է, թե մահտեսի Հարությունն ամիրան 250 դուռուշ էր նվիրել Էջմիածնին և ցանկություն հայտնել նորոգել տալ սյուներից մեկը, բայց քանի որ խարխլված ու թողացած սյուները նորոգվում էին, Ղուկասն այլ որոշում է ընդունում. «պատշաճ տեսաք, զի գարբոյ տաճարիս քառակողմ որմոց արտաքին երեսաց զԴ (4) զԵ (5) կարգ

խախտեալ և անշքացեալ հին քարինաև, զորս փոխեցաք և նորոգեցաք, զայն արասցուք յիշատակ նման»[3]:

Նույն նամակից իմանում ենք, որ նորոգվել է և Աստվածածնի Ավագ սեղանը: Նվիրատու մահտեսի Կարապետին ուղարկվել է նամակ՝ «Ի կողմանէ սեանն սրբոյ տաճարիս միամտեցուցանելով եւ զաղբեր արձանագրութեան օրինակն առ ինքն յղելով»: Երևում է, որ այսու հետ միասին նորոգվել էր նաև մի աղբյուր, որի վրա փորագրվել է նվիրատուի անունը: Այս Կարապետը մի քանի անգամ հիշատակվող Արևելցի Տրճանենց (մեկ այլ տեղ՝ Տրիջանենց) ազգանունը կրող անձն է, որի ուղարկած 500 դուռուշով ավարտվել է տաճարի այուներից մեկի նորոգումը: Նա Էջմիածնին նվիրել էր նաև մի տուն[4]:

Ատենի Ժամագրքի հրատարակության կապակցությամբ 1786 թ. հունիսին Կ. Պոլիս ուղարկած կոնդակում Ղուկաս Կարնեցին, նշելով Էջմիածնի Մայր տաճարի ծանր վիճակի և այն մասին, որ իրենից առաջ մի քանիսը «մտադրութիւն են ունեցեալ առ ի ծաղկել զսա վերստին, բայց ոչ է յաջողեցեալ նոցա»: Եվ ինքն այժմ, ինչպես խոստացել էր, նորոգել տալով մնացած երկու այուները՝ «օգնութեամբ տրոց օրհնեալ ազգիդ մերոյս, սկսաք դարձեալ զբոլոր մէջն բռնցուցանել եւ ծաղկել տալ եւս»[5]:

Էջմիածնի տաճարի նորոգմանը մեծ մասնակցություն էին ցուցաբերում Հնդկաստանի հայերը: 1787 թ. դեկտեմբերին գրված մի նամակից իմանում ենք, որ սուրաթցի Հոհաննջան աղայի տված 700 ռուփիով նորոգվել է եկեղեցու պարիսպը[6]: Ղուկասը 1787 թ. դեկտեմբերին նվիրատու ջուղայեցի Մարգար Խալդարյանին (Բաղդադ) գրում է, որ սեղանատան համար «քարն եւ զայլ նիւթն պատրաստեցաք, ի գարնանն շինել տալոց եմք»[7]: Իսկ մահտեսի Նիկողոսին (Թոխաթ) 1790 թ. նոյեմբերին հայտնում է, թե ձմեռային սեղանատան վրա սկսել է սրբատաշ քարերով կառուցել ամբարանոց, որը հարավային կողմից ունենալու է չորս լուսամուտ, իսկ արևելյան կողմից՝ մեկ մեծ լուսամուտ: Նա ձգտում էր 1790 թ. ավարտել շինարարությունը, բայց արշավանքների ու կռիվների պատճառով «ոչ լրացաւ շինուածն»: Բայց պատերն արդեն կանգնած են և «ծածկն լինելոց է Աստուծով ի գարնանն, որոյ նիւթքն ի պատրաստի են այժմ»[8]:

1788 թ. ապրիլի 24-ին բենկալացի մահտեսի Ստեփան ամիրային (Ադրիանուպոլիս) ու նրա յուրայիններին Ղուկասը տեղեկություն է ուղարկել այն մասին, որ նորոգել է Էջմիածնի տաճարի շրջապատի սալահատակը, փոխել պատերի արտաքին կողմի քարերը, հիմնովին վերանորոգել ամբարանոցը, հարավային կողմում եղած խցերը և մեծ դուռը՝ «սրբատաշ քարամբք»: Նորոգված է նաև սեղանատունը՝ փոքր սրահի հետ միասին[9]:

Վերանորոգման որոշ աշխատանքներ հնարավոր է եղել իրագործել այլ վայրերում: Օրինակ, տեղեկություն կա Ղոշավանքի ու նրա պարսպի նո-

---

[3] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4501, էջ 1042:
[4] Ձեռ. 4481, էջ 181բ:
[5] Ձեռ. 4501, էջ 963:
[6] Նույն տեղում, էջ 1347:
[7] Նույն տեղում, էջ 1342:
[8] Նույն տեղում, էջ 1564:
[9] Նույն տեղում, էջ 1564:

պոգման մասին, որն, ի դեպ, կատարվել է Մաղզբերդի Մահմադ բեկի նախաձեռնությամբ[10]:

1788 թ. փետրվարի 16-ին Կարսի մեծահարուստներից մեկին՝ Գևորգ աղային Ղուկասը գրում է, թե «Իսկ վասն խախտեալ տեղեացն եւ պարսպին Ղօշավանից, զոր Մահմատ բէկն Մաղզբերդու կամէր շինեցուցանել տալ եւ առաջնորդն նորին եւ այլք, ոչ յօժարէին առ այս կամսն տաճկին՝ պատճառելով, թէ ոչ գոյ դրամ»: Նա այնուհետև գրում է, թե առաջնորդից ահա երեք տարի է «ոչինչ եմք տեսեալ» և կարգադրում է՝ «յամաձայն լերուք ընդ վերոյ յիշեալ տաճկին եւ շինեցուսջիք»[11]:

Ղուկասի նամակներում տվյալներ կան այս մասին, որ մահմեդական մի քանի իշխաններ դիմում էին կաթողիկոսին, խնդրելով թափուր չթողնել իրենց տիրույթներում եղած վանքերի առաջնորդների պաշտոնը՝ հաստատման համար ներկայացնելով իրենց ընտրած անձանց թեկնածությունը: Այսօրինակ «հոգատարությունը» Հայ Եկեղեցու նկատմամբ թելադրված էր դիմողների շահերից: Նրանք քաջ գիտակցում էին, որ հոգևոր առաջնորդից գրկված համայնքը կամ անպարիսպ ու ավերված վիճակում գտնվող եկեղեցին պատճառ կդառնային իրենց եկամուտների մի զգալի մասն ապահովող հայ աշխատավոր հողագործների ցրման ու հեռացման, ուստի դրա դեմն առնելու համար նրանք հանդես էին գալիս իրենց համար այդքան անտովոր դերում:

Օգտվելով համեմատաբար դադարից ու խաղաղ վիճակից, շինարարական որոշ աշխատանքներ է սկսում նաև Երևանի Հուսեյն-Ալի խանը: Նա Երևան է հրավիրում Խոյի Ահմեդ խանի գլխավոր ճարտարապետ Միրզա Զաֆարին և հանձնարարում ամրացնել Երևանի բերդը և իրականացնել մի շարք կառույցներ: Շինարարությունը շարունակվում է նաև Ահմեդ խանի օրոք, որի պատճառով տուժում է Էջմիածինը: Երևանի խանն առանց այլևայլության տանում է Էջմիածնի վանքի համար աշխատող քարհատներին, և Ղուկասը չի կարողանում արգելք հանդիսանալ դրան: «Սակայն ի ծագիլ գարնանն մանուկ խանն մեր ի բերդն զմեծամեծ ապարանս հիմնարկեալ, զամենայն քարհատսն մեր տարաւ, որոնց ինար չեղաւ արգելոյ», հաղորդել է Ղուկաս Կարնեցին 1789 թ. սեպտեմբերին Եփրեմ վարդապետին[12]: Մինչ այդ (1789 թ. հունիսի 23-ին) Կ. Պոլսի նվիրակ Մինաս վարդապետին նա գրել էր. «յայսմ ամի շինարարութեանն մերոյ ձախորդութիւն եղեւ, վասն իշխողին զգործաւոր վարպետսն տանելոյ զիւր շինուածս շինեցուցանել, եւ մեք դժուարութեամբ հայթայթեմք վասն թերակատար մնացելոցն մերոց»[13]:

Այնուամենայնիվ Ղուկասի շինարարական թափը չի պակասում և շատ չանցած նա վերսկսում է Ս. Հռիփսիմեի գանգակատան շինարարությունը «Իսկեալայքն (փայտամածները—Վ. Գ.) կառուցեալ կային, եւ չէր թերակատար թողլի», գրում է նա Հոհաննջան աղային (Սուրխաթ) 1791 թ. դեկտեմբերի 31-ին[14]: Շինարարություն ավարտվում է հուլիս ամսին[15]: Օգոստոսին

---

10 Ձեռ. 4481, էջ 238բ:

11 Նույն տեղում, էջ 238բ—239ա:

12 Ձեռ. 4501, էջ 1516:

13 Նույն տեղում, էջ 1405:

14 Նույն տեղում, էջ 1718:

15 Նույն տեղում: Էջմիածնի վանքի ծախսերի մատյանում 1791 թ. հունիսի 8-ին կատարված մի գրանցումից երևում է, որ Հռիփսիմեի վանքի գանգակատան շինարարությամբ

լրացնում են սեղանատան վերնահարկի պակաս մնացած տեղերը և «ապա ջանացաք ըստ խնդրոյն քո ձեռնարկել տալ ի վերնայարկս խցիցն»: Այնուհետև նույն նամակում խոսվում է կիսատ մնացած կառույցների և շինարարական ապագա ծրագրերի մասին (նոր խցերի և դպրոցի համար ամառային շենքի կառուցում)[16]:

Ղուկաս Կարնեցու շինարարական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում Էջմիածնի Մայր տաճարի պատերի և այուների նկարազարդումը, որը նա կատարել տվեց 18-րդ դարի հայ մեծանուն նկարիչ Հովնաթան Հովնաթանյանին: Վերջինս այդ գործին ձեռնամուխ էր եղել դեռևս Սիմեոն Երևանցու օրոք, սակայն երկրի քաղաքական վիճակն այն ժամանակ այնքան էլ հարմար չէր՝ այդօրինակ աշխատանքը հաջողությամբ ավարտին հասցնելու համար, ուստի այն շատ թերի էր մնացել: Ղուկասը նախ Կ. Պոլսից և Զմյուռնիայից բերել է տալիս անհրաժեշտ ներկերը, նյութապես ապահովում Հ. Հովնաթանյանին, և վերջինս շարունակում է իր գործը: Տարբեր անձանց ուղղված իր մի շարք նամակներում Ղուկասը գրում է Հ. Հովնաթանյանի աշխատանքի ընթացքի և ի վերջո հաջողությամբ ավարտելու մասին:

Զնայած տաճարի նորոգման մասին կազմված վիմագիր արձանագրության մեջ, որը հիանալի պահպանված է մինչև հիմա, և որի վերծանությունը զետեղված է «Դիվանի» առաջին գրքում, ասվում է այն մասին, որ «ի թուին ՌՄԼԵ (1786) ... զբոլոր մէջս սորին. որ անշքացեալ էր, նորապէս բոեալ ծաղկեցուցի»[17]: Բայց, ինչպես երևում է, նկարազարդման աշխատանքներն այդ ժամանակ դեռ ավարտված չէին, ուստի Հ. Հովնաթանյանը նորից է հրավիրվում Էջմիածին:

1786 թ. հունվարի 7-ին Կ. Պոլսի Ավիրակ Խասհակ վարդապետին ուղղված նամակից[18] իմանում ենք, որ Հովնաթանի աշխատանքը, նկարչի հիվանդության պատճառով, կանգ է առել: Ումմա խանի արշավանքի վտանգի պատճառով նա ևս մյուսների հետ Երևան է փոխադրվել և մնացել այնտեղ երեք ամիս. «Վարպետ Հովնաթանն յամառանս երկար հիւանդացեալ եւ ընդ մեզ յԵրեւան եւս կացեալ յերեք ամսուչափ ժամանակս խստիւանեցաւ ի բանից: Այլ այժմ յարուցեալ ի հիւանդութենէն, զմնացեալ պատկերս մարգարէիցն նկարէ յօտայումն: Յետ որոց զայլ պատկերսն պարտի նկարել, մինչեւ ցջերմանալ եղանակին, յորում ի յեկեղեցւոջն ի վերայ բոանն զծաղիկս արասցէ»:

գբաղվել է Վանից հրավիրված քարհատ Պողոսը, որին տրվել են մի շարք նվերներ. «Քարհատ վարպետ Պօղոսն մինչ սուրբ Հռիփսիմէի վանից զանգակատունն շինեալ աւարտի հասոյց, որոյ այսինչ խիլայ ետուք՝ Ա (1) բինիշ ինկլիզի լաւ չուխայ, Ա (1) շալ մօտ կապայ նոր, Ա (1) ֆիլամանկ գթակ՝ ղալամի մորթով, Ա (1) Շամու ալաճայ արխալուղ՝ քիչ հագած, ի յունիսի Ը (18)» (Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 148): Նույն փաստաթղթից երևում է, որ զանգակատան շինարարությանը մասնակցել են նաև խառատներ Պետրոսը և Մկրտիչը, որոնց նս տրվել են նվերներ (մեկական կապա և գդակ) «վասն սուրբ Հռիփսիմէի զանգակատան իսկէլէին տրեցան այսոքիկ» (նույն տեղում, էջ 149): Քարհատ Պողոսը Էջմիածնից մեկնել է նոյեմբերի 28-ին, և այդ ժամանակ էլ նրան նվերներ են տվել (երեք հատ հագուստացու կարմիր մահուդից ֆես, սանր, սրբիչ, ցամքոց, արկղ, երեք հատ դանակ (նույն տեղում, էջ 149): Վանքի ծախսերի մատյանի տվյալներով այս ժամանակ Ղուկասը կառուցել է տալիս ջրաղաց և մի քանի քանքան (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 365):

[16] Ձեռ. 4501, էջ 1718:

[17] «Դիւան հայոց պատմութեան», նոր շարք, գիրք առաջին, էջ 35:

[18] Ձեռ. 4481, էջ 181բ:

Նա գրում է, որ «յայս աւուրսն» պետք է այսն ծաղիկները (նկարները) պատվիրի. «զի աշակերտացն ի վերայ կտաւոց առնել տացէ՝ օժանդակութեամբ իրով: Այժմոյս աւարտեցեալ տեղիքն են՝ մեծ սեղանն եւ բոլոր իսկ արեւելեան որմն եւ գօտին եւ կամարքն, եւ առաստաղն ըստ հարկաւոր տեղեացն, եւ սուրբ Յովհաննիսի եւ սուրբ Ստեփաննոսի սեղանքն: Եւ մնացեալքն են մեծ կաթուղիկէի մէջն՝ սիւնքն, եւ հարկաւոր պատկերք ոմանք, զորս թէ Աստուած յաջողեացէ, նկարեցուցաք»[19]:

Ինչպես երևում է, Հովնաթանն Էջմիածին էր բերել իր աշակերտներին: Նրանցից մեկի՝ Հովհաննեսի անունը հիշվում է Թիֆլիսի առաջնորդ Մարտիրոս վարդապետին և գործակալ Տեր Ղազարին 1786 թ. մայիսի վերջին ուղղված նամակում[20]: 1786 թ. մարտի 20-ին Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին գրում է, որ «զլաճուարթ շատ ունիմք, բայց Յովնաթանն բանեցուցանէ, զի որմոց և պատկերաց ձեռնտու են և ոչ թղթոյ»: Նա էլի է պատվիրում լաճուարդ[21]: Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին 1786 թ. մայիսին գրած մի նամակից երևում է, որ Հովնաթանն աշխատել է իր չորս աշակերտների օգնությամբ՝ «Յովնաթանի զմիւս աշակերտն ևս բերել ետուք ի Թիֆլիզու, որով եղեն չորեքին»[22]:

Այնուհետև Հովնաթանը վերադարձել է Թիֆլիս: 1787 թ. մարտի 8-ին Ղուկասը Երևանից նամակ է գրել Հովնաթանին. «զի ելեալ եկեսցէ Բ (2) աշակերտօքն՝ Յովհաննիսիւն եւ Յակոբաւն»[23]: Իսկ Թիֆլիսի առաջնորդ Մարտիրոս վարդապետին և գործակալ Ղազարին հանձնարարում է նամակը տալ նրան «եւ օր մի յառաջ յղեսցեն առ մեզ Բ (2) աշակերտօքն, եւ եթէ հարկաւորիցի աշակերտողն դրամ, տացիք»[24]: Մայիս ամսին գրված մի նամակից իմանում ենք, որ Հովնաթանը այն ժամանակ դեռևս Թիֆլիսում էր: Կաթողիկոսը գրել է. «Վասն պարոն Յովնաթանին, եթէ յայսմ ամսոջ գալոց է, յոյժ բարւոք, իսկ թէ ոչ, այլեւս մի գայցէ»[25]:

Մեզ որոշակի հայտնի չէ, թե ե՞րբ է Հովնաթանը կրկին եկել Էջմիածին: 1788 թ. հոկտեմբերին Ղուկաս Կարնեցու գրած մի նամակից (ուղղված Զմյուռնիայի առաջնորդ Գալուստ վարդապետին) երևում է, որ Հովնաթանը Էջմիածնում է և շարունակում է վանքի նկարազարդման գործը. «Ի յառաստաղէն միւնչեւ ի յորմոց և սեանց այն տեղին, ուստի զյատակն մի մարդոյ հասակի մնայ, բոլորապէս զարդարել ետուք խորհրդաւոր պատմի մարդոյ հասակի մնայ, բոլորապէս զարդարել ետուք խորհրդաւոր պատկերօք և վայելուչ ծաղկմամբք՝ հանդերձ մեծ սեղանի մարմարոնեայ դիմօքն և սուրբ իջման տեղեաւն, և Գ (3) դրամբքն և գաւթիւն, որ այլ պակաս չմնաց, եւ աճա զՅովնաթանն արձակեմք գնալ ի տուն իւր»[26]:

Որմնանկարչությունն ավարտվել է 1788 թ. աշնանը՝ «Յաշնանս զսուրբ տաճարին ծաղկեցումն աւարտեալ, զվարպետ Յովնաթանն արձակեցի ի տան իւր»[27]: Բայց գործը լիովին ավարտված չէր և պետք է շարունակվեր:

---

19 Ձեռ. 4481, էջ 181բ:
20 Նույն տեղում, էջ 181ա:
21 Ձեռ. 4501, էջ 1050:
22 Նույն տեղում, էջ 962:
23 Ձեռ. 4481, էջ 201ա:
24 Ձեռ. 4481, էջ 200բ:
25 Նույն տեղում, էջ 205բ:
26 Ձեռ. 4501, էջ 1177:
27 Նույն տեղում, էջ 1186:

1789 թ. ամռանը Երևանի խանի հրավերքով Հովնաթանն իր երկու որդիների հետ միասին գալիս է Երևան և օգոստոսի 18-ին այցելում Էջմիածին: «Յովնաթան ծաղկպարն ըստ խնդրոյ խանին մերոյ, որ եկեալ էր, եկն ի սուրբ Աթոռս ուխտ, աջահամբոյր ետ ընդ Յակօբ և Մկրտիչ տղայիսն իրոյ՝ Դ (4) ոսկի ի յօգոստոսի 18»[28]: Ըստ երևույթին նրան հանձնարարվելու էին Երևանի նորակառույցների ներքին հախշազարդման աշխատանքները, բայց, ինչպես հայտնի է, դրանից մի քանի օր առաջ (օգոստոսի 12-ին) զինված ընդհարումներ սկսվեցին Երևանի խանի և Բայազետի փաշայի միջև: Երևանցիները հարձակվել էին Բայազետի գյուղերի վրա, բայց փաշայի զորքերը թիկունքից հարվածելով, պարտության էին մատնել նրանց: Օգնություն ստանալով նախիջևանի խանից, Երևանի խանը՝ Մահմեդը, կրկին արշավում է դեպի Բայազետ[29]: Այս պայմաններում նա, բնականաբար, հնարավորություն չուներ զբաղվելու շինարարական աշխատանքներով, ուստի Հովնաթանին ետ է ուղարկում:

«Յովնաթանն,—կարդում ենք վանքի ելից մատյանում,—որ ըստ խընդրոյ խանին Երեւանայ եկեալ էր, որ պատկեր նկարեսցէ, խանն մուրախասէր արած, թէ գլուխս ղալմաղալ է, որոյ ի դառնալն, որ գնալոց էր ի Թիֆլիզ, ետուք Բ (2) գազ ֆիլամանկ, Ա (1) չախու եւ Ա (1) մահրամայ: Իւր տղային՝ գազ եւ կէս մահուտ, չախու եւ մահրամայ: Յակոբին՝ Ա (1) Շամու ալաճայ, չախու եւ մահրամայ: Ի յօգ. 29»[30]:

1790 թ. հունվարի վերջերին Ղուկասը նամակ է գրում Հովնաթանին և առաջարկում նկարել տաճարի մնացած պատկերները. «Եթէ կամեցիս, եկեսցես ի սուրբ Զատկին ի սուրբ Աթոռս՝ հանդերձ որդւով քով Մկրտչիւն ի նկարումն այնց: Իսկ եթէ ոչ, զչափսն ինցա յղեսցուք յայդր առ քեզ, զի նկարեսցես զայնոսիկ և յղեսցես ի սուրբ Աթոռս առ մեզ»[31]:

Պայմանի համաձայն Հովնաթանը Էջմիածին է գալիս գարնանը և պետք է կարծել, որ կատարում է կաթողիկոսի հանձնարարությունը: Նա եկել էր Մկրտիչ որդու հետ և ապրիլի 16-ին լինելով Էջմիածնում, տվել էր աջահամբույր՝ չորս ոսկի[32]: Հովնաթանի այս նոր այցելության մասին հիշատակված է Թիֆլիսի առաջնորդ Մարտիրոս վարդապետին և գործակալ Տեր Ղազարին հասցեագրված Ղուկասի 25 ապրիլի 1790 թվակիր նամակում[33]:

1792 թ. աշնանը Հովնաթան Հովնաթանյանը դարձյալ Էջմիածնում էր: Ելից մատյանի համառոտ արձանագրության վկայմամբ, նա մի պատկեր էր արել Շողակաթի վանքի համար, և նրան վճարել էին 13335 դիրամ՝ «Պատկեր մի առաք ի վարպետ Յովնաթանէն վասն սուրբ Շողակաթի վանից խաչկալին, գինն ետուք ԺԳՌԳՃԼԵ (13335) դ[իրամ] ի սեպ[տեմբերի] 6»[34]:

Պետք է ենթադրել, որ նա եկել էր կատարելու Երևանի խանի հանձնարարած աշխատանքը: Հաջորդ գրանցումից երևում է, որ նոյեմբերի 14-ին նա Էջմիածնում էր, և նրան տրվել են մի շարք նվերներ՝ կտորեղեն,

---

[28] Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 38, էջ 52:

[29] **Վ. Ռ. Գրիգորյան,** Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780—1800), Երևան, 1958, էջ 137:

[30] Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 284:

[31] **Ձեռ.** 4481, էջ 313ա:

[32] Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 38, էջ 58:

[33] **Ձեռ.** 4481, էջ 319ա:

[34] Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 436:

դաճակներ, արբիչներ՝ «Ա (1) ֆիլամանկ, Բ (2) գազ կարմիր շալ, Բ (2) չախու, Բ (2) մաճրամայք»[35]:

Ղուկաս Կարնեցու ճամակներից տեղեկանում ենք, որ Էջմիածնի դըպրոցը շարունակում էր գործել, որտեղ սովորելու էին գալիս ոչ միայն մոտակա վայրերից, այլև Կ. Պոլսից, Զմյուռնիայից և Արևմտյան Հայաստանի զանազան բնակավայրերից: Ելից և մտից մատյաններն ուշագրավ ցյութեր են պարունակում աշակերտների կազմի, նրանց ցյութական ապահովման, վարժապետների և այլ հարցերի մասին: Վարժապետներ հիշվում են երկու հոգի՝ Մարգար վարդապետը (1786, 1791, 1792 թթ.)[36] և Նիկողայոս վարդապետը (1787—1789 թթ.)[37]: Աշակերտների թիվը, նախորդ տարիների համեմատ, չէր ճվազել: Եթե 1785 թ. ընդամենը 29 հոգի էին[38], այդքան էլ կային 1786 թ. հունվարի 5-ին, երբ Նոր տարվա կապակցությամբ նրանցից յուրաքանչյուրին տրվել է մեկական աբասի[39]: Այդ նույն կապակցությամբ վարժապետներին սովորաբար տալիս էին 2000 դիան[40]: 1787 թ. աշակերտների թիվը պակասում է երեքով՝ մնում են 26-ը[41], իսկ 1788 թվականին՝ 27 հոգի էին[42]: Այնուհետև նրանց թիվն աստիճանաբար ճվազում է՝ 1789 թ. 24 աշակերտ[43], 1790 թ., 25[44], 1791 թ.՝ 20[45], իսկ 1792 թ. փետրվարին՝ 23[46]:

Դժբախտաբար, բացակայում են տեղեկություններ ուսման դրվածքի և դասավանդված առարկաների մասին: Ավարտողները մեծ մասամբ հավմալրում էին վարդապետների շարքերը և զանազան պաշտոններ ստանձնում վանքի ներսում, կամ էլ որպես ճվիրակներ ուղարկվում տարբեր երկըրներ: Մեզ են հասել նրանց ձեռքով գրված բազմապիսի ցյութեր (ճամակներ, արձանագրություններ, գրանցումներ ելից և մտից մատյաններում և այլն), որոնք վկայում են նրանց գրագիտության բավական բարձր մակարդակի, շարադրման մեջ վարպետության հասնելու մասին: Էլ չենք խոսում գրագիրների վերաբերյալ, որոնք հաջողությամբ կատարում էին վանքի գրասենյակային ողջ ծառայությունը: Վերջիններս 1788 թ. սկզբների տվյալներով ընդամենը վեց հոգի էին (Հակոբ, Աստվածատուր, Անդրեաս, Թադեոս, Հակոբ և Հովհաննես վարդապետներ)[47]:

Դպրոցում, անշուշտ, դասավանդվել է կրոն, հոգևոր երաժշտություն, քերականություն, պատմություն և այլն: Ելից մատյաններից տեղեկանում ենք, որ տոն օրերին՝ Նոր տարում, բարեկենդանին և Վարդանանց տոնին, Վեհարանի բակում կամ կալերում վարժարանի աշակերտները մասնակցում էին հայկական ըմբշամարտի՝ կոխի մրցումներին: Մասնակիցների թվում հիշատակվում են նաև վանքի հրացանակիրները, Վաղարշապատի երիտասարդները և վանք ընդունված նորեկները, որոնց մասին գրում են «խցի

---

35 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, էջ 300:

36 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 342, 413, 428:

37 Նույն տեղում, էջ 359, 376, 386, 399:

38 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, էջ 117:

39 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 342:

40 Նույն տեղում, էջ 342, 360, 386, 399, 413: .ճ:

41 Նույն տեղում, էջ 360:

42 Նույն տեղում, էջ 373:

43 Նույն տեղում, էջ 386:

44 Նույն տեղում, էջ 399:

45 Նույն տեղում, էջ 413:

46 Նույն տեղում, էջ 428:

47 Նույն տեղում, էջ 373:

տղաներ»: Որպես կանոն «կոխ բռնողաց» փող էին ձվիրում և այդ մասին կատարում գրանցում ելից մատյանում[48]: Հետաքրքրական է, որ մրցումների ժամանակ սովորություն է եղել նաև հանդիսականներին ներկայացնել զոմեշների կռիվներ, և ելից մատյանում բարեխղճորեն գրանցվել են այդ կապակցությամբ տրված պարգևները. «Իսկ գոմէշ կռուացնելոյ աղագաւ ետու Զ (6) ապասի» (1786 թ. փետրվար)[49]. «Իսկ վասն գոմէշ կռուացնելոյն՝ ԱՌ (1000) [դիաւն] ...» (1792 թ. փետրվար)[50]:

Մի գրանցումից էլ տեղեկանում ենք յուրօրինակ մի հատերգի մասին, որ կազմակերպել էին բարեկենդանի ժամանակ. «Աստուածատուր, Անդրէաս եպիսկոպոսաց, Յովսէփ վարդապետին քեաւրանպաշոյ, Թադէոս, Յակօբ եւ Յովհաննէս վարդապետաց ետու Բ Բ (2-ական) հազար դիաւն, Զաքարիա և Փիլիպպոս սարկաւագաց, Գալուստ եւ Բարսեղ դպրաց ետու Ա Ա (1-ական) հազարդրդեամ՝ մինչ տաղ ասացին առաջին արբազանին Վեհապետին Բարեկենդանի յետո երեկոյին, ամսոյս 3 [1790 թ. փետրվար]»[51]:

Այսպիսի փոքրիկ ուրախություններ էլ էին լինում հայ հոգևորականների համար այն դժվարին, ծանր ժամանակներում:

Անհրաժեշտ է նշել, որ Էջմիածնի դպրոցը գիշերօթիկ էր, և վանքն ապահովում էր սանների բոլոր կարիքները: Ելից մատյաններում գրանցումներ կան վարժարանի տղաներին հագուստներ ու սպիտակեղեն տալու մասին: Օրինակ, 1786 թ. «վարժատան ԻԶ (26) տղայոց տրուել է 29 գդակ, 26 արխալուղ, երկուական շապիկ, երկուական ոտաշոր, տասնու չալ, տասներեք աբա»[52]: 1787 թ. համար նշվում է, որ «վարժատան ԻԶ (26) տղայոց բոլոր շորեղենս ետու»[53]: Եվ այդպես ամեն տարի[54]:

Մատյանների մեջ գրանցված են այն գումարները և հագուստեղենը, որ տրվել են վարժապետներին: 1786 թ. հունվարի 5-ին գրվել է. «Աւետիս ետու վարժապետ Մարգար վարդապետին՝ ԲՌ (2000) դիաւն[55]: 1787 թ. հունվարի 5-ին՝ «Աւետիս ետու վարժապետ Նիկողայոս վարդապետին՝ ԲՌ (2000) [դիաւն]»[56]:

Դրանից հետո էլ ամեն տարի որպես ավետիս կամ հենց այնպես վարժապետներին տրվել է 1000 կամ 2000 դիաւն[57]:

Վարժատան նկատմամբ մշտապես ուշադրության և հոգատարության մասին է վկայում այն իրողությունը, որ դպրոցն ունեցել է իր մրգատու այգին: Ելից մատյանում 1789 թ. հուլիսի 4-ին գրանցված է 1000 դիաւնի ավերը, որ տրվել է այդ այգուց միրգ բերող Փիլիպպոս սարկավագին. «Վարժապետ Նիկողայոս վարդապետն ի վարժարանի բաղջայէն միրք էր յղեալ, բերօղ սարկաւագ Փիլիպպոսին ետու Ռ (1000), ամսոյս 4»[58]:

---

[48] Նույն տեղում, էջ 343, 374, 400, 428:
[49] Նույն տեղում, էջ 343:
[50] Նույն տեղում, էջ 428:
[51] Նույն տեղում, էջ 401:
[52] Նույն տեղում, էջ 122:
[53] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, էջ 129:
[54] Նույն տեղում, էջ 132, 144, 156, 158:
[55] Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 342:
[56] Նույն տեղում, էջ 359:
[57] Նույն տեղում, էջ 386, 399, 400, 413, 428:
[58] Նույն տեղում, էջ 392:

Էջմիածնի բարերարներից Հովհաննջան աղան, որ ապրում էր Հնդկաստանի Սուրաթ քաղաքում, 1791 թ. դեկտեմբերի 31-ին նամակ էր գրել Ղուկասին և ի միջի այլոց առաջարկություն արել Ս. Գայանե վանքում մի վարժապետ պահել՝ «ուսուցիչ արտաքնոց գրեանց, որ թէ աստուստ խնդրոյց եւ թէ յայլուստ եկողաց՝ թէ վանական իցեն եւ թէ աշխարհական, անխնայօրէն դաս ասացէ եւ այլն»: Նա իր վրա է վերցնում ծախսերը՝ տարեկան 500 ռուփի[59]: Այդ առաջարկությունն արժանանում է Ղուկասի հավանությանը: Հովհաննջանին նա գրել է հետևյալը. «Զորս իմացաք եւ յոյժ հարկաւոր եւ մեծավարձ համարելով զկամեցեալսդ, հաւանեալ հաճեցաք: Եւ զի ստիպեալ եւս էիր, թէ շուտով ի գլուխ տարցես, վասն որոյ գրեցաք ի մեծն Պօլիս եւ բերել եւտուք անտի վարժապետ տիրացու Թէոդորոս սարկաւագն»[60]:

Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ եղավ հետագայում, բացվե՞ց արդյոք այդ յուրօրինակ դպրոցը: Բոլոր դեպքերում ուշագրավ է Ղուկաս Կարնեցու միանգամայն դրական վերաբերմունքը լուսավորական գաղափարներով տարված Հովհաննջանի այս կարևոր առաջարկությանը:

Պարբերաբար կրկնվող պատերազմների ու արշավանքների պայմաններում նախ և առաջ վտանգվում էին ճանապարհները, դադարում էր հաղորդակցությունը բնակավայրերի միջև, կանգ էր առնում առևտուրը: Բայց և այնպես, օգտվելով ստեղծված հնարավորություններից, ևվիրակները կարողանում էին մեկնել իրենց նշանակված թեմերը և այնտեղից ապահովում էին ստացված գումարների և հավաքված կամ գնված ապրանքների առաքումը Էջմիածին: Նաև այս կապակցությամբ կաթողիկոսը աշխույժ նամակագրություն ուներ նրանց հետ, պարբերաբար հավաստում էր ուղարկված ապրանքների ստացումը և անում նոր հանձնարարություններ: Այդ ամենի շնորհիվ այժմ հնարավոր է լավ պատկերացում ստանալ Էջմիածնի վանքի ևվիրատվական եկամուտների և ներմուծված ապրանքների մասին:

Շրջակա վայրերից, հատկապես թուրքական տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից, վանքը մշտապես որպես մատաղացու մեծ քանակությամբ անասուններ էր ստանում: Ցավոք, թվական տվյալներ չկան, և մենք հնարավորություն չունենք խոսելու անասունների քանակի մասին, բայց եղած որոշ տեղեկություններ թույլ են տալիս ասելու, որ այդ ձևով հավաքված անասունների թիվը փոքր չի եղել: Այսպես, 1789 թ. Ուչքիլիսայի կողմերից ստացվում են մատաղացու անասուններ և պարզվում է, որ ճանապարհին նրանց մի մասն անհետացել է, ըստ երևույթին գողացել էին. «Իսկ վասն մատաղացու անասնոցն, եթէ ՃԾԾ (150) պակասեալ էր ի հոցանէ ի բերելն, ոչ գիտեմք յորոց է՝ յոչխարաց, թէ ի սեւաոտաւարաց, մինչ իմացուք գրելոց եմք» (Ուչքիլիսայի առաջնորդ Մկրտիչ վարդապետին 1789 թ. հոկտեմբերին գրած նամակից)[61]: Եթե միայն անհետացածները 150 էին, ուրեմն մնացածները պետք է մի քանի անգամ ավելի լինեին: Ի դեպ, անասունների անհետացումները ճանապարհին սովորական բան էին: Էջմիածնում գերադասում էին, որ ուղարկված անասունները լինեին ոչխարներ ու տավար (ըստ երևույթին եզներ): Լծկան անասունների կարիքը մեծ էր: Պահպանվել է կաթողիկոսի մի կարգադրությունը մատաղացու անասունները լծկանների հետ փոխելու մասին: Որպես մատաղացու

---

[59] Ձեռ. 4482, էջ 1728:

[60] Նույն տեղում:

[61] Ձեռ. 4481, էջ 304ա:

հավաքված անասունների ձմեռումը կազմակերպելը կապված էր մեծ դժվարությունների հետ, ուստի կաթողիկոսը երբեմն հանձնարարում էր պահել անասունները մինչև գարուն ու հետո ուղարկել:

Ի՞նչ էր ներմուծում Էջմիածնի վանքը: Նախ նշենք, որ մատաղացու հավաքող գվիրակները նաև յուղի և պանրի հավաքման առաջադրանք ունեին և այդ պատճառով երբեմն կոչվում էին յուղահավաքներ:

Մատաղացու անասուններից բացի, վանքը հավատացյալներից որպես նվեր ստանում էր կովեր, գոմեշներ, ավանակներ: Նամակներում տեղեկություններ կան շինարարական աշխատանքների համար շինանյութեր՝ գերաններ, տախտակներ ու երկաթ ձեռք բերման մասին: Դրանք բերվում էին Կարսի ու Կարինի (երկաթը) կողմերից: Բացի այդ, Կարսից բերում էին նաև գարի, հացահատիկը կալսելու գործիքներ՝ կամեր, որոնք Ղուկասի նամակներում անվանված են կամնասայլեր, սայլի ակներ, ձիթապտուղ, ձիթապտղի յուղ, թուզ, փոքրիկ արկղիկներ, ժամացույցներ: Ուչքիլիսայից՝ տիկերով յուղ: Կարինից ստանում էին հագուստեղեն, կանթեղներ, զմուռս, պաքսիմատ, լիմոն, Ագուլիսից՝ ջրաղացի քար, Հալեպից՝ կանթեղների ու զանգերի պարաններ, Խոյից՝ մարմարի քարեր, Նոր Ջուղայից՝ գորգեր: Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Կարինի, Հնդկաստանի ու Ռուսաստանի գվիրակներին ու առաջնորդներին հաճախ էր հանձնարարվում վանքի կարիքների համար ձեռք բերել տարբեր տեսակի ու զանազան գույնի կտորեղեն: Բերում էին ջահեր, բուրվառներ, զենք (ատրճանակներ), ինչպես նաև պատրաստի հագուստեղեն՝ չուխաներ, ժամաշապիկներ, քուրքեր: Կանոնավոր կերպով, գլխավորապես Վրաստանից, ստանում էին մոմեր: Տեղեկություն կա այն մասին, որ Վրաստանից բերում էին նաև սոսինձ (ձկան թաթախալ):

Մայր տաճարի որմնանկարների աշխատանքը հաջողությամբ առաջ տանելու համար մեծ կարևորություն ուներ Հովնաթանին ժամանակին բարձորակ ներկերով ապահովելը: Այդ բանը կատարվում էր Կ. Պոլսի ու Զմյուռնիայի գվիրակների միջոցով: Այնտեղից ստանում էին նաև տպագրական թուղթ, արծաթե ջահեր, դեղորայք, հեռադիտակներ, ակնոցներ, ժամացույցներ, սաներ, ձկան խավիար (նշված է՝ ձկան հավկիթ), հոլանդական պանիր (Մարդամու պանիր), հոլանդական շաքար, լիմոն և այլն:

Կաթողիկոսը Թոխաթից բերել է տալիս վրանի կտոր և վանքի ճաշարանի համար մեծ քանակությամբ ամանեղեն ու պատառաքաղներ (շիմշիր դըքալներ): Թավրիզից ստանում էին քիշմիշի չամիչ, բադամ, Բրուսայից՝ շուրջառներ, Կեսարիայից՝ սուջուխ, Աշտարակից՝ գինի և այլն: Նամակներից մեկում շնորհակալություն է հայտնվել Երուսաղեմի պատրիարքին, որը Էջմիածին գվեր էր ուղարկել մեկ արկղ օճառ: Աստրախանից ուզում էին բերել պատրաստի չուխաներ, բայց այնտեղ չկային դրանցից, ուստի բերել են տալիս Մոսկվայից:

Իսկ ի՞նչ էին արտահանում Էջմիածնից: Այդ մասին էլ շատ տեղեկություններ կան նամակներում: Շրջակա վայրերի իշխողներին, հոգևոր առաջնորդներին և այլ անձանց պարբերաբար ուղարկում էին այն ապրանքներից ու մթերքներից, որոնցից շատ ունեին Էջմիածնում: Դրանք էին՝ բամբակ, բրինձ, գինի, օղի, բադրջան, սոխ և քացախ: Կաթողիկոսը հատկապես վրաց թագավորական տան անդամներին ու մահմեդական իշխողներին գվիրում էր ժամացույցներ ու կտորեղեն: Ժամագործի հարցը դեռ լուծված չէր, ուստի վերջիններս երբեմն փչացած ժամացույցները վերադարձնում

էին կաթողիկոսին, և ևս էլ ևորոգման համար ուղարկում էր դրանք Կ. Պոլիս:

Չնայած քաղաքական խառը վիճակին և դրա հետևանքով ճանապարհների անապահովությանը, չէր կտրվում Էջմիածին եկող ուխտավորների հոսանքը: Առաքված ևամակներից երևում է, որ քննարկվող ժամանակում ուխտավորներ էին գալիս ոչ միայն մոտակա վայրերից, այլև Խարբերդից, Կեսարիայից, Կ. Պոլսից, ևույնիսկ Ռուշչուկից (այժմ քաղաք Ռուսե, Բուլղարիա) ու Նոր Նախիջևանից: Հ. Արղությանին հասցեագրված մի ևամակից (1 մայիսի 1788 թ.) երևում է, որ 1787 թ. Էջմիածին էին ժամանել ուխտավորներ Նոր Նախիջևանից, որոնք ուզում էին գնալ Մշո Ս. Կարապետ վանք, բայց դա ճանապարհների վտանգավոր լինելու պատճառով ևրանց չի հաջողվում[62]: Նոր Նախիջևանցիների ժամանման իրողությունն, անշուշտ, շատ հետաքրքրական է: Վերջիններս ընդամենը 8 տարի առաջ էին գաղթեցվել Ղրիմից և սկզբում հայտնվել էին ծանր կացության մեջ: Բայց այդ մի քանի տարվա ընթացքում ևյութապես այնպես էին ամրապնդվել, որ իրականացրել էին Հայաստան ուխտի մեկնելու ոչ միայն դժվարին, այլև մեծ ծախսեր պահանջող ուղևորությունը:

Հետագա տարիների ևամակներից երևում է, որ դարձյալ ուխտավորներ էին եկել Նոր Նախիջևանից և Ռուշչուկից:

Ուխտավորները ոչ միայն իրենք էին ընծաներ տալիս, այլև բերում էին իրենց համաքաղաքացիների ևվիրաբերած դրամն ու թանկարժեք իրերը: Որպես կանոն, կաթողիկոսը բոլոր ևվիրատուներին օրհնության և շնորհակալության ևամակներ էր տալիս, որոնց մեջ անպայման հիշվում էին ևվիրատրված առարկաները և դրամը:

Նվիրակների, ինչպես և յուղժողովարարների ու մոմաժողովողների հավաքած կամ գնած մթերքներն ու ապրանքները քարավաններով, և եթե հեռավորությունը մեծ չէր, հատուկ այդ ևպատակով ուղարկված ուղտերով տեղափոխում էին Էջմիածին: Իսկ դրամական առաքումների համար, ևվիրակի տեղում մնալու դեպքում, կիրառվում էր վաղուց ի վեր մշակված շատ վստահելի միջոց: Հեռավոր վայրեր մեկնող անձինք կամ իրենց բնակավայրերը վերադարձող ուխտավորները, Երուսաղեմի ևվիրակները և ուրիշներ, որոնք ճանապարհների ստույգ վտանգներից խուսափելու համար ևպատակահարմար չէին գտնում դրամական մեծ գումարներ ունենալ իրենց մոտ, Էջմիածնում տալիս էին դրանք կաթողիկոսին, վերցնում ստացական (ղապզ), որով տեղերում ստանում էին իրենց հանձնածի համարժեքը: 1787 թ. մի ևամակում, օրինակ, խոսք կա այդպիսի դրամական մի գործարքի մասին, որ կատարվել է Երուսաղեմում ևվիրակ Գևորգ վարդապետի հետ: Վերջինս հանձնում է 3000 ղուռուշ՝ Կ. Պոլսում ետ ստանալու և Երուսաղեմ ուղարկելու պայմանով[63]: Հետաքրքրական է, որ Գևորգ վարդապետը «զայլեւս դրամս կամէր տալ», բայց կաթողիկոսը չի վերցնում՝ «արտաքոյ ի պատրաստի դրամ չունենալով»: Մեկ այլ օրինակ. 1788 թ. հունվարին վանեցի քարհատ Գասպարը 12 թուման է հանձնում կաթողիկոսին, իսկ վերջինս ևամակ է գրում Վանում ևվիրակ Աստվածատուր վարդապետին և կարգադրում 12 թուման հանձնել Գասպարի եղբայր Պողոսին[64]:

---

62 Ձեռ. 4501, էջ 1169:

63 Ձեռ. 4501 էջ, 1006—1008:

64 Ձեռ. 4481, էջ 237բ:

Դրամական հաշիվներից, առք ու ծախքին վերաբերող գրագրություններից կարելի է լավ պատկերացում ստանալ, թե՛ տեղական, և թե՛ այլ վայրերում շրջանառության մեջ եղած դրամների, նրանց գնողունակության, տարբեր դրամական միավորների իրական արժեքի, ինչպես և ապրանքների ու մթերքների գների մասին: Նամակների մեջ երբեմն դրամների մասին տրվում են ուշագրավ բացատրություններ: Այսպես, 1783 թ. հուլիսի 16-ին ռուսահայոց առաջնորդ Հ. Արղությանին հղված նամակում խոսք կա այն մասին, որ վերջինս ուղարկել է 50 թուման և գրել այդ մասին իր նամակում՝ նշելով, թե այն հավասար է 100 հունգարական ոսկու (մաճար ոսկի): Իր կողմից Ղուկասը բացատրում է, որ հունգարական ոսկին Էջմիածնում «Ե (5) ղուռուշով անցանի»[65]: Եթե 50 թումանը հավասար էր 100 հունգարական ոսկու (1 թումանը՝ 2 ոսկու), իսկ մեկ ոսկին անում էր 5 թուրքական ղուռուշ, ապա նախորդ նամակներից մենք արդեն գիտենք, թե ի՞նչ կարելի էր գնել մեկ թումանով կամ մեկ ղուռուշով, քանի՞ դիանն էր հավասար մեկ թումանի (1000), և ղուռուշը որքա՞ն դիան կարող էր արժենալ: Մի խոսքով, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրողները կարող են որոշել դրամների արժեքը, նրանց հարաբերությունները միմյանց հետ և գնողունակությունը:

Հետաքրքրություն են ներկայացնում նաև ապրանքների և մթերքների գների մասին եղած տեղեկությունները: Օրինակ, 1786 թ. սկզբի տվյալներով գարու մեկ սմարը (1 սմարը հավասար էր 10 լիտրի, իսկ 10 սմարը՝ մեկ խալվարի) արժեր 5 ղուռուշ[66]: 1787 թ. գարու գինը չէր փոխվել, դարձյալ սմարն արժեր 5 ղուռուշ, իսկ ցորենի սմարը՝ 8 ղուռուշ[67]: 1789 թ. Կարինի Խալիլ փաշային վաճառել էին 600 լիտր բրինձ՝ ստանալով 150 ղուռուշ[68]: Բրնձի մեկ սմարն, ուրեմն, արժեր 2,5 ղուռուշ, քանի որ 600 լիտրն անում է 60 սմար:

Ըստ ելից մատյանների տվյալների, յուրաքանչյուր ուղտի արժեքը 220 ղուռուշ էր: 1788 թ. 1132 ղուռուշով գնել էին 15 ժամացույց, 10 դաստա վարազ և մեկ օզմա թուղթ[69], իսկ երկու տարի անց՝ 1790 թ., ավելի պակաս գումարով՝ 1088 ղուռուշով, գնել էին 13 ժամացույց, 6 հեռադիտակ, 41 հատ արբիչ և 20 օզմա թուղթ[70]:

Անտիպ նյութերի մեջ են մի շարք ժողովարարական կոնդակներ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում այն ծանր կացության մասին, որոնց մեջ դեպքերի բերումով հայտնվել էին ոչ միայն անհատ անձինք, այլև կրոնական հաստատություններ՝ վանքեր ու եկեղեցիներ, և որոնց օգնություն հասցնելու համար անհրաժեշտություն էր առաջացել հանգանակության կոչ անող նամակներ հասցեագրել այլևայլ վայրերում ապրող հայ բնակչությանը: Ժողովարարական կոնդակներ են տրվել նաև պարտքի տակ ընկած, հարազատներին փրկագնելու մեկնող կամ էլ ուխտագնացության նպատակով ճանապարհ ընկած մի քանի վրացիների, որոնց համար, ինչպես նախկինում, միջնորդել էին վրաց պետության բարձրաստիճան անձինք կամ թագավորական ընտանիքի անդամները:

---

[65] Ձեռ. 4501, էջ 1509:
[66] Ձեռ. 4481, էջ 170ա:
[67] Նույն տեղում, էջ 417ա:
[68] Նույն տեղում, էջ 305բ:
[69] Նույն տեղում, էջ 259ա—259բ:
[70] Նույն տեղում, էջ 328բ:

Նոր Ջուղայի պատմությամբ զբաղվողներին անշուշտ կհետաքրքրի Ղուկասի 1787 թ. սեպտեմբերի ժողովարարական կոնդակը, հասցեագրված հնդկահայերին: Այնտեղ ասվում է, որ առաջնորդ Մկրտիչ վարդապետի մահից հետո Ս. Ամենափրկիչ վանքի միաբանները, Նոր Ջուղայի ու շրջակայքի ժողովուրդն ու իշխանները Հակոբ վարդապետին ընտրել էին իրենց առաջնորդ և խնդրել՝ հաստատել: Միաժամանակ բազմակնիք մի նամակ էին հղել՝ նկարագրելով «զողորմելութիւնս իւրեանց եւ զաղքատութիւն սրբոյ վանիցն, եւ զտանցն եւ զմլքից ի ձեռս այլազգեաց անկանիլն եւ ոմանց եւս ի գրաւի եդեալ գոլն եւ զայլ թշուառութիւնս ծանուցանելով» և խնդրել հնդկահայերին ուղղված ժողովարարական նամակ[71]:

Նման ծանր վիճակի մեջ է եղել Վանա լճի Կտուց կղզու վրա գտնվող Ս. Կարապետ վանքը, որի վանահայր Գասպար վարդապետին 1787 թ. օգոստոսին տրվել է ժողովարարական կոնդակ[72]: Խիստ օգնության կարիք է ունեցել նաև Հավլաբարի Ծիրանավոր կոչված Ս. Աստվածածնի անապատը, որի շինության համար կաթողիկոսը 1788 թ. դեկտեմբերի 16-ին ժողովարարական կոնդակ է հասցեագրել Թիֆլիսի, Գորիի և Կախեթի հայերին[73]: 1791 թ. մարտին ժողովարարական կոնդակ է տրվել Ուչքիլիսայի վանքի նորոգման համար, քանի որ այն խիստ տուժել էր 1789 թ. Ալաշկերտում ու շրջապատում տեղի ունեցած երկրաշարժից: Այդ վանքը «մեծապէս վնասեցաւ, զի երկու որմունքն ի վերուստ ի վայր հերձան եւ ի կաթուղիկէէն եւ ի պսակաց տանեաց բազում քարինք հոսեցան յերկիր, այլեւ արտաքոյ եւս պարիսպն եւ այլ շինուածքն ըստ մասին փլան եւ ըստ մասին խախտեցան»[74]:

Ղուկաս Կարնեցին ձգտել է օժանդակել Սևանա վանքին, որը առաջնորդի մեղքով հայտնվել էր աղքատության մեջ: 1788 թ. նոյեմբերին նա գրում է. «Հոչակաւոր սուրբ անապատն Սեւանա ի միջոցի միում անհատարմի անձին հանձնեցեալ գոլով, ոչ լաւապէս կառավարիւր եւ ոչ ըստ կարգին պահպանիւր, յորոյ պատճառէ անշքացեալ եւ աղքատացեալ է յոյժ»: Նա նոր առաջնորդ է նշանակում՝ Ազարիա վարդապետին, և կոչ անում հնազանդ լինել նրան[75]:

Ժողովարարական կոնդակները յուրօրինակ պատմական փաստաթղթեր են, որոնց մեջ խիստ համառոտ, բայց դիպուկ ձևով բնութագրվում է տվյալ վանքի կամ եկեղեցու վիճակը, պարզաբանվում դրան հասնելու պատճառները: Այս տեսակետից շատ բնորոշ է 1790 թ. փետրվարին Ս. Թովմա Առաքելո վանքին տրված կոնդակը: Այնտեղ պատմվում է, թե ինչպես Ղարադաղի Մուստաֆա խանի զորքերը, Նախիջևանի խանի հետ ընդհարումների ժամանակ, մասամբ ավերել և հիմնովին կողոպտել էին այդ վանքը: Նրանք «ամենայն կաչս նորին, թէ եկեղեցական անօթս եւ զգեստոց եւ զգրեանս, եւ թէ զարտաքին հանդերձս եւ զկահս եւ զգործիս, յատարի առին՝ հանդերձ մասնաւոր աւերագործութեամբ եւ այնպէս ունայնացուցին յամե-

---

71 Ձեռ. 4501, էջ 113ա:

72 Նույն տեղում, էջ 132ա:

73 Ձեռ. 4481, էջ 268բ:

74 Ձեռ. 4501, էջ 147ա:

75 Նույն տեղում, էջ 127ա—128ա: Պահպանված է կոնդակի բնագիրը, որի մեջ Ազարիա անունը ջնջված է և փոխարենը գրված է Եղիազար (Կթղկ. դիվան, թղթ. 243, վավ. 72):

նայն պիտոյից զսպրբ տունն եւ զվիճակն իւր»[78]: Այս պատճառով վանքին տրվել է ժողովարարական կոնդակ, միաժամանակ նշվել, որ այդ իրադարձությունների ժամանակ ավերվել ու թալանվել են նաև այլ վանքեր ու եկեղեցիներ. «Բազում վանորայք եւ եկեղեցիք կողոպտեցան եւ աւերեցան, եւ մանկունք նոցին գերեցեալ ցիր ու ցան եղեն, եւ մնացք, որք մնացեալք են, այնոքիկ եւս օրաւուր կողոպտին ու ոտնակոխ լինին»[77]:

Նման մի կոնդակ, բայց երեք տարի ավելի վաղ (1787 թ. հուլիսի 23-ին), տրվել է Ս. Նախավկայի (Շամբ) վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետին, քանի որ «բոլոր տունն Նախիջեւանու այս քաղքի ամ է, զի կայ ի մէջ մեծի վրդովման եւ խառնակութեան, որոյ բնակչացն ոչ գոյ հանգըստութիւն, ուստի եւ սրբոյ վանիցն այնմիկ եւ ոչ գոյ ապահովութիւն, եւ մուտք եւ արդիւնք նորին եւս նուազեալ են իսպառ: Քանզի առրբ վանքն այն ոչ ունի ըստ բաւականին զթէմ եւ վիճակ, որպէս զի նոքօք կառավարեացի»[78]:

Նախիջևանի Երնջակի գավառում եղած Ս. Կարապետ վանքը կռիվների և քաղաքական անկայուն պայմանների հետևանքով հայտնվել էր չափազանց ծանր վիճակում: Ժողովարարական կոնդակում, տրված 1787 թ. նոյեմբերի 7-ին, բացատրված են դրա պատճառները. «յառաջ թէ որքան ճոխ էր բազմութեամբ միաբանից եւ ժողովրդոց ... այլ յետոյ, վասն վրդովմանց եւ խռովութեանց տանն արեւելեան եւ յաղագս կրկնակրկին աւերման նոյնոյ երկրին եւ ի խստագոյն տառապանաց խղճալի երկրականացն, եւ ի յանկարգ իրապահանջութեանց կեղեքիչ բռնաւորացն, առրբ վանքն այն եւս աղքատացաւ ի գոյից եւ ի հարստութենէ, նուազեցաւ ի ճոխութենէն: Եւ յայսմ վշտաշատ ժամանակի եւ ընդ միջոցս միջոցս մնալով առանց առաջնորդի, իսպառ ի յետին չքաւորութիւնն էհաս եւ ի ներքոյ պարտուց եւս անկաւ»[79]:

1789 թ. սեպտեմբերին տրված «Կոնդակ հանրական ժողովարարութեան»-ից երևում է, որ Մշո Ս. Կարապետ վանքը «յոյժ չքաւորեալ է եւ անկեալ ի ներքոյ ծանրագոյն պարտուց»: Վանքը չափազանց տուժել էր երկրաշարժից՝ «անագին գետնաշարժութեանն», որի ժամանակ «բազում շինուածք սրբոյ վանիցն փլան»[80]:

1787 թ. սեպտեմբերին Թավրիզի հայերին ուղարկված մխիթարության նամակից երևում է, որ դեռևս նրանք չեն վերացրել տարիներ առաջ այնտեղ տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքները և մեծ նեղություն են քաշում մինչև հիմա «վասն պէսպէս նեղութեանցն նոցին» կրեցելոց ի յանագին գետնաշարժէն հետէ (որ յառաջ քան զեօթն ամս եղեւ անդ) մինչեւ ցայժմ»: Երկրաշարժի պատճառած ավերմունքներին գումարվել էին պատերազմները և «քանիցս բնրթարգել լինիլ, եւ զաղութիւն ապրուստից կրել, եւ ի յընչից մերկանալ, եւ ամենայն կերպիւ վնասիլ, նեղիլ եւ տառապիլ»: Միակ բանը, որ կարող էր անել կաթողիկոսը, այն էր, որ բարեմաղթություններով Հակոբ վարդապետի հետ սուրբ մեռոն էր ուղարկել[81]:

Ղուկաս Կարնեցուն հատկապես մտահոգել է Աշտարակի մոտ գտնվող Մուղնի գյուղի և այնտեղի Ս. Գևորգ վանքի վիճակը: Դեպի Երևան կատա-

---

[76] Ձեռ. 4501, էջ 1532:
[77] Նույն տեղում:
[78] Նույն տեղում, էջ 1319:
[79] Նույն տեղում, էջ 1241:
[80] Նույն տեղում, էջ 1423:
[81] Նույն տեղում, էջ 1139—1141:

րած Հերակլ թագավորի արշավանքի ժամանակ այդ վանքը՝ «աղաւաղեցաւ եւ ամայի մնաց միջոց մի»: Հերակլը, որ տեղափոխել էր գյուղացիներին, վերադարձնում է նրանց և մի քանի թուման նվիրում «վասն նորոգութեան խաչկալին»: Այդ գումարը կաթողիկոսը ծախսում է վանքի պարսպի վերանորոգման վրա: Բայց մուղնեցիներին նոր փորձություն էր սպասվում: Երեվանի խանը տեղահանում է նրանց և փոխադրում այլ գյուղ. «Ուստի թէ գիւղն եւ թէ սուրբ վանքն ամայացաւ մինչեւ ցայսօր եւ օր ըստ օրէ աւերի»: 1790 թ. փետրվարի 15-ին Ղուկասը հատուկ նամակով՝ «Առանձնօրէն թուղթ առ արքայն Վրաց Հերակլ», դիմում է Հերակլին և խնդրում նամակ գրել Երևանի Մահմեդ խանին և առաջարկել Մուղնու գյուղացիներին վերադարձնել իրենց գյուղը, «զի վանքն եւս շինասցի»: Նա խնդրում է այդ բանն անել մինչև առաջիկա գարուն, որպեսզի գյուղացիները «ժամանեսցեն վաստակոց եւ արդեանց երկրի եւ շինարարութեան»[82]:

Հաստատապես կարելի է ասել, որ Հերակլը կատարել է կաթողիկոսի խնդրանքը, և նրա միջամտությամբ է, որ Երևանի խանը թույլ է տալիս վերականգնելու գյուղը և վանքը: Այդ մասին հետաքրքրական վկայություն գտանք Էջմիածնի վանքի ելից մատյաններից մեկում: Այնտեղ ասվում է, որ 1792 թ. մարտի 18-ին ոմն Գեորգիի նվեր է տրվել, քանի որ նա ուրախալի լուր էր բերել խանի որոշման մասին. «Մուղնի գիւղի աղագաւ մուշտուլի բերօղ Գէորգ մարդոյն ագուցաք Ա (1) ցած մահուտ կապայ ի մարտի 18, որ խանն թալիղայ ետ շինութիւն առնելոյ վանքն եւ գիւղն»[83]:

Դա կաթողիկոսին հնարավորություն է տալիս կրկին շենացնել գյուղը: Հիշագրավ է այդ տեսակետից 1792 թ. հուլիսին նվիրատու բենկանցի Ստեփանոս ամիրային գրած մի նամակը, որտեղ խոսք է գնում նվիրված 280 ղուռուշի բաժանման մասին: Այդ գումարը բաժանվելու էր մի քանի վանքերի վրա, 20 ղուռուշն էլ հատկացված էր «սուրբ Յակոբայ անապատին կամ Մուղնոյ սուրբ Գէորգեայ» վանքին: Ղուկասը Ստեփաննոսին տալիս է հետաքրքրական բացատրություն գյուղի մասին: Նա գրում է, որ թեպետ մի քանի տարի առաջ վանքն ամայացել էր «վասն անմարդաբնակ լինելոյն գեղջն», բայց ինքն այս տարվա գարնանը «մեծաւ ջանիւ եւ ծախուք» «շինեցուցաք»: Իսկ աշնանը առաջնորդ է հղելու վանք: Եվ երբ նա նշանակվի ու գնա այնտեղ, նվիրաբերված 20 ղուռուշը կհանձնի նրան և ստացականը կուղարկի նվիրատուին[84]:

Արդեն նշեցինք, որ Ղուկաս Կարնեցին զբաղվում էր նաև կտակված գումարները ստանալու և ըստ նպատակի կիրառելու գործով: Այդ կապակցությամբ աշխույժ նամակագրության մեջ էր մտել նվիրակների ու այլ անձանց հետ: Նամակները գնում-գալիս էին, շատ ժամանակ ու եռանդ խլելով ամենազբաղ կաթողիկոսից և երբեմն էլ մնում անհետևանք: Այդուհանդերձ, նրանք հետաքրքրական են այն ժամանակների վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում ստանալու համար:

1788 թ. մայիսի 15-ին Հ. Արղությանին հասցեագրված մի նամակից իմանում ենք, որ գորեցի Ամիրաղի որդի Ավթանդիլը ժամանակին 50 թուման էր խոստացել Գորիում հայկական եկեղեցի կառուցելու համար՝ «Քանզի ի Գորի եկեղեցի մի շինի հոգւացութեամբ հարազատ գործակալին մերոյ՝ տէր Սահակ աշխատասէր քահանայիս»: Հետո նա գնում է Ասորահան

---

[82] Նույն տեղում, էջ 1441—1442:

[83] Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 297:

[84] Ձեռ. 4501, էջ 1844—1845:

և այնտեղ էլ վախճանվում: Բայց մահից առաջ խոստովանահոր և այլոց ներկայությամբ նա հանձնարարել է Միհաս աղայի եղբայր Մարգար աղայի մոտ գտնվող այդ գումարը հանձնել Տեր Սահակին՝ եկեղեցու կառուցումն իրագործելու համար[85]: Ղուկասը հանձնարարում է անպայման ձեռք բերել այդ գումարը և հասցնել Տեր Սահակին:

Էջմիածնի գործակալները և ավիրակները հեռավոր երկրներից կարողանում էին ապահովել կտակված գումարների առաքումը Էջմիածին: Այսպես, 1786 թ. մայիսին Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Հոհաննջան աղային ուղարկված նամակից իմանում ենք, որ հնդկական Գոա քաղաքում Քամալ Ստեփանյանը մեռնելիս 460 ռուփի կտակ էր արել Էջմիածնին և կտակարար կարգել Հոհաննջանին: Վերիջնս այդ գումարն ուղարկել էր Բասրա՝ Էջմիածնի գործակալ Հովհաննես Բեթղեհեմյանին, իսկ սա էլ՝ «ի մեծն Պօլիս փօլիցայ առնելով, ձեռամբ տեղւոյ նուիրակին մերոյ՝ Իսահակ աստուածաբան վարդապետին, հասոյց ի սուրբ Աթոռս»[86]:

Նամակներից տեղեկանում ենք, որ կաթողիկոսը երբեմն ստիպված զբաղվել է նաև այլ վայրերում մեռած անձանց գույքի հարցով, որպեսզի դրանք հանձնվեն նրանց ազգականներին: Բերենք մի օրինակ. Հնդկաստանից վերադառնալիս Բասրայում մահացել էր գորեցի վաճառական Դավիթ բեկը: Նրա ունեցվածքը ստանալու համար ազգականները դիմել էին Ղուկասին: Գործը գլուխ բերելու համար վերջինս բազմաթիվ նամակներ է գրել տեղի ազդեցիկ հայերին և Էջմիածնի ներկայացուցիչներին[87]:

Նամակների մեջ արտացոլված է նաև այլևայլ վայրերում Էջմիածնին ավիրաբերված անշարժ գույքի (այգիներ, տներ, խանութներ) ձեռք բերման ուղղությամբ տարվող աշխատանքը:

Կաթողիկոսը հարկադրված է լինում զբաղվել նաև այն ժամանակների համար արտակարգ, բայց մեր օրերի համար շատ սովորական մի գործով: Նույն նամակում, հասցեագրված Հ. Արղությանին, նա գրում է, որ գյանջեցի Սարգիս անունով մեկը, վանքի գրագիր Հակոբ վարդապետի եղբայրը, որը մի ժամանակ Էջմիածնում ծառայել է որպես հրացանակիր, թողել է գյուղում (Վաղարշապատում) իր տունն ու ընտանիքը և մեկնել Կ. Պոլիս, իսկ այնտեղից էլ՝ Ռուսաստան, որտեղ հանդիպել է Հ. Արղությանի հետ, «զոր եկողք պատմեն»: Ղուկասը հանձնարարել է վերջինիս ինչ գնով լինի՝ «սիրով կամ ասատիւ» վերադարձնել այդ մարդուն, քանի որ «Ահա երեք տարի լինի, որ կին նորա եւ Գ (3) մանո[կ]ունքն ի խղճութեան եւ յողորմելութեան կան»[88]:

Կաթողիկոսի հատուկ ուշադրությունը տարբեր վայրերում գտնվող հայկական եկեղեցիների ու վանքերի իրավունքների պաշտպանության, նյութական բարեկեցության ապահովման, շինարարական աշխատանքներ ծավալելու ու նման այլ խնդիրների վերաբերյալ միանգամայն բնական է: Նամակներում արտացոլված են նաև այդ հարցերը: Ղուկասը մերթ շնորհակալություն է հայտնում Կեսարիայի եկեղեցիների շինարարությանը նպաստող մահտեսի Սարգիս ամիրային, մերթ էլ զայրացած նամակ գրում ոմն թելեթցի Տեր Առաքելին, որն ըստ Թիֆլիսից ստացված նամակների, «մերձ առ

---

[85] Նույն տեղում, էջ 1169—1170:
[86] Նույն տեղում, էջ 1061:
[87] Նույն տեղում, էջ 1589—1590:
[88] Նույն տեղում, էջ 1169—1170:

Մողնաոյ եկեղեցին կամի զեկեղեցի շինել յանդգնաբար»: Նա օրինություն է հղում սրբատաշ քարերով եկեղեցի կառուցած Սալմաստի մելիք Խուդավերդուն, նրա որդի պրն. Հոհաննին, և հետո էլ Բայազետի, Վանի, Ամիդի, Խարբերդի ու Բալուի հայերին կոչ անում օգնություն ցույց տալու Կեչվո Ս. Կուրապետ վանքի առաջնորդ Հոհան վարդապետին, որ նա կարողանա նորոգել երկրաշարժից խիստ տուժած դեպի վանքը տանող կամուրջը:

Ինչպես տեսնում ենք, Ղուկաս Կարնեցու անտիպ նամակների մեջ արժեքավոր շատ տեղեկություններ կան Էջմիածնի ու շրջակա վայրերի տնտեսական, մասամբ մշակութային կյանքի, ինչպես և մեզ համար հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Այս և նմանատիպ այլ նյութերի բաղդատական ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի մեզ ավելի ամբողջական պատկերացում ստանալու Հայաստանի 18-րդ դարի վերջին տասնամյակների պատմության մասին:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ Ե—Է ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ Եկեղեցու թեմական բաժանումը վաղ շրջանում գրեթե համապատասխանում էր Հայաստանի քաղաքական սահմաններին: Սակայն թեմական բաժանման ամբողջական պատկերը ներկայացնելուն խանգարում է այն հանգամանքը, որ Մեծ Հայքն իր պատմության տարբեր շրջաններում չի եղել քաղաքական մեկ միավոր: Երկրի քաղաքական վիճակի փոփոխության հետ փոխվում էր նաև Եկեղեցու վարչա-տարածքային կառուցվածքը: Հայկական շատ եպիսկոպոսարաններ տարբեր ժամանակաշրջաններում դուրս են մնացել Հայաստանի քաղաքական սահմաններից կամ ավելի վերտորեն կապված են եղել քաղաքական այլ միավորումների հետ և, հետևաբար, դուրս են մնացել նաև Հայ Եկեղեցու վարչա-իրավական սահմաններից: Խոսքս Ծավդեքի, Ծուփքի, Անձիտի, Կորդուքի, Դասնի, Հայաստանի կայսերական մասի գավառների և եպիսկոպոսարանների, ինչպես նաև Փոքր Հայքի մասին է: Ուստի, խոսելով Հայ Եկեղեցու թեմական բաժանման մասին, պետք է այն քննել որոշակի ժամանակաշրջանում:

Ե—Է դարերում եկեղեցական թեմերի վիճակը պարզելու համար կարևոր տվյալներ են պարունակում եկեղեցական ժողովների սրձանագրությունները: Ղազար Փարպեցին մեջ է բերում Հովսեփ Կաթողիկոսի ժամանակ, 450 թ., Արտաշատի եկեղեցական ժողովին մասնակցած եպիսկոպոսությունների ցուցակը[1]: Նույնը հանդիպում ենք և Եղիշեի մոտ[2]: Այդ եպիսկոպոսներն են.

1. Յովսէփ Կաթողիկոս, Եղիշեի մոտ՝ եպ. Արտաւտոյ
2. Անանիա Սիւնեաց եպ.
3. Մուշէ Արծրունեաց եպ.

---

[1] **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 100—101:
[2] **Եղիշե,** Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 27—28:

4. Սաֆակ Տարօնցոյ եպ.
5. Սաֆակ Ռշտունեաց եպ.
6. Մելիտէ Մանձկերտոյ (Մանազկերտ) եպ.
7. Եզնիկ Բագրեւանդեայ եպ.
8. Սուրմակ Բզնունեաց եպ.
9. Թաթիկ Բասենոյ եպ.
10. Երեմիա Մարդաստանի եպ.
11. Գադ Վանանդայ եպ.
12. Բասիլ Մոկաց եպ.
13. Եղբայր Անձեւացաց եպ.
14. Տաճատ Տայոց եպ.
15. Քառասն Տարբերանոյ եպ.
16. Զաւէն Մանանաւոր, Եղիշեի մոտ՝ Եւղազ Մարուսաղոյ եպ.
17. Եղիշէ Ամատունեաց եպ.
18. Երեմիա Սպասունեաց եպ.

Ադոնցը, ելնելով միայն Փարպեցու և Եղիշեի այս տվյալներից, գրում է, որ 450 թ. գոյություն ունեին հենց այս տասնութ եպիսկոպոսություններ[3]: Սակայն առաջ է գալիս մի հարց. գուցե՞ ոչ բոլոր թեմերն են մասնակցել 450 թ. ժողովին: Այսպես, Փարպեցին նշում է այդ ժողովին մասնակցած ևս երեք երեցի անուն՝ առանց գրելու, թե որ եպիսկոպոսությունից են նրանք: Շատ հավանական է, որ այդ երեցները 450 թ. եկեղեցական ժողովին չմասնակցած թեմերի ներկայացուցիչներ են: Եթե անգամ ընդունենք, որ միայն այս երեքը չեն մասնակցել, թեև այդ թիվը պետք է անհամեմատ ավելի մեծ լինի, ապա Փարպեցու ցուցակը դառնում է թերի: Այս բացը որոշ չափով լրացնում է «Գիրք թղթոցը», որտեղ նշված են Բաբգեն Կաթողիկոսի ժամանակ Դվինի 506 թ. առաջին և Դվինի երկրորդ՝ Ներսես Կաթողիկոսի ժամանակ, 554 թ., տեղի ունեցած եկեղեցական ժողովներին մասնակցություն ունեցած եպիսկոպոսությունները.

506 թ. եկեղեցական ժողով[4]	554 թ. եկեղեցական ժողով[5]
1. Բաբգէն Հայոց եպիսկոպոսապետ եպ. Այրարատոյ	1. Ներսէս Հայոց Կաթողիկոս
2. Մերշապուհ Մամիկոնէից	2. Մերշապուհ Տարոնոյ և Մամիկոնէից եպ.
3. Ներսէս Մարդապետական	3. Գրիգոր Սեպհական գնդից եպ.
4. Տեառնտուր Հարքոյ	4. Պարգեւ Հարքայ եպ.
5. Սամուէլ Բզնունեաց	5. Տիրակ Բագրեւանդայ եպ.
6. Քովկաս և Սամուէլ Բասենոյ	6. Գրիգոր Բասենոյ եպ.
7. Թաթուլ Արշարունեաց	7. Ներսէս Մարդաղոյ եպ.
8. Աղան Խորխոռունեաց	8. Վաղուր Արշամունեայ եպ.
9. Ատոան Տայոց	9. Պետրոս Սիւնեաց եպ.

---

[3] **Նիկողայոս Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 368:

[4] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 41—42:

[5] Նույն տեղում, էջ 73:

10. Տաճատ Արշամունեաց
11. Դանիէլ Ռշտունեաց
12. Յափրիկ Մոկաց
13. Խաբիբ Արծրունեաց
14. Շահէ Ամատունեաց
15. Սահակ Պալունեաց
16. Պաւղոս Գնունեաց
17. Մովսէս Զարեհաւանի
18. Դաւիթ Տմորեաց
19. Դանիէլ Անձեւացեաց
20. Թեմուր Մեհենունեայ

10. Գրիգոր Արծրունեաց եպ.
11. Մարկոս Բզնունեաց եպ.
12. Մաշտոց Խորխոռունեաց եպ.
13. Յոհան Ապահունեաց եպ.
14. Աբղիսոյ Աւորեաց Ուղղափառոյ
15. Յովհան Վանանդայ եպ.
16. Հառակ Արշարունեաց եպ.
17. Քրիստափոր Պալունեաց եպ.
18. Յոյս Գոլթան եպ.
19. Թադէոս Մեհենունեաց եպ.

Հայոց Ներսես Կաթողիկոսի մեղադրական թղթից, որն ուղղված է նեստորականության մեջ մեղադրվող եպիսկոպոսներին, երևում է, որ այդ ժողովին (554 թ.) չեն մասնակցել Ռշտունիքի Սահակ, Մոկաց Սողոմոն, Անձևացյաց Ստեփանոս, Ակնի Հոռոմանոս, Զարեհավանի Միքայել, Բզնունյաց Աստվածատուր և Ամատունյաց Խոսրով եպիսկոպոսները:

506-ին, 450 թ. ժողովի հետ համեմատած, ավելանում են, գրում է Ադոնցը, վեց նոր եպիսկոպոսություններ՝ Արշամունյաց, Գնունյաց, Պալունյաց, Զարեհավանի, Մեհենունյաց և Տմորյաց[6]: Սակայն կարծում ենք, որ սրանք պարզապես չեն մասնակցել 450 թ. եկեղեցական ժողովին: Որինակ, Արշամունյաց թեմը ոչ թե հիմնվել է Ե դարի վերջին և Զ դարի սկզբին, այլ ավելի վաղ: Արշամունիքի Կիրակոս եպիսկոպոսի մասին հիշատակություն կա Լուսավորչի վարքի հունարեն խմբագրության մեջ[7], ըստ որի այդ թեմը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը: 554 թ. ցանկն Ադոնցը համարում է առավել ամբողջական[8]: Բայց այդ ժողովին չեն մասնակցել նախորդ ժողովից մեզ հայտնի թեմերից Տայոց և Գնունյաց եպիսկոպոսները: Նույնը կարելի է ասել նաև 506 թ. ժողովին չմասնակցած Սյունյաց, Մարդաղի, Վանանդի և Սպահունյաց թեմերի մասին:

Մեր կարծիքով այդ ժողովներին մասնակցած բոլոր թեմերն էլ գոյություն ունեին արդեն Ե դարում, և իրենց առանձին տեղն ու դերն ունեին, իհարկե ոչ հավասարաչափ, եկեղեցական հիերարխիայի մեջ: Ուշադիր նայելով այդ ցանկերին, կտեսնենք որոշ տարբերություններ, որոնք պայմանավորված են կա՛մ անվան փոփոխմամբ, կա՛մ որոշ եպիսկոպոսությունների տրոհմամբ և կամ ընդհակառակը՝ հարևան թեմերի միավորմամբ: Մանազկերտի եպիսկոպոսությունը, որի մասին տեղեկություններ կան Բուզանդի, Փարպեցու մոտ (Փարպեցու մոտ այն նշված է Մանձկերտ ձևով) հավանաբար Դ դարի վերջերից կամ Ե դարի սկզբից սկսած կոչվում է նաև Հարքի եպիսկոպոսություն, այսինքն՝ այն գավառի անունով, որտեղ գտնվում է Մանազկերտը: Տարոնի եպիսկոպոսությունն այդպես էլ կոչվել է սկզբից (Բուզանդ, Եղիշե, Փարպեցի և այլն), իսկ ավելի վաղ, ինչպես դա երևում է հունարեն Ագաթանգեղոսի տվյալներից[9], Տարոնը Տայքի, իսկ

[6] **Ադոնց**, նշվ. աշխ., էջ 370:

[7] **G. Garitte**, Documents pour l'etude du livre d'Agathange, Vaticano, 1946, p. 102—104, § 172.

[8] **Ադոնց**, նշվ. աշխ., էջ 368, 370:

[9] **G. Garitte**, Documents..., էջ 102—104:

ըստ Ագաթանգեղոսի արարական խմբագրության[10] Բզնունիքի հետո կազմել է մեկ թեմ, որը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը: Հետագայում Տարոնը, Տայքը և Բզնունիքը առանձնացել և կազմել են առանձին թեմեր[11]: 506 թ. ժողովում չկա Տարոնի թեմը, հավանաբար դա Մամիկոնեից եպիսկոպոսություն է, որովհետև արդեն հաջորդ՝ 554 թ. եկեղեցական ժողովում Տարոնը նշվում է Մամիկոնյան եպիսկոպոսության հետ միասին (Մերշապուհ Տարաւնոյ և Մամիկոնէից): Այս թեմերը կա՛մ նշվում են միասին, կա՛մ միայն ուղղակի Մամիկոնեից եպիսկոպոսություն[12]:

Տուրուբերանի եպիսկոպոսը 450 թ. ժողովից հետո չկա հաջորդ ցուցակներում: Ադոնցը ենթադրում է, որ դա համապատասխանում է մյուս ցուցակներում նշված Խորխոռունյաց եպիսկոպոսությանը[13]: Հավանական չէ, որ Խորխոռունիների, որոնք պատկանում էին հայոց հին ազվանի նախարարների թվին, եպիսկոպոսությունը կոչվեր այլ անունով, մանավանդ որ այն, ըստ Ագաթանգեղոսի[14], հիմնել է Լուսավորիչը: Հետագայում Տուրուբերանն ավելի լայն նշանակություն ստացավ և դարձավ այն տասնհինգ աշխարհներից մեկը, որի ամենանշանավոր գավառը հենց Խորխոռունիքն էր: Ընդհանուր երևույթ ենք տեսնում Տարոնի թեմի կապակցությամբ: Այն սկսեց կոչվել շատ ավելի ուշ ստեղծված, քան Խորխոռունյաց թեմը, իր ամենանշանավոր նախարարական տան՝ Մամիկոնյանների անունով: Մեր կարծիքով, Փարպեցու մոտ նշված Տուրուբերանի եպիսկոպոսությունը համապատասխանում է Արշամունյաց եպիսկոպոսությանը, իսկ Խորխոռունյաց թեմի ներկայացուցիչը կարելի է ենթադրել, որ պարզապես չի մասնակցել 450 թ. եկեղեցական ժողովին: Ինչ վերաբերում է 506 թ. ցանկում նշված Տմորյաց թեմին, ապա դա, ըստ Ադոնցի, համապատասխանում է 554 թ. «ուղղափառ ասորեաց» եպիսկոպոսությանը[15]:

Բասենի և Մարդաղի եպիսկոպոսությունները միշտ նշված են առանձին: Բայց Ադոնցը, հիմք ունենալով Ներսեսի հաջորդի՝ Հովհաննես Կաթողիկոսի թուղթը՝ ուղղված նեստորականության մեջ մեղադրվող Սունյաց եպիսկոպոսին, որտեղ Բասենը և Մարդաղին նշված են որպես մեկ թեմ (թեմակալ՝ Ներսես եպիսկոպոս)[16], որևէ ժողովին մեկի կամ մյուսի բացակայությունը բացատրում է նրանցից մեկը մյուսին ենթարկվածությամբ, ընդ որում ըստ Ադոնցի, մեկ Բասենն է ենթարկվել Մարդաղիի, մեկ Մարդաղին՝ Բասենի թեմին: Միայն Զ դարի կեսերին են այդ երկու եպիսկոպոսությունները հանդես գալիս միասին՝ ունենալով մեկ ընդհանուր եպիսկոպոս: Դրանից վաղ և հետո, օրինակ, 644 թ. Ներսես Գ Կաթողիկոսի ժամանակ, Դվինի եկեղեցական ժողովում եղած ցուցակներում նրանք նշվում են որպես առանձին թեմեր, իսկ, օրինակ, 554 թ. ժողովին Մարդաղի եպիսկոպոսի բացակայությունը կարելի է վերագրել պարզապես նրա չմասնակցելուն: 450 թ. ցանկում եղած Մարդաստանի եպիսկոպոսությունը

---

[10] **Н. Марр,** Крещение армян, грузин, абхазов и аланов, СПБ, 1905, стр. 137—139.

[11] Գիրք թղթոց, էջ 41, 73: **Փարպեցի,** էջ 100—101:

[12] Գիրք թղթոց, էջ 41—42, 78, 223—224 և այլն:

[13] **Ադոնց,** նշվ. աշխ., էջ 369:

[14] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 426—427: **G. Garitte,** նշվ. աշխ., էջ 102—104:

[15] **Ադոնց,** նշվ. աշխ., էջ 370:

[16] Գիրք թղթոց, էջ 78:

հետագայում, և՛ Ներսես, և՛ Հովհաննես Կաթողիկոսների ժամանակ, ինչպես երևում է «Գիրք թղթոցից», կոչվում է Մարդապետական:

Այսպիսով, Ե դարում և Զ դարի կեսերին կային քսանութ եկեղեցական թեմեր, որոնք որոշ փոփոխությունների ենթարկվեցին հետագա շրջանում: Ուխտանեսի տվյալները ստիպում են որոշ լրացումներ կատարել Հայաստանյայց Աթոռին պատկանող եպիսկոպոսությունների ցանկի մեջ:

Ստեփանոս Օրբելյանի տվյալների համաձայն, Գրիգոր Լուսավորիչը հիմնել է երեսունվեց թեմ. «Ապա կարգէ և սուրբն Գրիգոր զեկեղեցական դասս, զգահ և զպատիւ եպիսկոպոսացն. և հրամայէ բազմել ընդ ինքեան աթոռով և ոսկեձկար բարձք 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ և 18 յահեկէ. յաջմէ առաջինն Հարքայ եպիսկոպոսն և յահեկէ առաջինն Բասենոյն, իսկ Սիւնին յաջ կողմանն յեօթներորդ գահուն նստուցանէ»[17]: Այն, որ հին Հայաստանում կաթողիկոսի աջ ու ձախ կողմերին առաջինը բազմում էին Հարքի և Բասենի եպիսկոպոսները՝ գալիս է հետևից և դա բացատրվում է նրանով, որ նախաքրիստոնեական շրջանում հատկապես Բասենի քրմապետը կարևոր դեր է խաղացել հեթանոսական Հայաստանում: Իսկ ըստ Ագաթանգեղոսի, Բասենի առաջին թեմակալը՝ քրմորդի Եվթաղիոսը, հոգևորական ավիրապետության մեջ գրավում էր երկրորդ գահը՝ Աղբիանոսից հետո[18]: Բացի թեմակալներից, ըստ հին ավանդության (Բուզանդ, Ագաթանգեղոս և այլն) հայրապետանոցում գտնվում էին տասներկու եպիսկոպոսներ, որոնք վարում էին կաթողիկոսարանի տարբեր գործեր, և որոնք բազմում էին հայրապետի աջ ու ձախ կողմերում: Ուստի, եպիսկոպոսների բաժանումն աջակողմյանների և ձախակողմյանների, գալիս է հետևից և դա Օրբելյանի ենթադրությունը չէ, ինչպես կարծում է Ադոնցը[19], թեև պատմիչը ձախակողմյանների և աջակողմյանների է բաժանում նաև նախարարներին. «Եւ տալ (Տրդատը) ըստ իւրաքանչիւր պատուոյ գահ և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ»[20]:

Գրիգոր Լուսավորչի հիմնած 36 թեմերի մասին Օրբելյանի վկայությունը չի հաստատվում փաստերով և անհավանական է Դ դարի սկզբներին այդքան թեմերի առկայությունը: Նույն ձևով է վարվում նաև Ուխտանեսը, ըստ որի, սակայն, Լուսավորիչը հիմնել է ոչ թե 36, այլ 30 թեմ[21], և թվարկում է բոլոր 30 թեմերը: Երկու պատմիչներն էլ օգտվել են նույն աղբյուրից՝ Կարմրաձորի վանքի վանահայր Սամվելի հաղորդած տեղեկություններից, որի մասին մատնանշում է ինքը՝ Ստ. Օրբելյանը: Իսկ թվերի տարբերությունն Ադոնցը բացատրում է նրանով, որ Օրբելյանը ունեցել է Սամվել Կարմրաձորեցու աշխատության մեկ այլ օրինակ[22]: Ուխտանեսի մոտ նշած կա բոլոր 30 եպիսկոպոսությունների ցուցակը, որից երևում է, որ այն Ե դարից ավելի վաղ շրջանի չէր կարող վերաբերվել (Դրան կանդրադառնանք քիչ հետո): Եթե Օրբելյանը բոլոր եպիսկոպոսությունների ծագումը կապում է Լուսավորչի անվան հետ, լոկ Սյունյաց թեմի հնությունը հիմնավորելու և ավելի պատկառանք հաղորդելու համար, ապա Ուխտանեսը դա անում է բոլոր եպիսկոպոսություններին հին ծագում վերա-

---

17 **Ստեփանոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 25:

18 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 426—427:

19 **Ադոնց,** նշվ. աշխ., էջ 362:

20 **Ստ. Օրբելյան,** գլ. Է, էջ 24:

21 **Ուխտանէս եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, էջ 71, 100:

22 **Ադոնց,** նշվ. աշխ., էջ 361—362:

գրելու համար: Ինչ վերաբերում է Սյունյաց թեմին, ապա այն Ե դարից վաղ ոչ մի տեղ չի հիշատակվում, իսկ Կորյունը վկայում է, որ Սյունյաց եպիսկոպոսությունը հիմնվել է Մաշտոցի կողմից, Ե դարի սկզբներին, Սյունիքում ծավալած իր գործունեության ժամանակ: «Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր՝ ... Եւ ժողովեալ մանկունս առի նիւթ վարդապետութեանն... մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիայ այր սուրբ և երեւելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ: Ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր»[23]: Ի դեպ, հենց այդ նույն Անանիա եպիսկոպոսն է, որ առաջին անգամ հիշատակվում է Հայոց եպիսկոպոսությունների ցուցակներում՝ Ե դարում[24]:

Այժմ վերադառնանք Ուխտանեսին: Պատմիչը հանվանե թվարկում է երեսուն եպիսկոպոսությունները, որոնք իբր հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, և վերջում, ընդունի ունենալով Ագաթանգեղոսի տվյալները[25] (չորս հարյուր եպիսկոպոսների վերաբերյալ) անհամապատասխանությունը հարթելու համար ավելացնում է, որ Լուսավորիչը հաստատել է «ևս երեք հարիւր և եւթանասուն եպիսկոպոսք»: Ընդ որում այդ երեսունին նա համարում է ապոստակալ և տարբերություն դնում «երեք հարիւր յոթանասուն» ապոստոլական եպիսկոպոսների միջև: Այդ երեսուն եպիսկոպոսություններն են.

1. եպ. Հարքայ
2. Ուտուն եպ.
3. եպ. Տայոց
4. եպ. Մարդպոյ
5. եպ. Արշամունեաց
6. եպ. Արծրունեաց
7. եպ. Սիւնեաց
8. եպ. Ռշտունեայ
9. եպ. Մոկաց
10. եպ. Ամատունեայ
11. եպ. Բասենոյ
12. եպ. Մամիկոնէից
13. եպ. Բագրեւանդայ
14. եպ. Խորխոռունեայ
15. եպ. Արշարունեայ
16. եպ. Ապահունեաց
17. եպ. Արշամունեայ
18. եպ. Գնունեաց
19. եպ. Գողթան
20. եպ. Գաւդմանայ
21. եպ. Ակէոյ
22. եպ. Երուանդայ
23. եպ. Բաժունեաց
24. եպ. Ասորեաց
25. եպ. Անձեւացեաց
26. եպ. Պալունեաց
27. եպ. Մեհենունեաց
28. եպ. Էլոյ
29. եպ. Զարեւանի
30. եպ. Միւսաւորեաց (միւս Ասորեաց)[26]:

Ինչպես ասվել է, մինչև Ե դարի կեսերը Հարքի թեմը կոչվել է Մանազկերտի և միայն 450 թ. Սրուանշատի ժողովից հետո այն անվանվել է Հարքի եպիսկոպոսություն, ինչպես Ուխտանեսի մոտ: Այս ցանկում նշված է միայն Մամիկոնյան եպիսկոպոսը, որը ներկայացնում է միաժամանակ Տարոնի թեմը: Այստեղ Տարոնի թեմի ներկայացուցչի բացակայության մասին չենք կարող խոսել, քանի որ այն, սկսած Ե դարից, կոչվում է «Տարօնի և Մա-

---

23 **Կորյուն,** վարք Մաշտոցի, էջ 108:

24 **Եղիշե,** Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 27—28: **Փարպեցի,** Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 100—101:

25 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 482:

26 **Ուխտանէս,** էջ 100:

միկոճէից» եպիսկոպոսություն կամ ուղղակի «Մամիկոնէից», ինչպես Ուխտանեսի ցանկում: Աղձնյաց և Կորդվաց եպիսկոպոսությունների բացակայությունը ևս վկայում է, որ այս ցուցակը Լուսավորչի ժամանակաշրջանին չի պատկանում: Երրորդ, եպիսկոպոսությունների ևսխորդ ցանկերի համեմատ, այստեղ ավելացել են Երուսակի, Էլոյի, մյուս Ասորյաց թեմերը:

Էլոյի (Ելոյ, Եյոյ, Էլի) եպիսկոպոսությունը, բացի Ուխտանեսի ցանկից, առաջին անգամ հիշատակվում է Զ դարի վերջերին և Է դարի սկզբին (Հոհաննիկ եպիսկոպոս)՝ Դվինի ժողովում, Մովսես Կաթողիկոսի մահից հետո նոր կաթողիկոս ընտրելու կապակցությամբ[27], որից հետո (607 թ. Աբրահամ կաթողիկոսի գումարած ժողովում[28] և այլն) միշտ հանդիպում է եպիսկոպոսությունների ցանկերում:

Այդ նույն ցանկերում, այսինքն՝ սկսած Զ դարի վերջից, նշվում է նաև մի նոր թեմական՝ Առնայի կամ Առահի Թադեոս եպիսկոպոսի անունը, որը, սակայն, չկա Ուխտանեսյան ցանկում: Ըստ Ադոնցի, Առահի կամ Առնայի եպիսկոպոսությունը մտնում է հարևան Էլի եպիսկոպոսության կազմի մեջ: Իսկ Երուսակի եպիսկոպոսությունը Ադոնցը տեղադրում է Պարսկահայքում, Սալմաստի Ռոստոկ գավառը՝ Հեր և Զարեհավան գավառների մոտ[29]: Ի դեպ, Երուսակն Ադոնցի մոտ Ռոստակ է և ոչ Ռոստակ: Ռոստակն այն գավառն է, որի եպիսկոպոսն էր Սահակ Զորափորեցին նախքան 677 թ., այսինքն՝ մինչև կաթողիկոսական գահ բարձրանալը: Իսկ Ռոստակը, որի մասին խոսում է Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցին, Սալմաստի գավառն է՝ Հեր և Զարեհավան գավառների մոտ[30]: Մեկ այլ տեղ նա գրում է Ռոտոն, Ատրպատականի մոտ:

Եթե ընդունենք Ադոնցի ենթադրությունները, ապա Ուխտանեսի ցանկում Պարսկահայքից հիշատակված է չորս եպիսկոպոսություն՝ Զարեհավանի, Էլոյի, Առահի, Երուսակի:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել Առահի եպիսկոպոսության վրա, որը, ինչպես ասացինք, չկա Ուխտանեսի ցանկում: Մեր կարծիքով, դա ոչ թե Պարսկահայքի Առահի կամ Առնայի գավառի եպիսկոպոսական թեմն է և մտել է հարևան Էլոյի եպիսկոպոսության մեջ, այլ Մեծ Հայքի արևելյան Առան երկրամասն է՝ Ուտիքի Առանոտ, Առանյակ, Արցախի Մեծառանք և մի քանի այլ գավառներով հանդերձ: Կաթողիկոս Սահակ Զորափորեցին Ուտիքի Ռոտո Պարսյան, Առանոտ գավառների եպիսկոպոսն էր[31], ոչ թե Սալմաստի գավառի, որը կոչվում էր Ռոստակ: Հետևաբար, Երուսակը (Ռոստակ, Առանոյց, Առանի) պետք է համարել Առուստակի, Առահի (ինչպես Այլին անվանված է Էլո, Էլո) եպիսկոպոսությունը: Հայոց Աղվանքի կաթողիկոսությանը ենթական թեմերի մեջ ոչ մի անգամ չի հիշվում Առանի, Ռոստակի կամ Երուսակի եպիսկոպոսության մասին, իսկ այդպիսի եպիսկոպոսություն կար Ուտիքում, ուստի մենք կարող ենք խոսել Առանի, ինչպես «Գիրք թղթոցում» է, կամ Երուսակի (Առուստակի), ինչպես Ուխտանեսի մոտ է, որպես Հայաստանյայց Աթոռին ենթական՝ Զ դ. վերջին առաջացած եպիսկոպոսության մասին:

---

[27] Գիրք թղթոց, էջ 146—147:

[28] Նույն տեղում, էջ 149, 151:

[29] Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտուոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 290—291:

[30] Նույն տեղում, էջ 159:

[31] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 93: **Օրմանյան,** Ազգապատում, հ. Ա, էջ 754:

Նկատի ունենալով այս բոլորը, մի շարք թեմերի առաջացման ժամանակաշրջանը, մի քանիսի անվանումների փոփոխությունները և, ամենակարևորը՝ կայսերական մասի թեմերի բացակայությունը մեր կարծիքով հայ եպիսկոպոսությունների ոխտանեցյան ցանկը չի կարող վերաբերվել Դ դարին, առավել ևս՝ Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանին:

Ադոնցի կարծիքով, Ոխտանեսի ցանկը վերաբերում է Է դարի վերջին և Ը դարի սկզբին, ավելի կոնկրետ՝ Մանազկերտի 726 թ. եկեղեցական ժողովին մասնակցած եպիսկոպոսներին: Սակայն, հաշվի առնելով մի շարք թեմերի՝ Էլոյի, Առանի հաստատման ժամանակաշրջանը, մեր կարծիքով այն վերաբերվում է Զ դարի վերջերին և Է դարի սկզբներին: Բացի ա.դ, դա այն շրջանն էր, երբ Վրաց Կյուրիոն Կաթողիկոսի օրոք Վիրքի Եկեղեցին բաժանվեց Հայ Եկեղեցուց: Ոխտանեսի աշխատությունը ընկալված է հիմնականում հենց Զ դ. վերջին և Է դ. սկզբին Հայ, Վրաց և Աղվանից Եկեղեցիների փոխհարաբերություններին, դավանաբանական պատմությանը: Այդ ցանկում ներկայացված է Հայաստանյայց Առաքելական Աթոռին ենթակա եպիսկոպոսների այդ շրջանի, կարելի է ասել, լրիվ ցուցակը, որտեղ նշված է անգամ «Միւս Ասորեայ» թեմը: Սա գտնվել է Հյուսիսային Միջագետքում կամ Ադիաբենում, որտեղ հոծ հայ բնակչության առկայության պայմաններում ենթարկվել է Հայ Եկեղեցուն: Հայ Եկեղեցու թեմերի նման ընդգրկուն ցանկի, Միջագետքից մինչև Ուտիք, այլևս չենք հանդիպի ոչ մի ժողովի արձանագրությունում, ոչ մի պատմիչի մոտ: Դա արվել է՝ շեշտելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծությունը, նրա տեղն ու դերը արևելյան Եկեղեցիների մեջ:

Ինչպես գիտենք, 591 թ. Հայաստանը երկրորդ անգամ է բաժանվում Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Ըստ այդ նոր բաժանման, Բյուզանդիային են անցնում Տուրուբերանը և Այրարատյան նահանգի մեծ մասը: Այսպիսով, մարզպանական Հայաստանի կազմում մնացին Այրարատ աշխարհի մի փոքր մասը, Վասպուրականը և Մոկքը: Թվում է, թե այս բաժանումը նոր փոփոխություններ պետք է առաջացներ նաև Եկեղեցու ներվիրապետական դասակարգման մեջ: Բյուզանդիային անցած շրջաններում գտնվող եկեղեցական թեմերը չպետք է ենթարկվեին Հայաստանյայց Առաքելական Աթոռին: Սակայն, ամեն ինչից երևում է (պատմիչների տեղեկություններից, եկեղեցական ժողովների արձանագրություններից, «Գիրք թղթոցում» պահպանված Զ դարի վերջի և Է դարի սկզբի եպիսկոպոսությունների ցանկերից)[32], որ այդ բաժանումը ոչ մի փոփոխություն չի մտցրել Հայ Եկեղեցու կառուցվածքի մեջ, և 591 թ. բաժանումից հետո Բյուզանդիային անցած շրջանների թեմերը շարունակել են պատկանել Հայաստանյայց Աթոռին, այնպես, ինչպես 571 թ. մարզպանական Հայաստանից անջատված և Ատրպատականին միացած Սյունիքը, որը շարունակում էր մնալ Հայաստանյայց Աթոռին պատկանող թեմ:

Վերջում կցանկանայինք կանգ առնել մի հարցի վրա ևս:

«Արևելյան ժամանակագրությունը» վկայում է, որ ըստ 410 թ. Մար Իսահակ Կաթողիկոսի գումարած ժողովում Տիգրոնի կամ Արևելքի կաթողիկոսությունը բաժանվում է 6 թեմերի[33]: Այստեղ մեզ հետաքրքրում է երրորդ՝ Մծբինի թեմը կամ մետրոպոլիտությունը, որի մեջ էր մտնում, ի թիվս

---

[32] Գիրք թղթոց, էջ 146—147, 149, 151 և այլն:

[33] **Հ. Մելքոնյան,** Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 219:

ապես, ևսև Բեյթ-Մոկայի եպիսկոպոսությունը: Սա, անկասկած, մեզ հայտնի հայոց Մոկաց եպիսկոպոսությունն է: Իսկ ինչո՞ւ է նա ընկալում միաժամանակ որպես նեստորական Աթոռին պատկանող թեմ:

Քրիստոնեության առաջին շրջանում յուրաքանչյուր վիճակում կար մեկ եպիսկոպոս, և ամեն հավատացյալ քրիստոնյա պետք է հնազանդվեր տեղական եպիսկոպոսին: Բա.ց այդ կանոնը հետագայում խախտվեց, երբ բարդացավ Եկեղեցու հիերարխիական կառուցվածքը, և մասնավոր Եկեղեցիներ և իրարից բաժանվեցին: Յուրաքանչյուր Եկեղեցի պարտավորվեց հոգ տանել իր սահմաններից դուրս գտնվող իր հավատակիցների համար եկեղեցական պաշտոններ, քահանաներ և եպիսկոպոսներ հատկացնել: Եվ այսպես, միևնույն թեմի մեջ ոչ միայն քահանայություններ, այլև տարբեր եպիսկոպոսական Աթոռներ կային: Շատ հավանական է Մոկսում հետոտորական ասորի ստվար բնակչության գոյությունը, որը պայմանավորված էր պարսկական քաղաքականությամբ՝ Մեծ Հայքից անջատված և նրան սահմանակից շրջաններում ի հակակշիռ հայկական տարրի՝ ասորիների բնակեցմամբ: Այստեղից էլ ասորիները հավանաբար անցել են հարևան Մոկաց աշխարհ և ստեղծել Բեյթ Մոկացի իրենց նեստորական եպիսկոպոսությունը:

Մեր կարծիքով, հակառակ երևույթի ենք հանդիպում 387 թ. բաժանումից հետո Մեծ Հայքից անջատված Կորդուքի, Ծավդեքի, հատկապես Մահկերտուն գավառների՝ ասորական աղբյուրներում նշված իբր նեստորական եպիսկոպոսությունների հարցում:

410 թ. Իսահակ Կաթողիկոսի գումարած ժողովում ստեղծված Տիզբոնի կաթողիկոսությանը ենթակա Մծբինի թեմի մեջ մտնում էին նաև Կուրդուի, Բեյթ-Զաբդեյի եպիսկոպոսությունները, իսկ հինգերորդ՝ Արբելայի կամ Հեդդարաբի թեմին էին պատկանում Բեյթ-Նոհադրայի, Բեյթ-Բագաշի, Բեյթ-Դասենի, Բեյթ-Մահկարտի, Ռամոնիհի, Դաբարիևոսի եպիսկոպոսությունները[34]: Այդ երկրամասերը՝ Դասենը, «Բեյթ-Նոհադրան» (հայոց Նիհորականը), Մահկերտունը, Ծավդեքը 387 թ. անջատվել էր Հայաստանից և կցվել Պարսկաստանին ենթակա Ադիաբենի կամ Հեդդարաբի նահանգին, և յերված ասորի գերիներից շատերին տեղավորում էին հայկական այդ գավառներում: Սասանյանները հայկական այդ երկրամասերը Հայաստանից քաղաքականապես անջատելուց հետո, ամեն կերպ աշխատել են բնակչության կապը կտրել Հայաստանից: Այդ նպատակով էլ նպաստավոր պայմաններ են ստեղծել՝ քաջալերելով նեստորական Եկեղեցու գործիչների գործունեությունը: Այս նպատակին հասնելու համար փորձում էին ասորի քրիստոնյաներին հակադրել հայերին՝ օգտագործելով նրանց դավանաբանական հակասությունները[35]:

Այդ գավառներից ոչ բոլորում հաջողվեց ամրապնդել ասորական տարր, և նեստորական հավատի հետևորդները չկարողացան հիմնել իրենց համար նեստորական Աթոռներ հատկապես Կորդուքում, Ջավդեքում (Ծավդեք) և Մահկերտուն գավառում: Այդ երեք թեմերի եպիսկոպոսները հայտնի չեն մեզ և ընդհանրապես ոչ մի տեղ չեն նշվում: Մելքոնյանը գրում է, որ հատկապես Մահկերտունը միշտ էլ դուրս է մնացել Տիզբոնի կաթողիկոսության ազդեցության ոլորտներից: Այդ երեք գավառներում

---

[34] Նույն տեղում, էջ 220:

[35] Նույն տեղում, էջ 248:

կա՛մ չեն եղել նեստորական եկեղեցիներ, կա՛մ եղել են աննշան[36]: 410 թ. ժողովից հետո, Մաշկերտոան եպիսկոպոսը ոչ մի անգամ չի հիշատակվում, և ոչ մի ժողովի մասնակից չի եղել, մի հանգամանք, գրում է Մելքոնյանը, որ խոսում է այն մասին, որ 410 թ. ստեղծված նեստորական եպիսկոպոսական Աթոռն այստեղ ձևական է եղել և իրականում գոյություն չի ունեցել[37]: Մեր կարծիքով, Ռխտանեսի ցանկում նշված «Միւս Ասորեաց» եպիսկոպոսության տակ, հավանաբար, նկատի է առնված Տիգրոնի կաթողիկոսությանը պատկանող Մծբինի և Արբելայի թեմերին նեթակա այն եպիսկոպոսությունները, որոնք ստեղծվել էին Մեծ Հայքից բաժանված հայկական նրկրամասերում, սակայն իրականում չէին պատկանում Տիգրոնի Աթոռին: Ահա Ռխտանես պատմիչն էլ, ըստ մեզ, նկատի ունի Ասորիքի այս նահանգների վերոհիշյալ հայկական գավառները, որոնք «Միւս Ասորեաց» եպիսկոպոսության ընդգրկում անվամբ նեթարկվել են Հայաստանյայց Առաքելական Աթոռին:

Ռխտանեսի եկեղեցական թեմերի ցանկում չկան նախորդ ցանկերից մեզ հայտնի միայն Մարդպետական և Սեպհական եպիսկոպոսությունները: Ըստ Ադոնցի, դրանք համանիշ են, կազմում են մեկ թեմ: Տարբեր ցանկերում ներկայացված է կա՛մ Մարդպետական, կա՛մ Սեպհական եպիսկոպոսությունը, բայց ոչ երկուսը միասին՝ որպես առանձին թեմեր: Եթե ընդունենք դա, ապա արդեն Զ դարի վերջերին գոյություն ունեին Հայ Եկեղեցում նեթակա երեսուներկու (Այրարատյան թեմի հետ միասին) եպիսկոպոսություններ:

ԱՐՏԱՇԵՍ ՂԱՋԱՐՅԱՆ

---

[36] Նույն տեղում, էջ 252:
[37] Նույն տեղում, էջ 258:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՄԱՀՄՈՒԴ ՎԱՅԵԶԻԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 2-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական պատվիրակությանը՝ ԻԻՀ արտաքին գործերի փոխնախարար Մահմուդ Վայեզիի գլխավորությամբ:

Պրն. Վայեզին շնորհավորանքի և բարեմաղթությունների ջերմ խոսքեր հղեց Վեհափառ Հայրապետին՝ գահակալության առթիվ, և ընդգծեց, որ ի դեմս Նորին Սրբության նրանք տեսնում են իրանական ժողովրդի մեծ բարեկամի: Փոխնախարարը իր խոսքում բարձր գնահատեց պարսիկ և հայ ժողովուրդների բարեկամությունը, կարևորեց հոգևոր արժեքների դերը մարդկության կյանքում և ուրախությամբ նշեց, որ մեր օրերում նըկատվում է հոգևոր վերազարթոնք ողջ աշխարհում՝ անկախ հավատքի պատկանելությունից:

Ամենայն Հայոց Հովվապետը շնորհակալություն հայտնեց ջերմ շնորհավորանքների և անկեղծ մաղթանքների համար՝ իր հերթին ևս կարևորելով հայ և պարսիկ ժողովուրդների բարեկամությունը:

Կրոնների տարբերությունը, ասաց Նորին Սրբությունը, չպետք է խոչընդոտ հանդիսանա մեր երկու ժողովուրդների մերձեցմանն ու բարեկամությանը, բոլոր ասպարեզներում՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, թե՛ գիտության և թե՛ հոգևոր: Մեր դարավոր պատմության մեջ մենք բարեկամության բազում դրվագներ կարող ենք վերհիշել: Ուրախ եմ, որ այսօր այդ հարաբերությունները է՛լ ավելի ամրապնդման միտում ունեն: Ես բարձր եմ գնահատում այդ բարեկամությունը, և թող այն խորհրդանիշ հանդիսանա բոլոր հարևան ժողովուրդների համար:

Ես հայ և պարսիկ ժողովուրդների բարեկամության ակտիվ կողմնակից եմ եղել այն տարիներին, երբ Ձեր երկրում Իրանահայկական հայոց թեմի առաջնորդն էի: Իրանը իմ կյանքի մի մասն է կազմում: Նյութական աշխարհում միշտ էլ առաջնահերթ խնդիր պետք է հանդիսանա հոգևոր արժեքների պահպանումն ու զարգացումը:

Վեհափառ Հայրապետը երկար խոսեց քրիստոնյա-իսլամ փոխհարաբերության և երկխոսության մասին: Պատմելով վերջերս Արցախի թեմ կատարած իր այցելության մասին, ընդգծեց, որ Ղարաբաղում այլևս պատերազմը պետք է դադարի և հակամարտությունը լուծվի խաղաղ երկխոսության պայմաններում:

Հանդիպումն անցավ աշխույժ մթնոլորտում: Հյուրերը շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար:

Պատվիրակության կազմում էին Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիքքար Էսֆահանին, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պրն. Բայբուրթյանը, պաշտոնական այլ անձինք:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՎԵՀԱՓԱՌԻ ՄՈՏ

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ն ընդունեց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Արա Բաբլոյանին:

Զրույցի ընթացքում շոշափվեցին հանրապետության առողջապահության իրավիճակին առնչվող հարցեր: Վեհափառ Հայրապետն իր տեսակետներն արտահայտեց այդ բնագավառի առաջընթացի վերաբերյալ և հավաստիացրեց, որ Մայր Աթոռն իր կարելի մասնակցությունը կբերի հանրապետության ազգային առողջապահության զարգացման գործին:

Պրն. Բաբլոյանին ուղեկցում էին փոխնախարար Դերենիկ Դումանյանը և առողջապահության նախարարության այլ աշխատակիցներ:

ԵԶԻԴԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հայաստանի եզդիների համայնքի ներկայացուցիչներին՝ համայնքի առաջնորդ Հասան Հասանյանի գլխավորությամբ: Ջերմորեն շնորհավորելով Վեհափառ Հայրապետին ընտրության և գահակալության առթիվ՝ եզդիների առաջնորդը ներկայացրեց համայնքի ներկա կացությունը՝ շեշտելով, որ հայ ժողովրդի և Հայաստանի իշխանության բարեհաճ վերաբերմունքի շնորհիվ Հայաստանը հայրենիք է դարձել նաև եզդիների համար:

Զրույցի ընթացքում շոշափվեցին համայնքի ներքին կյանքին, ազգային սովորություններին առնչվող հարցեր: Ես ձեզ լավ եմ հասկանում, ասաց Վեհափառ Հայրապետը, քանի որ ապրել եմ արտասահմանում: Ես գնահատում եմ ձեր կապվածությունը հայ ժողովրդին և Հայաստան երկրին: Ծանոթ եմ, կարդացել եմ, գիտեմ ձեր ժողովրդին՝ դուք արևը պաշտում եք որպես կյանքի աղբյուր, այլ ոչ որպես կրակի գունդ: Աստված օրհնի ձեր համայնքի բոլոր անդամներին: Կհուսամ, որ փոխադարձ գոր-

ծակցության ու բարեկամական հարաբերությունների նոր շրջան կբացվի մեզ համար:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը և եզդիների համայնքի առաջնորդը նվերներ փոխանակեցին:

ՀԱՐԱՎԱՆԱՎԻԱՅԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԸ ՎԵՀԱՓԱՌԻ ՄՈՏ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հարավսլավիայի Դաշնակցային Հանրապետության արտաքին գործերի նախարար Վիոդիսլավ Յանովիչին:

Նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հարավսլավիայի Հանրապետությունում տիրող ներկա կացությունը՝ միաժամանակ նկատելով, որ աշխարհն առհասարակ ճիշտ պատկերացում չունի այնտեղ կատարվող իրադարձությունների մասին: Վստահ եմ, ասաց նախարարը, որ հայ ժողովուրդը լավ է հասկանում Հարավսլավիայի վիճակը, որովհետև տառապանքի մեջ մենք հաճախ նույնատեսակ կացության ենք դիմագրավել:

Մենք բնականաբար պաշտպան կկանգնենք բոլոր ժողովուրդների արդար իրավունքներին, պատասխան խոսքում ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը, սակայն մեր բաղձանքն է, որ ազգերի միջև առկա տարաձայնությունները լուծվեն խաղաղ միջոցներով:

Զրույցի ընթացքում շոշափվեցին նաև հայ և հարավսլավական Եկեղեցիների հարաբերություններին և փոխադարձ գործակցությանն առնչվող հարցեր:

Հարավսլավացի հյուրերին ուղեկցում էր և հանդիպմանը մասնակցեց ՀՀ արտաքին գործոց նախարար Վահան Փափազյանը, արտգործնախարարության աշխատակիցներ, Մայր Աթոռի միաբաններ:

ԱՀՄԱԴ ՀԱԾԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հունիսի 7-ին ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության խորհրդական Ահմադ Հաշեմի Ռաֆսանջանիին:

Հարգարժան հյուրը ջերմորեն շնորհավորեց Վեհափառ Հայրապետին ընտրության և գահակալության առթիվ և հաջողություններ մաղթեց նրան՝ ազգային և եկեղեցական գործունեության ասպարեզում:

Պատասխան խոսքում Վեհափառ Հայրապետը մասնավորապես նշեց, որ երբեք չի մոռանա Իրանում կայացած իր հանդիպումը ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի հետ, և եթե նա երբևէ գրի առնի իր հիշողությունները, ապա մեծ տեղ կհատկացնի Իրանի կյանքին, որտեղ ժամանակին պաշտոնավարել է, և Իրանի նախագահին, որի՝ ժողովրդին կառավարելու հմտությամբ հիանում է:

Խորհրդականը, հավաստիացնելով, որ իր երկրում մեծապես հարգում են Վեհափառ Հայրապետին, նրան փոխանցեց Իրան այցելելու հրավեր:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՎԵՀԱՓԱՌԻ ՄՈՏ

Նույն օրը Վեհափառ Հայրապետն ընդունեց Ադրբեջանում Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Լեոնիդին և Ադրբեջանում ալավոնների մշակութային կենտրոնի տնօրեն Վալենտինա Սերգեևնային:

Հայր Լեոնիդը, ջերմորեն շնորհավորելով Վեհափառ Հայրապետին գահակալության առթիվ, նրան տեղեկացրեց իր առաքելության նպատակի մասին՝ խնդրանքով դիմել Նորին Սրբությանը, որպեսզի նա միջնորդի դեր ստանձնի ղարաբաղյան պատերազմի հետևանքով հայկական կողմում հայտնված ադրբեջանցի կանանց և երեխաների ազատ արձակման հարցում:

Շնորհակալություն հայտնելով խաղաղարար այդ այցի համար, Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ Հայաստանի իշխանությունները ձգտում են հասնել այն բանին, որ գերիները, պատանդները ազատ արձակվեն, և այս հանգամանքը վերջերս գոհունակությամբ է արձանագրել Միջազգային Կարմիր խաչի և կարմիր մահիկի ներկայացուցիչը՝ Հայաստան իր հետ հանդիպման ժամանակ:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ «ՍՊԻՏԱԿ ՏԱՂԱՎԱՐՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունեց արգենտինյան «Սպիտակ աղավարտներ» կազմակերպության անդամներին՝ Արգենտինայի նախագահ Կառլոս Մենեմի օգնական, դեսպան Օկտավիո Ֆրիխերիոյի գլխավորությամբ:

«Սպիտակ աղավարտներ» շարժումը սկիզբ է առել Արգենտինայի նախագահի նախաձեռնությամբ և արժանացել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս Ղալիի հավանությանը: Շարժումը նպատակ ունի ծառայել մարդկանց կարիքավոր շերտերին, նյութական և բարոյական աջակցություն ցույց տալ նրանց:

Վեհափառ Հայրապետն օրհնության խոսք ուղղեց պատվիրակության անդամներին և հաջողություն մաղթեց նրանց մարդասիրական ձեռնարկումներին:

Պատվիրակության կազմում էին կազմակերպության անդամներ՝ արգենտինահայ բարեգործ Անդրանիկ Էոնեկյանը, դոկտորներ Խորխե Լագոսը և Նիկոլասը:

ՇՎԵԴԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՎԵՀԱՓԱՌԻ ՄՈՏ

Հունիսի 26-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Շվեդիայի արտակարգ և լիազոր դեսպան Սուեն Հիրդմանին և Շվեյցարիայի արտակարգ և լիազոր դեսպան Յոհան Բուխերին: Դեսպանները շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին գահակալության առթիվ և մաղթեցին արդյունավետ եկեղեցաշինական գործունեություն: Ջերմ զրույցի ընթացքում շոշափվեցին ժամանակակից աշխարհում Եկեղե-

ցու դերին, ազգամիջյան և միջեկեղեցական հարաբերություններին, դավանանքի ազատությանը վերաբերող հարցեր: Նորին Սրբությունը պատմեց Ծիրակ, Արցախ և Մոսկվա կատարած այցերի մասին՝ արժևորելով հավատքի վերազարթոնքը հայ ժողովրդի զավակների հոգիներում՝ ինչպես հայրենիքում, այնպես էլ ի սփյուռս աշխարհի:

Հանդիպման վերջում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր գրքերից նվիրեց դեսպաններին և հաջողություններ մաղթեց նրանց՝ ստանձնած նոր պարտականությունների իրագործման ասպարեզում:

ՄԱՀԱՅՋԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Օրվա երկրորդ կեսին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Մալայզիայի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Դատուկ Յահյա Բաբային, որին ուղեկցում էին դեսպանության քաղաքական և տնտեսական գծով առաջին քարտուղարներ:

Պրն. Յահյա Բաբան Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց, որ ինքն առաջին անգամ է այցելում Հայաստան և իր աշխատակիցների օգնությամբ նպատակ ունի ուսումնասիրել Հայաստանի տնտեսական կացությունը՝ համատեղ գործակցության հնարավոր ելքերը ճշտելու հեռանկարով: Այնուհետև խոսակցություն ծավալվեց քաղաքական, հասարակական և երկու պետությունների համար ընդհանուր տնտեսական արդի գործոնների և պայմանների շուրջ:

Վեհափառ Հայրապետը ներկայացրեց այն խնդիրները, որ կանգնած են Հայաստանի նորանկախ պետության և Հայ Եկեղեցու առջև և կարևորեց մտավորականության գործուն դերը:

Պրն. Յահյա Բաբան շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար:

ՄԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Հուլիսի 6-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Միավորված Ազգերի Կազմակերպության փոխներկայացուցիչ և տեղեկատվության ավագ պատասխանատու Էնիկիվ Կեբեդեին: ՄԱԿ-ի ներկայացուցիչը Վեհափառ Հայրապետին տեղեկություններ հաղորդեց իրենց կազմակերպության աշխատանքային ծրագրերի վերաբերյալ՝ միաժամանակ նկատելով, որ դեռևս շատ խնդիրներ կարոտ են ուսումնասիրության:

Նորին Սրբությունը, հաջողություններ մաղթելով Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի ներկայացուցչությանը, ավելացրեց, որ Հայաստանն իրապես կարիք ունի միջազգային կազմակերպությունների հետ սերտ փոխգործակցության: Գարեգին Ա Կաթողիկոսը կարևորեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերակատարությունը, որ այսօր առավել ևս անբաժան է ազգային կյանքից: Առաջիկայում սպասվում են կարևոր իրադարձություններ, մասնավորաբար Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունը:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ համատեղ ծրագրերը գործնական շարունակություն և կիրառություն կգտնեն:

ԵՎՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Հուլիսի 6-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Եվրախորհրդարանի, ինչպես նաև Եվրախորհրդի անդամների պատվիրակություններին, որոնք ժամանել են Հայաստան՝ իրրև դիտորդ մասնակցելու Սահմանադրության հանրաքվեին և Ազգային Ժողովի ընտրություններին:

Մեծաճարտ հյուրերը ներկայացրին իրենց տպավորությունները ընտրությունների ընթացքի վերաբերյալ: Ողջունելով Մայր Աթոռ ժամանած դիտորդներին, Վեհափառ Հայրապետը մեծապես կարևորեց նրանց առաքելությունը: Մեր երկիրը ժողովրդավարության կայացման այս դժվարին ընթացքի մեջ միջազգային համագործակցության և ուշադրության կարիքն ունի, ասաց Նորին Սրբությունը:

Գարեգին Ա Կաթողիկոսն անդրադարձավ նաև Եկեղեցու դերակատարության խնդրին՝ նկատելով, որ ազգը նախ և առաջ միասնական է իր հավատքով:

Ջերմ զրույցի ընթացքում շոշափվեցին նաև տիյուրքահայության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության կարևոր դրվագներին վերաբերող հարցեր:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հուլիսի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական բանկի ներկայացուցիչներին, որոնց ուղեկցում էր Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Վիգեն Չիթեչյանը: Ներկայացնելով հյուրերին, ՀՀ փոխվարչապետը նշեց, որ նրանց այցելության նպատակն է՝ ուսումնասիրել հայկական ատոմակայանի անվտանգության պայմանները՝ հետագա ներդրումների համար երաշխիքներ ձեռք բերելու նպատակով: Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ռուսաստանի Դաշնությունից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից ժամանած մասնագետները ծանոթացան այն աշխատանքներին, որ տարվել են մինչ այժմ հայկական ատոմակայանի անվտանգության ապահովման ուղղությամբ: Մենք հուսով ենք, ասաց փոխվարչապետը, որ այդ աշխատանքները իրականացրել ենք ճիշտ հունով:

Հյուրերը շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ միաժամանակ նկատելով, որ իրենք շահագրգռված են Հայաստանի տնտեսական առաջընթացով:

Ողջունելով Եվրոպական բանկի ներկայացուցիչներին, Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց, թե որքան էլ տարբեր ազգություններ պատկանեն մարդիկ, նրանք կարող են միասնական լինել նույն մտածումներով: Մենք դժվար պահեր ենք ունեցել մեր պատմության մեջ, 1915 թվականը մեր պատմության մռայլ տարին է: Այսօր հայ ժողովուրդը ձգտում է հաղթահարել ծագած տնտեսական և հասարակական դժվարությունները, և դրանում մեծապես կարևորվում է միջազգային հանրության աջակցությունը:

Մեր ժամանակը գաղափարների փոխանակման շրջան է: Հաջողություններ մաղթելով հյուրերին, Վեհափառ Հայրապետը նրանց նվիրեց Սուրբ Էջմիածինը պատկերող կրծքանշաններ:

ԱՄՆ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Միացյալ Նահանգներից ժամանած իրավաբանների և դատական գործիչների պատվիրակությանը: Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, հյուրերը ներկայացրին իրենց առաքելության նպատակը, ինչպես նաև գործնական խնդիրները: Պատվիրակությունը Հայաստան է ժամանել «Փորձագիտական օգնություն Հայաստանի Հանրապետությանը» կազմակերպության հրավերով և ներկայացնում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Դեկրագույն և նահանգային դատական մարմինները: Հուլիսի 16—21-ը Երևանում տեղի կունենա համաժողով, որի մասնակիցները կքննարկեն իշխանությունների բաժանման, դատական մարմինների գործունեության, Սահմանադրության ընդունումից հետո ծագած նոր խնդիրներ:

Ողջունելով հյուրերին, Գարեգին Ա Կաթողիկոսը ներկայացրեց այն իրողությունները, որոնք բնութագրական են Հայաստանի ներկա կացությանը: Ամերիկացի դատավորների և դատախազների ժամանումը Հայաստան գնահատելով իբրև հայ-ամերիկյան երկխոսության խորացման նոր դրսևորում, Նորին Սրբությունը հաջողություններ մաղթեց համաժողովի մասնակիցներին՝ նշելով, որ նման միջոցառումները մեծապես կնպաստեն իրավական նորմերի, ինչպես և ընդհանրապես կյանքի նոր հայեցակետեր ձևավորելու գործընթացին:

Վերջում Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» կարդաց և օրհնեց ներկաներին:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հուլիսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության աշխատանքի փոխնախարար Կլոդ Պիտուսին, որին ուղեկցում էին Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ներկայացուցիչներ:

Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, փոխնախարարը ներկայացրեց այն խնդիրները, որոնք կրպատակ ունեն պարզել Հայաստանում գտնվելու ընթացքում: Ֆրանսիան բարեկամաբար է տրամադրված Հայաստանի նկատմամբ, ասաց պրն. Պիտուսը, և նրան ծանոթ են Հայաստանի ներկա հոգսերը:

Զրույցի ընթացքում շոշափվեցին տնտեսական վերընթացին, գործազրկությանը, գների կայունացմանը վերաբերող հարցեր:

Գարեգին Ա Կաթողիկոսը նկատեց, որ կան ընդհանուր մտահոգություններ, որոնք միացնում են երկու երկրներին: Դա էլ կարող է հիմք հանդիսանալ ևս մի համագործակցության համար՝ աշխատանքի և մասնագիտական գրաղվածության բնագավառում: Նորին Սրբությունը կարևոր համարեց այնպիսի հասարակարգի կառուցումը, որի պայմաններում ժողովրդի ավանդական նկարագիրը զոհ չդառնա սպառողական հոգեբանությանը: Ժամանակակից աշխարհում ոչինչ դյուրությամբ ձեռք չի բերվում, և Եկեղեցին մեծ դեր ունի հարաբերությունների կարգավորման և ուղղորդման խնդրում:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց պատվարժան հյուրին և նրան ուղեկցող անձանց:

ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հուլիսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հալեպի նահանգապետ Մուհամմադ Մուսթաֆա Միրոյին, որին ընկերակցում էին Հալեպում ՀՀ հյուպատոս Լևոն Սարգսյանը, արդյունաբերության և առևտրի կենտրոնական հանձնախմբի հայ անդամներ Կարապետ Չամիչյանը և Բյուզանդ Քեյվանյանը, ինչպես նաև արտգործնախարարության ներկայացուցիչ Արշակ Փոլադյանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանի և Սիրիայի փոխհարաբերությունների ներկա հնարավորությունների մասին: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ ոչ մի հայ չի կարող մոռանալ, որ 1915-ի ցեղասպանությունից հետո, երբ մահը սպառնում էր ողջ արևմտահայությանը, վերապրող հայությունը նոր շունչ առավ հենց Սիրիայում: Ավանդույթի վերածված բարեկամական կապերի ներուժացումը Նորին Սրբությունը համարեց կարևոր գործոն երկու ժողովուրդների հարաբերությունների հետագա զարգացման համար:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռաջենդրա Կումարին: Դեսպանին ուղեկցում էին Հնդկաստանում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Հովսեփ Մեֆերյանը, ՀՀ ԱԳՆ պաշտոնյաներ:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին հայ-հնդկական փոխհարաբերությունների, Եկեղեցու ներկա դերակատարության, ազգային կյանքի նոր իրողություններին առնչվող հարցեր: Վեհափառ Հայրապետն իր խոսքում ընդգծեց, որ երկու ժողովուրդների բարեկամությունը դարավոր պատմություն ունի: Հնդկահայ գաղութը դարեր շարունակ եղել է հայ հասարակական մտքի և մշակույթի զարգացման կենտրոններից մեկը: Հայ առաջին պարբերականը՝ «Ազդարարը», ինչպես նաև Հայաստանի առաջին Սահմանադրությունը ստեղծվեցին հենց հնդկահայ գաղութում: Հնդկաստանն

անմոռանալի երկիր է, ասաց Նորին Սրբությունը և պատմեց այդ երկիր կատարած իր այցելությունից ստացած տպավորությունների մասին:

Վերջում Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց դեսպանին՝ նրա գործունեության պատասխանատու ասպարեզում:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հուլիսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հունաստանի ազգային պաշտպանության գլխավոր շտաբի պետ, ծովակալ Քրեատոս Լիմբերիսին: Մեծաճարտ հյուրը Մայր Աթոռ ժամանեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի պաշտոնակատար Միքայել Հարությունյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին հայ-հունական հարաբերությունների ներկա փուլին վերաբերող հարցեր:

Գարեգին Ա Կաթողիկոսը հաջողություններ մաղթեց ծովակալ Լիմբերիսին՝ միաժամանակ կարևորելով եվրոպական կառույցների մեջ Հայաստանի Հանրապետության ներգրավման անհրաժեշտությունը:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հուլիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Յան Կեժունին: Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, դեսպանը նշեց, որ իրեն առաջին անգամն է Հայաստանում և մեծ հետաքրքրությամբ է ծանոթանում հանրապետության ներքին կացությանը: Պրն. Կեժունը նկատեց նաև, որ հայ և չինացի ժողովուրդների բարեկամական հարաբերությունները գալիս են պատմության խորքերից: Նա տեղեկացրեց, որ Չինաստանում գործում են բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիներ, ուր հաճախում են երեք միլիոնից ավելի հավատացյալներ:

Ողջունելով մեծաճարտ հյուրին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Գարեգին Ա Կաթողիկոսը հույս հայտնեց, որ բարեկամական հարաբերությունները Հայաստանի և Չինաստանի հանրապետությունների միջև այսուհետ առավել կամրապնդվեն: «Մեր կրոնքները տարբեր են, բայց Աստված մեկ է,— ասաց Նորին Սրբությունը,—և ով մարդկության կծառայե, Աստծուն ծառայած կլինի»:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Չինաստանի Հանրապետության դիրքորոշման առթիվ, որն աջակից է Հայաստանի ժողովրդին: Մենք պետք է առաջ շարժվենք այս ճանապարհով, ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Հայրապետը և Չինաստանի դեսպանը նվերներ փոխանակեցին:

ԿՈՐՅՈՒՆԻ ԵՐԿԸ ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՄԲ

Հայ դասական մատենագրությունը մեկ մատենաշարով հրատարակելու մի քանի փորձեր են եղել անցյալում: 1830-ական թթ. Վենետիկի Մխիթարյանները «Մատենագրություն նախնյաց» խորագրի ներքո սկսեցին տպագրել Եզնիկ Կողբացու, Կորյունի, Մովսես Խորենացու, Եղիշեի և մի շարք այլ հեղինակների գրական ժառանգությունը՝ պատմագրական և հոգևոր-աստվածաբանական գործերի ներառմամբ, որին գումարվեց և հրատարակման «Նշխարք հին մատենագրության» մատենաշարը՝ համաձայն ժամանակի բնագրագիտական սկզբունքների և բանասիրական ըմբռնումների:

1902 թ. նշանավոր հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանը, Ստեփանոս Մալխասյանցը և Մեծի Տանն Կիլիկիո ապագա Կաթողիկոս երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանը ձեռնամուխ եղան «Պատմագիրք Հայոց» շարքի հրատարակությանը: Թեև լույս տեսան միայն Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու պատմությունները, սակայն «Պատմագիրք Հայոցը» իր ընդգրկումից առավել առանձնացավ միևնույն բնագիրը պարունակող ձեռագրերի ծագումնաբանության, ըստ խմբագրությունների առանձնացման և բնագրագիտական մնացյալ հարցերի համակողմանի քննությամբ:

Հայ դասական մատենագրությունը առավել ամբողջական և ընդգրկուն ձևով է ներկայացված վերջին տասնամյակներում հրատարակված «Հայ մատենագիրներ» և «Ուսանողի գրադարան» մատենաշարերով: Եվ ահա վերջերս «Հայաստան» հրատարակչությունը սկսել է «Հայոց մատենագիրներ» նոր մատենաշարի հրատարակությունը: Նվիրված լինելով Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, այն ընդգրկելու է Ե—ԺԸ դարերի հայ մատենագրությունը իր թեմատիկ ժանրային բազմազանությամբ: Այս շարքով հրատարակվող գործերը ներկայացվելու են միայն աշխարհաբար թարգմանությամբ: Բացառություն է կազմում միայն շարքի առաջին գիրքը՝ Կորյունի «Վարք Մաշտոցին»[1]: Նրանում բերվում է հիշյալ երկի՝ Մաշտոց Արեղյանի կազմած քննական բնագիրը և աշխարհաբար թարգմանությունը: Նվիրված լինելով Կորյունի գործի գրության 1500-ամյակին, այն, սակայն, առաջ վերահրատարակությունը չէ նախորդ տպագրությունների և կարևորվում է մի քանի առումով:

Բուն բնագրից բացի, այս գրքում, որը լույս է տեսնել ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի աշխատասիրությամբ, զետեղված են նաև բանասի-

---

[1] Տե՛ս Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994 թ.: Աշխատությամբ՝ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի:

րության մեջ փոքր Կորյուն անվանումով հայտնի հիշյալ վարքի երկու հատուտ խմբագրությունները: Նրանցից առաջինը կոչվում է «Ի յիշատակի Սրբոյն Մեսրովպայ վարդապետի զոր արարեալ է Կորեան սրբոյ յաղագս վարուց նորա» և պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի 14-րդ դարի երկու Տոնականներում, որոնց հիման վրա առաջին անգամ գրաբար բնագիրը, աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ, հրատարակել է Արտաշես Մաթևոսյանը: Երկրորդ խմբագրությունը՝ «Ի յիշատակ պատմութեան վարուց երանելոյ Սուրբ Վարդապետին Մեսրովբայ, զոր ասացեալ է նորին աշակերտին Կորեան», դեռևս 1854 թ. հրատարակել է Ղևոնդ Ալիշանը «Սոփերք Հայկականք» շարքի ԺԱ հատորում՝ նշելով, թե այն գտել է «Ի ստուար և հնագիր (ԺԲ դարու) ճառընտիրի» մեջ: Հիշյալ ձեռագիրը Փարիզի Ազգային գրադարանի հայերեն № 178 Տոնական ժողովածուն է: Ձեռագրի Փարիզից ստացված մանրաժապավենի հիման վրա նոր վերծանությունը և ծանոթագրությունները կատարել է Արտաշես Մաթևոսյանը, իսկ թարգմանությունը՝ Անդրանիկ Ձեյթունյանը:

Համատուտ այս տարբերակների ստեղծումը բացատրվում է երկու հանգամանքով. նախ, որ Կորյունի երկարաբան, բարձր և խրթին ոճը արդեն միջնադարում դժվարընկալելի է եղել՝ պատճառ դառնալով առավել դյուրամատչելի և համատուտ շարադրանքով մի նոր խմբագրության առաջ գալուն: Վերջինս պայմանավորված էր նաև ծիսա-արարողական հանգամանքներով, հիշյալ համատուտ և մատչելի տարբերակը եկեղեցում ընթերցվել է հայոց գրերի գյուտին նվիրված տոնակատարության օրերին:

Ինչ վերաբերում է բուն «Վարք Մաշտոցին», ապա Արտաշես Մաթևոսյանը չի բավարարվել միայն Մանուկ Աբեղյանի կազմած բնագրի վերահրատարակությամբ, այլ բանասիրական քննությանը հավելելով և ձեռագրագիտականը, Կորյունի երկում կատարել է երկու կարևոր տեղաշարժ և դրանցով պայմանավորված բնագրային մի քանի նոր վերընթերցումներ:

Մաշտոցի վարքի քննությանն անդրադարձած գրեթե բոլոր բանասերները նշում են, որ բնագիրը նկատելի փոփոխություններ է կրել բազում ընդօրինակությունների ընթացքում և Կորյունի լեզվի դժվարընկալելիության պատճառով, երբ գրիչները չհասկանալով շատ բառեր ու դարձվածքներ, սխալ են արտագրել կամ յուրովի «սրբագրել» թե՛ բուն երկը և թե՛ նախորդ գրիչների սխալները՝ դրանք ուղղել փորձելիս: Այսպես, Գ. Ֆինոգլյանը 1930 թ. Երուսաղեմում վենետիկյան երկու՝ 1833 և 1894 թթ. տպագրությունների հիման վրա հրատարակելով Մաշտոցի վարքը, նկատում է սխալներից զերծ տեսնել բնագիրը «ան հիրավի «Ոսկեղենիկ» Մատենիկին»: 1941 թ. Մանուկ Աբեղյանը վերստին վենետիկյան հրատարակությունների և Մատենադարանի ձեռագրերի համեմատությամբ կազմելով քննական բնագիրը, դարձյալ շեշտում է, որ մեզ հասած օրինակը «ընդհանրապես, մանավանդ վերջին մասում, շատ աղճատված է արտագրողների ձեռքով», որի գլխավոր պատճառն է համարում Կորյունի խրթին լեզուն և ոճը:

1949 թ. Վիեննայում Մաշտոցի վարքի քննական բնագրի կազմմանն է ձեռնամուխ լինում նաև Ներսես Ակինյանը: Շեշտելով, որ «աղճատված է լեզուն բազմախուռն վրիպակներով», նաև գրում է՝ «Կատարված են հատվածներու տեղափոխություններ, ըլլա դիտումով, ըլլա թղթերու ետևառաջությամբ»: Ակինյանի նշած այս ետևառաջություններից գլխավորը վերաբերում է դանիելյան նշանագրերի ուսուցմանը:

Հայագիտության մեջ բազմիցս քննարկվել է այն հարցը, թե արդյո՞ք Մաշտոցին երկու տարի էր հարկավոր հասկանալու, որ հիշյալ գրերը չեն համապատասխանում հայերենի հնչյունական համակարգին: Ներսես Ակինյանը և նրա հետևողությամբ Արտաշես Մաթևոսյանը գտնում են, որ ողջ թյուրիմացությունը առաջ է եկել այն բանից, որ ստորև բերվող հատվածում ընդգծված պարբերությունը չի գտնվում իր տեղում.

«Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային Հայոց երկիրը: Նրա թագավորության հինգերորդ տարում հասցրեց նրան [նշանագրերը]: Իսկ արքան՝ Սուրբ Սահակի և Մաշթոցի հետ միասին՝ նշանագրերն առանալով Հաբելից՝ ուրախացան:

Ապա երանելի հոգաբարձուներն [իրենց] հանկարծագյուտ ուզածն առնելով՝ էլի խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել: Եվ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա [թագավորը] հրամայեց ամեն տեղ նույն [նշանագրերով] կրթել, որով և երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի իր ուսուցչություն արեց ու նույն նշանագրերով տարավ:

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները՝ կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին, ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ ելք էին փնտրում դրան»:

Այստեղ առաջանում են մի քանի հարցեր: Նախ՝ թե ինչպես է, որ Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարում Մաշտոցը երկու տարի սովորեցնելուց հետո է միայն ըմբռնում, որ այդ գրերը պիտանի չեն հայերենի համար, և Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարուց հետո, երկու տարի անցնելուց հետո, ինչու է դարձյալ ասվում Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարում, երբ արդեն պետք է լիներ յոթերորդ: Նաև ընդգծված պարբերությունում, որը վերաբերվում է աշակերտների հետ Դանիելյան նշանագրերը պարապելուն, ասվում է, թե երանելին՝ Մաշտոցը, հասավ նույնիսկ վարդապետական աստիճանի: Միթե վարդապետական աստիճանը տրվեց օտար նշանագրերը հայոց հնչյունական համակարգին հարմարեցնելու անհաջող փորձերի համար:

Այս անհամապատասխանությունը զգացել է նաև Մանուկ Աբեղյանը: Սակայն հիշյալ պարբերությունը թողնելով իր տեղում, մեծանուն գիտնականը փորձել է հետագա շարադրանքը հարմարեցնել նրան և ձեռագրերում Դանիելի համար ասվող «յանկարծ ուրեմն գրեալ նշանագիրս», դարձնում է գտեալ և նույն կերպ էլ «վասն գրելոյն ի Դանիէլէ» վասն գտելոյն: Շարունակելով հարմարեցման այս ընթացքը, բազմավաստակ հայագետը «յայլոց դպրութեանց քաղեալքը» փոխում է թաղեալքի, որպես թե հին մատյաններում թաղված, այսինքն պահված գրեր, որոնք հանկարծագյուտ հաստոցի դարձան: Այնինչ բերված հատվածում հանելով ընդգծված պարբերությունը որպես թղթերի ետևառաջությամբ այստեղ հայտնված ընդմիջարկություն և վերականգնելով գոյալը որպես գրյալ և թաղյալը իբրև քաղյալ, միանգամից հատակվում են մի քանի հարցեր: Նախ, որ Դանիելյան նշանագրերը, որոնք ոչ թե թաղված, այլ քաղված էին, այսինքն հարմարեցված ուրիշ դպրություններից, որը իսկույն հասկանում է Մաշտոցը և շարունակում գրե-

րի որոնումը, մինչև որ «Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևից ևրան [այդ] բախտը. նա իր Սուրբ Աջով հայրաբար ծնեց նոր և աքսևչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր»:

Այս դեպքում հապա որտե՞ղ պետք է տեղադրել հիշյալ պարբերությունը: Մաթևոսյանը այն զետեղում է Թ· գլխից հետո, ուր պատմվում է, թե Վռամշապուհը նախարարագունդ ավագանիով ու հոգևոր դասով ինչպես է Ռահի գետի մոտ դիմավորում Երանելուն և ետ դառնում քաղաք «տոնական ուրախությամբ»: Վերը ընդգծված պարբերությունը այստեղ տեղադրելով և այստեղից էլ հանելով Մարաց խուժադուժ կողմերում ուսուցանելու մասին գլուխը և այն տանելով Մաշտոցի Հայոց արևելյան կողմերում ծավալած գործունեության համապատասխան տեղը, ամեն ինչ հստակվում է: Ընդգծված պարբերությունը այստեղ բերելով պարզ է դառնում, որ Մաշտոցը երկու տարի աշակերտների հետ Դանիելյան նշանագրերով չպարապեց, այլ նոր արարված գրերով և դրա համար ու ոչ թե օտար դպրություններից քաղված նշանագրերով կատարված անհաջող փորձերի համար ստացավ վարդապետական աստիճան:

Հիշյալ պարբերության տեղադրմամբ և այնտեղից Մարաց կողմերին վերաբերող գլուխը հանելով հստակվում է ևս մի հարց, թե հայկական գրերի արարումից անմիջապես հետո Մաշտոցը Վաղարշապատում սկսեց ուսուցանել և ոչ թե գնաց հետազոտ այդ աշխարհը:

Այս և համանման մի շարք հարցերի համակողմանիորեն անդրադարձել է Արտաշես Մաթևոսյանը «Վարքի» երկու հատվածների տեղափոխությանը հավելվածում: Չանհիմանալիորեն միայն իմաստաբանորեն և լեզվա-բանասիրական ընթությամբ ապացուցելու հիշյալ հատվածների տեղաշարժված լինելը, այն հիմնավորում է նաև ձեռագրագիտորեն՝ ետադարձ վերականգնման սկզբունքով վերստեղծելով Կորյունի երկի հեղինակային ինքնագիր օրինակի մակետը: Տանիամյակների ձեռագրագիտական իր փորձառությամբ ցույց է տալիս, թե ինչպես է գրվել և պրակների մեջ կազմվել ձեռագիրը՝ ունենալով որոշակի կայուն էջեր և տողեր: Կազմելով այսպիսի մի մակետ յուրաքանչյուր էջի վրա եղած տողերի և այդ տողերի նիշերի հաշվումով, գալիս է այն եզրակացության, որ երկու տարվա ուսուցումը և Մարաց կողմերը գնալուն ընթերված հատվածները նախագաղափար օրինակում եղել են մեկական էջեր: Այնուհետև ներկայացնելով էջերից պրակների կազմության և վերանորոգության ընթացքում նրանց հնարավոր խախտման տարբերակները ձեռագրային համապատասխան օրինակների վկայակոչմամբ, եզրակացնում է, որ այս երկու հատվածների բնագրային անհամապատասխանությունը նախագաղափար օրինակին պրդյունք է ձեռագրի նորոգության ընթացքում պրակների սխալ կազմման:

Կատարված այս աշխատանքը արժևորվում է կրկնակիորեն: Նախ, որ երկու էական ուղղում է մտցնում Մաշտոցի վարքի բնագրում, և երկրորդ՝ առաջին անգամ ձեռագրում եղած բնագրի քննության զուգահեռ կատարվում է բնագիրը պարունակող ձեռագրի քննությունը: Բնագիրը ներկայացվում է ձեռագրային միջավայրում և նաև այդ միջավայրով պայմանավորում բնագրի կրած փոփոխությունները՝ ձեռագրագիտական աշխատանքը դարձնելով քննական բնագրի կազմման բաղկացուցիչ մասը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 4-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 17-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 18-ին, կիրակի.—Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի Լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

Պատարագի ընթացքում կատարվեց «Հայրապետական մաղթանք»:

Հունիսի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր վրդ. Չիֆթչյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 1-ին, շաբաթ.—Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

* * *

Հուլիսի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Հուլիսի 9-ին, կիրակի.—Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

* * *

Հուլիսի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնո քաղաքի հոգևոր հովիվ Տ. Սաուն վրդ. Զմրուխտյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 23-ին, կիրակի.—ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Ս. պատարագի ընթացքում կատարվեց չորս սարկավագների աբեղայական ձեռնադրություն՝ ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

* * *

Հուլիսի 24-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Հուլիսի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նարեկ վրդ. Պերպերյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն;

„ЭЧМИАДЗИН"

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(ИЮНЬ–ИЮЛЬ 1995г.)

РЕДАКЦИОННАЯ

1. Христологическая оценка касательно согьорении (стр. 3—4).

2. Первая энциклика Католикоса всех армян Гарегина I, 18 июня 1995 г., № 1 (стр. 5—12).

3. Проповедь Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе по случаю храмого праздника Кафедрального собора св. Эчмиадзина, 18 июня 1995 г. (стр. 13—16).

4. Слово и молитва Католикоса всех армян Гарегина I на первом заседании новоизбранного Национального Собрания Республики Армения, 27 июля 1995 г. (стр. 17—19).

5. ПОСЕЩЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В РОССИЙСКУЮ ФЕДЕРАЦИЮ, 12—16 июня 1995 г. (стр. 21—35).

6. ПОСЕЩЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В ГУГАРСКУЮ ЕПАРХИЮ, 28—31 июля 1995 г. (стр. 37—60).

7. ВЕРХОВНЫЙ АРХИМАНДРИТ МИКАЭЛ АЧАПАГЯН—Переоткрытие церкви св. Ионна в селе Меликгюх, 25 июня 1995 г. (стр. 61—62).

8. ДИАКОН ВАРУЖАН ТЕРТЕРЯН—Посещение Католикоса всех армян Гарегина I в монастырь Хор Вирап и Араратский район, 25 июля 1995 г. (стр. 63—64).

9. М. Ц. В. А.—Межцерковная встреча в Болдерне, 28 июня—2 июля 1995 г. (стр. 65—66).

10. Паломничество в монастырь Всеспаситель Авуц Тара, 19 июля 1995 г. (стр. 67—68).

11. АРХИЕПИСКОП НЕРСЕС ПОЗАПАЛЯН—Размышления касательно послания Апостола Павла, направленное Эфесянам (стр. 69—71).

12. ВЕРХОВНЫЙ АРХИМАНДРИТ МИКАЭЛ АЧАПАГЯН—Совещания касательно межрелигиозных вопросов (стр. 72—75).

13. ВАРТАН ГРИГОРЯН—Отражение хозяйственной и культурной жизни Эчмиадзина и окружающих местностей в неизданных письмах Католикоса Гукаса Карнеци (исследование)—(стр. 76—93).

14. АРТАШЕС КАЗАРЯН—Епархиальное деление Армянской Церкви в V—VII вв.. (исследование)—(стр. 94—103).

15. Приемы в первопрестольном Эчмиадзине, 2 июня—26 июля 1995 г. (стр. 104—112).

16. ВАРТАН ДЕВРИКЯН—Сочинение Корюна в свете нового исследования (рецензия)—(стр. 113—116).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ

17. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за июнь-июль месяцы (стр. 117—119).

ETCHMIADZIN

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN

(JUNE—JULY 1995)

EDITORIAL

1. The christological value in front of creation (pp. 3—4).

2. The first encyclical of His Holiness 18-th June 1995, No. 1 (pp. 5—12).

3. The sermon of His Holiness in the Holy Cathedral on the occasion of the feast of St. Etchmiadzin, 18-th June 1995 (pp. 13—16).

4. The address and the prayer of Gareguin I Catholicos of All Armenians in the first sessian of the new-elected National Assembly of the Armenian Republic, 27-th July 1995 (pp. 17—19).

5. THE VISIT OF HIS HOLINESS GAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS TO THE FEDERATION OF RUSSIA, 12—16-th June 1995 (pp. 21—35).

6. THE VISIT OF HIS HOLINESS GAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS TO THE DIOCESE OF GOOGARK, 28—31st July 1995 (pp. 37—60).

7. VERY REV. FATHER MIKAYEL ADJABAHIAN—The reopening of St. Hovhannes church of the village Melikgyoogh, 25-th June 1995 (pp. 61—62).

8. DEACON VAROOJAN TERTERIAN—The visit of His Holiness to Khor-Virab monastery and the region of Ararat, 25-th July 1995 (pp. 63—64).

9. R. F. M. A.—The Inter-church meeting of Boldern, June 28—July 2 1995 (pp. 65—66).

10. A. N. B.—Pilgrimage to the monastery of All Saviour Havootz-Tar, 19-th July 1995 (pp. 67—68).

11. ARCHBISHOP NERSES BOZABALIAN—Meditations about the letter of Apostle Paul sent to the Ephesians (pp. 69—71).

12. VERY REV. FATHER MIKAYEL ADJABAHIAN—Meditation about the inter-religieus questions (pp. 72—75).

13. VARDAN GRIGORIAN—Reflections of the economical and cultural life of Etchmiadzin and surrounding places in the inedited letters of Catholicos Ghookas Garnetzi (study)—(pp. 76—93).

14. ARTASHES GHAZARIAN—The diocesan divison of the Armenian Church in the V—VII centuries (study)—(pp. 94—103).

15. Receptions in the Mother See of Holy Etchmiadzin, June 2—July 26 1995 (pp. 104—112).

16. VARDAN DEVRIKIAN—The book of Goryoon with new examination (bibliography)—(pp. 113—116).

HOLY SEE

17. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of June-July 1995 (pp. 117—119).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Քրիստոսաբանական արժեչափ հանդեպ արարչագործության 3
Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը 5
Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին 13
Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքն ու աղոթքը Հայաստանի Հանրապետության նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստին . . . 17

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ 21

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԱՅՑԸ ԳՈՒԳԱՌԱՑ ԹԵՄ 37

ԼԻՔԱՅԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀՅԱՆ—Մելիքգյուղի Ս. Հովհաննես եկեղեցու վերաբացումը 61
ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Վեհափառ Հայրապետի այցը Խոր Վիրապ և Արարատի շրջան 63
Մ. Ծ. Վ. Ա.—Բոլդերևի միջեկեղեցական հանդիպումը 65
Ուխտագնացություն դեպի Հավուց Թառի Ամենափրկիչ վանք 67
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՋԱՊԱԼՅԱՆ—Մտորումներ եփեսացիներին ուղղված Պողոս Առաքյալի նամակի մասին 69
ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ—Խորհրդաժողովներ միջկրոնական հարցերի շուրջ 72
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ—Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի անտիպ նամակներում 76
ԱՐՏԱՇԵՍ ՂԱԶԱՐՅԱՆ—Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Ե—Է դարերում . 94
Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 104
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ—Կորյունի երկը նոր քննությամբ 113

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եկեղեցական թեմ. լուրեր 117
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 120
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 121
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 122

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 15.08.1995 թ.: Ստորագրված է տպագրության 08.11.1995 թ.:
Տպագրական 7,75 մամուլ+8 ներդիր, թուղթ 70×108 1/16, պատվեր 195:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան

ISSN 0134—5249